„ՇԻՐԱԿ"

# ՕՐԱՑՈՅՑ

# 1918

ԹՒԱԿԱՆԻ

ԸՆԴԱՐՁԱԿ ՑԱՆԿԼԻԱԾՈՎ

— ԵՒ —

ՀԱՐՈՒՍՏ ԵՐԱԶԱՀԱՆՈՎ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆ

Տպարան «ՇԻՐԱԿ» Ալէքսանդրապոլ

1917

21287

Ազգիս Վեհափառ Հայրապետի Բար-
ձր հրամանով թոյլատրուած է տպա-
գրել սոյն 1918 թուի օրացոյցը։

Դիւանապետ՝
ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ



ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

# 1918

## ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

| | |
|---|---|
| Գիր տարւոյն . . . . , | Բ. |
| Եօթներեակ . . . . . | Ա. |
| Վերադիր . . . . | (28) ԻԸ |
| Իննևտասներեակ . . . | 17 |
| Տանուտէր . . . | Կոյսն |

Բուն ձայնք—աձ. բձ. գձ. դձ. Աջակողմեան դասին են Բուն բարեկենդանից սկսած:

### ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Հայկայ թուական | 4410—4411 | Օգոստ. 11 |
| Հայոց տոմարական թ. | 1368—69 | » 11 |
| Մահմեդական թ. | 1335—36 | Փետ. 12 |
| Նոր տոմար | 1919 թ. | Դեկտ. 19 |

## ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

| | |
|---|---|
| Օր Յայտնութեան | Շբ. |
| Միջոց ուտիք օր | 37 |
| Բարեկենդ. առաջ. | փետ. 11 |
| Բուն-Բարեկենդան | մարտ. 4 |
| Օր Տեառնընդառաջի | կշ փ. 14 |
| Օր Աւետման | շբ. ապր. 7 |
| Զատիկ | » 22 |
| Երեւման Խաչ | մայ 20 |
| Համբարձումն | » 31 |
| Հոգեգալուստ | յուն. 10 |
| Բարեկենդան ս. Լուս. | յուլ. 1 |
| Վարդավառ | յուլ. 29 |
| Միջոց շաբաթք պահօք | 2 |
| Աստուածածին | օգ. 12 |
| Միջոց շաբաթք պահօք | 5 |
| Խաչվերաց | սեպ. 16 |
| Բարեկենդան Վարագայ Խաչի | » 23 |
| Միջոց շաբաթք | 7 |
| Գիւտ Խաչ | հոկտ. 28 |
| Բարեկ. Յիսնակի | Նոյ. 18 |
| Բարեկենդ. ս Յակովբ. պհց, | Դեկտ. 9 |
| Միջոց ուտիք օրեր | 16 |
| Օր բարեկ. ծննդ. պահ. | Դեկտ 29 |

## ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՐԳԵԼՈՒՄ Է ԿԱՏԱՐԵԼ

Ա. Բոլոր շաբաթ երեկոները՝ լոյս կիրակի։

Բ. Բոլոր երեքշաբթի երեկոները՝ լոյս չորեքշաբթի, հինգշաբթի երեկոները՝ լոյս ուրբաթ։

Գ. Բոլոր հինգ տաղաւարների մեռելոցի օրերը։

Դ. Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառնընդառաջի, Աւետման և Համբարձման օրերը։

Ե. Բարեկենդանից սկսած, ամբողջ մեծ պասի ընթացքում, մինչև Նոր կիրակին։

Զ. Առաջաւորի, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերացի, Յիսնակի, և Ծննդեան Շաբաթապասերի հինգ օրերը։

Մնացած բոլոր օրերում կարելի է պսակ կատարել։

# ՆՈՐ—ՏԱՐԻ

Քեզ հազա՜ր բարի, Նորածի՜ն Տարի
Թէ դու բերում ես տարաբախտ մարդկանց
Ցաւեր ամոքող, արտասուք սրբող
Նոր բախտի արև, կեանքի լուսաբաց…

Թէ քեզ հետ այսօր՝ պայծառ, լուսաւոր
Բարւոյ յաղթանակն այնքա՜ն փափագած,
Պէտք է տիրանայ աշխարհիս վերայ,
Եւ յաղթւի չարը չքանայ նախանձ.

Թէ մեզ հիւր գալով, հաշտեցնող սիրով
Դու պէտք է լցնես և՛ կեանք և՛ աշխարհ,—
Քեզ հազա՜ր բարի, Նորածի՜ն Տարի,
Ինկելի՜ հիւր ես աշխարհիս համար։

Ա. Ծատուրեան

## ՅՈՒՆՈՒԱՐ
### 31 ՕՐ

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| 1 | ✻*) ✢ Բշ. բձ. դ. օր Ծննդ. պահ. Տարեմուտ եւ Կաղանդ։ Ը Անուանակոչութիւն Տեառն և Բարսղի հայրապետին։ | 14 | 1 |
| 2 | Գշ. բկ. դ. օր Ծննդ. պահ։ | 15 | 2 |
| 3 | Դշ. գձ. ե. օր Ծննդ. պահ։ | 16 | 3 |
| 4 | Եշ. գկ. զ. օր Ծննդ. պահ։ | 17 | 4 |
| 5 | Ուր. դձ. ՃՐԱԳԱԼՈՅՑ Ծննդեան Նախատօնակ։ Նաւակատիք։ Մինչև ամսոյս 13-ը ամէն երեկոյ Նախատօնակ։ Յ. և Ռ. Ճրագալոյց Յայտնութեան։ | 18 | 5 |

*Այն տօն օրերը, երբ վարչական տեղերը եւ ռուսաց դպրոցների ուսանողները ազատ են պարապմունքներից նշուած են այս նշանով ✻:

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն | Հ |
|---|---|---|---|
| 6 | ✝ Շբ. դկ. Տօն Ծննդեան և Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ջրօրհնէք։ (Միջոց ուտիքը 37 օր է)։ | 19 | 6 |
| | ✝ Ռ. Մկրտութիւն Տեառն։ | | |
| 7 | ✝ Կիր. աձ. Բ օր Ծննդ. Յիշատակ մեռելոց։ | 20 | 7 |
| 8 | Բշ. ակ. Գ օր Ծննդ. | 21 | 8 |
| | ☽ Առ. քառ. լուսնի։ | | |
| | Ձիւնաբեր հողմեր | | |
| 9 | Գշ. բձ. Դ. օր Ծննդ. | 22 | 9 |
| 10 | Դշ. բկ. Ե. օր Ծննդ. | 23 | 10 |
| 11 | Եշ. գձ. Զ. օր Ծննդ. | 24 | 11 |
| 12 | Ուր. գկ. Է. օր Ծննդ. Նախատօնակ։ | 25 | 12 |
| 13 | ✝ Շբ դձ. Անուանակոչութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ | 26 | 13 |
| 14 | ✝ Կիր. դկ. Ա. զկնի Ծննդ. Նախատօնակ։ | 27 | 14 |
| | ✝ Ռ. ս. Նինայի լուսաւորչին Վրաստանի։ Ռուսաց դպրոցները ազատ են պարապմունքից։ Հարսանիք։ | | |
| 15 | Բշ. աձ. Տօն Ծննդեան Յովհաննու Կարապետին։ | 28 | 15 |
| | ⊕ Լր. լուսնի։ | | |
| | Ձիւնալից օդեր | | |
| 16 | Գշ. ակ. Ս. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբրիսողոմայ սարկաւագին։ | 29 | 16 |
| 17 | Դշ. բձ. պահք։ | 30 | 17 |
| | Վերջ յիսնօրեայ ա. մասին ձմրան | | |
| 18 | Եշ. բկ. ս. Ճգնաւորացն Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի։ | 31 | 18 |
| | Սկիզբն յիսնօրեայ բ. մասին ձմրան | | |
| 19 | Ուր. գձ. պահք | 1 | 19 |
| | Նոր տոմար Փետրուար | | |
| 20 | Շբ. գկ. Ս. Թէոդոսի Թագաւորին և մանկանցն Եփեսոսի։ | 2 | 20 |
| 21 | ✝ Կիր. դձ. Բ. զկնի Ծննդ, Հարսանիք։ | 3 | 21 |
| 22 | Բշ. դկ. ս. Կիրակոսի և մօրն Յուղիտայի և ս. վկայիցն Գորդիոսի, Պողիկտոսի և Գրիգորիսի։ | 4 | 22 |

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | ☾ Վերջ. քառ. լուսնի։ **Խառնակ եղանակ** | | |
| 23 | Գշ. աձ. ս. Վահանայ Գողթնեցւոյն, Եւգինեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կղօդեայ և երկուց եղբարցն Սերգեայ և Ապիտոնի և երկուց ներքինեացն։ | 5 | 23 |
| 24 | Դշ. ակ. պահք։ | 6 | 24 |
| 25 | Եշ. բձ. ս. Եւգինէսի, Մակարիոսի Վալերիոսի Կանդիտոսի և Ակիւղասայ։ | 7 | 25 |
| 26 | Ուր. բկ. պահք։ | 8 | 26 |
| 27 | Շբ. գձ. ս. Հայրապետացն Աթանասի, Կիւրղի և Գրիգորի աստուածաբանին։ | 9 | 27 |
| 28 | ✠ Կիր. գկ. Դ. զկնի Ծննդ., Հարսանիք։ | 10 | 28 |
| 29 | Բշ. դձ. ս. Կիպրիանոսի եպիսկոպոսին և քառասուն հինգ վկայիցն և ս. կուսանացն Յուստինեայ, Եփեմեայ և Քրիստինեայ։ | 11 | 29 |
| 30 | Գշ. դկ. ս. Աթանագինեայ եպիսկոպոսին և տասն աշակերտաց նորին և հինգ վկայիցն։ | 12 | 30 |

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | ● Ծնունդ լուսնի։ **Ձիւն եւ ցուրտ** | | |
| 31 | Դշ. աձ. պահք։ | 13 | 1 |

**Ամսիս 1-ից մինչեւ այսօր երկարել է 1 ժ. 52 ր.**

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | # ՓԵՏՐՈՒԱՐ<br>28 ՕՐ | | |
| 1 | Եշ. ակ ս. Նախահարցն Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց ս. Նախահարցն: | 14 | 2 |
| 2 | Ուր. բծ պահք: Նախատօնակ:<br>✢ Ս. Տեառնընդառաջ: | 15 | 3 |
| 3 | Շբ. բէ. ս. որդւոց և թոռանց ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի: | 16 | 4 |
| 4 | ✢ Կիր. գծ. Դ. կնի Ծննդ: Հարսանիք, | 17 | 5 |
| 5 | Բշ. գկ. ս, Մակաբայեցւոցն Եղիազարու քահանային և Շամունեայ և եօթն որդւոց նորին: | 18 | 6 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 6 | Գշ. գծ. ս. երկոտասան մարգարէիցն՝ Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովելայ. Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յովնանու, Սոփոնիայ Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ: | 19 | 7 |
| 7 | Դշ. գկ. պահք: | 20 | 8 |
| | **Օր իջանելոյ ջերմութեան առնուլ յօդս** | | |
| | ◑ Առ. քռ. լս. | | |
| | **Փոփոխական եղանակ** | | |
| 8 | Եշ. աձ. ս Սոփեայ և երից դստերացն Պիստոսի, Ելպիսի և Ագապի: | 21 | 9 |
| 9 | Ուր. ակ. պահք: Նախատօնակ: | 22 | 10 |
| 10 | ✢ Շբ. րծ. ս. Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին: | 23 | 11 |
| 11 | ✢ Կիր. բկ. Ե. կնի Ծննդ. Բարեկենդան Առաջաւորի պահոց: | 24 | 12 |
| 12 | Բշ. գծ. ա. օր Առաջ, պահ: | 25 | 13 |
| 13 | Գշ. գկ, բ. օր Առաջ. պահ: Նախատօնակ: | 26 | 14 |
| | ☉ Լր, լուսնի: | | |
| | **Ձիւնաբեր հողմեր** | | |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 14 | ✠ Դշ. գձ. գ. օր Առաջ. պահ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։ | 27 | 15 |
| | Որ իջանելոյ ջերմութ. արեւու ի ջուրս | | |
| 15 | Եշ. դկ. դ. օր Առաջ. պահ. | 28 | 16 |
| 16 | Ուր. աձ. ե. օր Առաջ. պահ. Երիցատակ Յովհաննու մարգարէին։ | 1 | 17 |
| | Նոր տոմար Մարտ | | |
| 17 | Շբ. ակ. ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինւորացն։ | 2 | 18 |
| 18 | ✠ Կիր. բձ. Զ. զկնի Ծննդ. Հարսանիք։ | 3 | 19 |
| 19 | Բշ. բկ. ս. Ատովմեանց զօրավարացն։ | 4 | 20 |
| | Ճորտերի ազատութիւնը Ռուսաստանում. Ռուսաց ղպրոցները ազատ են պարտամունքից։ | | |
| 20 | Գշ. գձ. ս. Սուքիասեանց վկայիցն։ | 5 | 21 |
| 21 | Դշ. գկ. պահք։ | 6 | 22 |
| | Օր իջանելոյ ջերմ. արեւու ի հող։ | | |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 22 | Եշ. դձ. ս. Ոսկեանց քահանայից։ | 7 | 23 |
| | ☾ Վերջ քա. լուս։ | | |
| | Խառնակ յեղանակ | | |
| 23 | Ուր. դկ. պահք։ | 8 | 24 |
| 24 | Շբ. աձ. ս. Սահակայ Պարթեւի հայրապետին մերոյ։ | 9 | 25 |
| 25 | ✠ Կիր. ակ. Է. զկնի Ծննդ. | 10 | 26 |
| | Սկիզբն ցրտոյն պառաւանց, որ տեւէ եօթն օր եւ ութ գիշեր | | |
| 26 | Բշ. բձ. ս. Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն և ս. վկայիցն Արգիմանեի, Որմզդանայ և Սայենի։ Նախատօնակ։ | 11 | 27 |
| 27 | Գշ. բկ. ս. Ղեւոնդեանց քահանայիցն։ | 12 | 28 |
| 28 | Դշ. գձ. պահ. Նախատօնակ։ | 13 | 29 |
| | ◉ Նո. լուսնի։ | | |
| | Անձրեւաբեր եղանակ | | |
| | Փետրուարի 1-ից մինչեւ այսօր օրը աւելացել է 2ժ. 7 ր. | | |

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | # ՄԱՐՏ<br>31 ՕՐ | | |
| 1 | ✣ Եշ. գկ. Ս. Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծ պատերազմին: Յիշատակ մեռելոց: Տօն ազգային: | 14 | 1 |
| 2 | Ուր. գձ. պահք. | 15 | 2 |
| | ✣ Բ. Բարեկենդան Եօթնեակի | | |
| 3 | Շբ. դկ. Կ. Պօլսոյ ս. ժողովոյն հարիւր յիսուն հայրապետացն | 16 | 3 |
| | ✣ Բ. Բարեկենդան Եօթնեակի. Երեկոյեան ծածկւում է սեղանը վարագոյրով: | | |
| | Վերջ ցրտոյն պառաւանց | | |
| 4 | ✣ Կիր. դկ. Բուն-բարեկենդան | 17 | 4 |
| 5 | Բշ. աձ. ա. օր մեծի պահ. | 18 | 5 |
| 6 | Գշ. ակ. բ. օր մեծի պահ. | 19 | 6 |
| 7 | Դշ. բձ. գ. օր մեծի պահ. | 20 | 7 |
| | Վերջ յիսուն աւուրց Բ. մասին ձմրան: | | |

| Օ | ՄԱՐՏ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 8 | Եշ. բկ. դ. օր մեծի պահ. | 21 | 8 |
| | ☽ Առ. քռ. լուսնի.<br>Տրտմութեանց եղանակ | | |
| 9 | Ուր. գձ. ե. օր մեծի պահ. | 22 | 9 |
| | Գարնանամուտ եւ հաւասարակած. ցերեկ եւ գիշեր հաւասար են: Ցերեկն սկսում է երկարիլ եւ գիշերը կարճանալ: | | |
| 10 | Շբ. դկ. զ. օր մեծի պահ. ս. Թէոդորոսի զօրավարին. | 23 | 10 |
| 11 | ✣ Կիր. գձ. Բ. Քառասնորդական պահոց: | 24 | 11 |
| 12 | Բշ դկ. ը. օր մեծի պահ. | 25 | 12 |
| 13 | Գշ. աձ. թ. օր մեծի պահ. | 26 | 13 |
| 14 | Դշ. ակ. ժ. օր մեծի պահ. | 27 | 14 |
| 15 | Եշ. բձ. ժա. օր մեծի պահ. | 28 | 15 |
| | ⊕ Լրումն լուսնի:<br>Փոփոխական | | |
| 16 | Ուր. բկ. ժբ. օր մեծի պահ. | 29 | 16 |
| 17 | Շբ. գձ. ժգ. օր մեծի պահ. ս. Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսին և մօրն նորա Աննայի և ս. հայրապետ- | 30 | 17 |

| Օ | ՄԱՐՏ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | տացն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և Յովհաննու օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն։ | | |
| 18 | ✢ Կիր. դկ. Գ. Քառասնորդական պահոց։ Անառակին. | 31 | 18 |
| 19 | Բշ. դձ. ժե. օր մեծի պահ. | 1 | 19 |
| | Նոր տոմար Ապրիլ | | |
| 20 | Գշ. դկ. ժզ. օր մեծի պահ. | 2 | 20 |
| 21 | Դշ. աձ. ժէ. օր մեծի պահ. | 3 | 21 |
| 22 | Եշ. ակ. ժ. օր մեծի պահ. | 4 | 22 |
| | ☽ Վերջ. քռ. լուսնի. | | |
| | Անձրևաբեր հողմեր | | |
| 23 | Ուր. բձ. ժթ. օր մեծի պահ. Նախատօնակ։ Բացւում է պատարագի սեղանի վարագոյրը։ | 5 | 23 |
| 24 | ✣ Շբ. բկ. ի. օր մեծի պահ. Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ մուտըն ի վիրապն. Պատարագից վերջ ծածկել սեղանը. | 6 | 2 |
| 25 | ✣ Կիր. գձ. Դ. Քառասնորդական պահոց. Տնտեսին. | 7 | 25 |

| Օ | ՄԱՐՏ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | Ց. և Ո. Աւետումն ս. Աստուածածնի։ | | |
| 26 | Բշ. գկ. իբ. օր մեծի պահ. | 8 | 26 |
| 27 | Գշ. դձ. իգ. օր մեծի պահ. | 9 | 27 |
| 28 | Դշ. դկ. իդ. օր մեծի պահ. | 10 | 28 |
| | Մ Ի Ջ Ի Ն Ք. | | |
| 29 | Եշ. աձ. իե. օր մեծի պահ. | 11 | 29 |
| 30 | Ուր. ակ. իզ. օր մեծի պահ. | 2 | 1 |
| | ◉ Նռ. լուսնի։ | | |
| | Անձրեւ | | |
| 31 | Շբ. բձ. իէ. օր մեծի պահ. Ս. Մանկանցն քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան։ | 13 | 2 |

Մարտի 1-ից մինչև այսօր օրը աւելացել է 2 ժ. 10 ր.

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | **ԱՊՐԻԼ** | | |
| | 30 Օր | | |
| 1 | ✠ Կիր. բկ. Ե. Քառասնորդական պահոց· Դատաւորին։ | 14 | 3 |
| 2 | Բշ. գձ. իթ. օր մեծի պահ. | 15 | 4 |
| 3 | Գշ. գկ. լ. օր մեծի պահ. | 16 | 5 |
| 4 | Դշ. գձ. լա. օր մեծի պահ. | 17 | 6 |
| 5 | Եշ. դկ. լբ. օր մեծի պահ. | 18 | 7 |
| | ☽ Առ. քռ. լուսնի· | | |
| | Հողմ եւ անձրեւ | | |
| 6 | Ուր. աձ. լգ օր մեծի պահ. Նախատօնակ։ | 19 | 8 |
| | Բոլոր սեղաններն բանալ. | | |
| 7 | ✠ Շբ. ակ. Աւետումն Ս. Աստուածածնի։ Զկնի պատարագին ծածկել սեղանները։ | 20 | : |
| 8 | ✠ Կիր. բձ Զ. Քառասնորդական պահ։ Գալստեան։ | 21 | 10 |
| 9 | Բշ. բկ. լդ. օր մեծի պահ։ | 22 | 11 |
| 10 | Գշ. գձ. լե. օր մեծի պահ. | 23 | 12 |
| 11 | Դշ. գկ. լզ. օր մեծի պահ· | 24 | 13 |

| Օ | ԱՊՐԻԼ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 12 | Եշ. դձ լթ. օր մեծի պահ. | 25 | 14 |
| 13 | Ուր. դկ. խ. օր մեծի պահ. | 26 | 15 |
| | ☉ Լր. լուսնի· | | |
| | Ամպամած եղանակ | | |
| 14 | Շբ. աձ. Յիշատակ Յարութեան Ղազարու. Բացւում է սեղանի վարագոյրը։ | 27 | 16 |
| 15 | ✠ Կիր. ակ. ԾԱՂԿԱԶԱՐԴ. Երեկոյեան Դռնաբացէք։ | 28 | 17 |
| 16 | Աւ. Բշ. բձ. պահք· | 29 | 18 |
| 17 | Աւ. Գշ. բկ. պահք։ Յիշատակ տասն կուսանաց։ | 30 | 19 |
| 18 | Աւ. Դշ. գձ. պահք· | 1 | 20 |
| | Նոր Տոմար Մայիս | | |
| 19 | ✠ Աւ. Եշ. գկ. պահք։ Յիշատակ Ոտնլուային։ | 2 | 21 |
| | ☾ Վերջ. քռ. ս. | | |
| | Ցուրտ եւ պայծառ եղանակ | | |
| 20 | ✠ Աւ. Ուր. դձ. պահք։ Յիշատակ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ և ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Նախատօնակ։ | 3 | 22 |

| Օ | ԱՊՐԻԼ | Ն | Հ |
|---|---|---|---|
| 21 | Աւ. Շբ. դկ. Ճրագալոյց Զատկի։ Նախատօնակ։ Նաւակատիք։ | 4 | 23 |
| 22 | ✠ Կիր. աձ. ԶԱՏԻԿ։ Ուտիք է անմիջոց մինչև Համբարձումն. | 5 | 24 |
| 23 | ✠ Բշ. ակ. բ. օր Զատկի։ Յիշատակ մեռելոց։ ✠ Ո. ս. Գէորգ։ | 6 | 25 |
| 24 | ✠ Գշ. բձ. գ. օր Զատկի։ | 7 | 26 |
| 25 | Դշ. բկ. դ. օր Զատկի։ | 8 | 27 |
| 26 | Եշ. գձ ե. օր Զատկի։ | 9 | 28 |
| 27 | Ուր. գկ. զ. օր Զատկի։ | 10 | 29 |
| | ◉ Ծն. Լուսնի։ | | |
| | Ախորժելի օդ | | |
| 28 | Շբ. դձ. է. օր Զատկի։ Յիշատակ գլխատման ս. Յովհաննու Մկրտչի։ | 11 | 1 |
| 29 | ✠ Կիր. դկ. Նոր-Կիւրակէ (Կրկնազատիկ)։ | 12 | 2 |
| 30 | Բշ. աձ. թ. օր յին։ | 13 | 3 |

Ապրիլի 1-էն մինչև այսօր օրը աւելացել է 2 ժ. 4 ր.

| Օ | | Ն | Հ |
|---|---|---|---|
| | **ՄԱՅԻՍ** | | |
| | 31 ՕՐ | | |
| 1 | Գշ. ակ. ժ. օր յին. | 14 | 4 |
| 2 | Դշ. բձ. ժա. օր յին. | 15 | 5 |
| 3 | Եշ. բկ. ժբ. օր յին. | 16 | 6 |
| 4 | Ուր. գձ. ժգ. օր յին. | 17 | 7 |
| | ☾ Առ. քռ. լուսնի։ | | |
| | Փոփոխական եղանակ | | |
| 5 | Շբ. գկ. ժդ. օր յին. | 18 | 8 |
| 6 | ✠ Կիր դձ. Գ. Աշխարհամատրան նիւ. (Կանաչ կիր.) | 19 | 9 |
| 7 | Բշ. դկ. ժզ. օր յին. | 20 | 10 |
| 8 | Գշ. աձ. ժէ օր յին. | 21 | 11 |
| 9 | Դշ. ակ. ժը. օր յին. | 22 | 12 |
| | ✠ Ո. Դարձ Նշխարաց Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին։ | | |
| 10 | Եշ. բձ. ժթ. օր յին | 23 | 13 |
| 11 | Ուր. բկ. ի. օր յին. | 24 | 14 |
| | ◎ Լրումն լուսնի։ | | |
| | Պարզ եւ մերթ անձրեւ | | |
| 12 | Շբ. գձ. իա. օր յին. | 25 | 15 |

| Օ | ՄԱՅԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 13 | ✝ Կիր. գկ. Դ. (Կարմիր կիր.) | 26 | 16 |
| 14 | Բշ. դձ. իգ. օր յին. | 27 | 17 |
| 15 | Գշ. դկ. իդ. օր յին. | 28 | 18 |
| 16 | Դշ. աձ. իե. օր յին. | 29 | 19 |
| 17 | Եշ. ակ. իզ. օր յին. | 30 | 20 |
| 18 | Ուր. բձ. իէ. օր յին. | 31 | 21 |
| | Ǝ Վերջ. քա. լուսնի։ Պայծառ օրեր | | |
| 19 | Շբ. բկ. իը. օր յին. | 1 | 22 |
| | Նոր տոմար Յունիս | | |
| 20 | ✝ Կիր. գձ. Ե. Տօն Երևման Ս. Խաչի: | 2 | 23 |
| 21 | Բշ. գկ. լ. օր յին. | 3 | 24 |
| 22 | Գշ. դձ. լա. օր յին. | 4 | 25 |
| 23 | Դշ. դկ. լբ. օր յին. | 5 | 26 |
| 24 | Եշ. աձ. լգ. օր յին. | 6 | 27 |
| 25 | Ուր. ակ. լդ. օր յին. | 7 | 28 |
| 26 | Շբ. բձ. լե. օր յին. | 8 | 29 |
| | ● Ծնունդ լուսնի։ Պարզ եւ ջերմ | | |
| 27 | ✝ Կիր. բկ. Զ. կիր. | 9 | 1 |
| 28 | Բշ. գձ. լէ. օր յին. | 10 | 2 |

| Օ | ՄԱՅԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 29 | Գշ. գկ. լը. օր յին. | 11 | 3 |
| 30 | Դշ. դձ. լթ. օր յին. | 12 | 4 |
| 31 | ✝ Եշ. դկ. խ. օր յին. Համբարձում Քրիստոսի։ | 13 | 5 |

Մայիսի 1-ց մինչեւ այսօր օրը երկարել է 1 ժ. 28 ր.

| Օ | | Ն | Հ |
|---|---|---|---|
| | **ՅՈՒՆԻՍ**<br>30 ՕՐ | | |
| 1 | Ուր. աձ. պահք. խա. օր յին. | 14 | 6 |
| 2 | Շբ. ակ. խբ. օր յին. | 15 | 7 |
| 3 | ✠ Կիր. բձ. Բ. Ծաղկազարդ: | 16 | 8 |
| | ◑ Առ. քա. լուսնի:<br>Անձրեւաբեր ջերմութիւն | | |
| 4 | Բշ. բկ. խգ. օր յին. | 17 | 9 |
| 5 | Գշ. գձ. խե. օր յին. | 18 | 10 |
| 6 | Դշ. գկ. խզ. օր յին. | 19 | 11 |
| 7 | Եշ. դձ. խէ. օր յին. | 20 | 12 |
| 8 | Ուր. դկ. պահք: խթ. օր յին. | 21 | 13 |
| 9 | Շբ. աձ. խբ. օր յին, Ամառնամուտ եւ արեւադարձ խեց-գետնի: Ցերեկն սկսում է կարճա-նալ եւ գիշերը երկարել: | 22 | 14 |
| 10 | ✠ Կիր. ակ. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ): Բարեկենդան Եղի-ական պահոց: | 23 | 15 |
| | ● Լրումն լուսնի.<br>Ջերմ եղանակ | | |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Ն | Հ |
|---|---|---|---|
| 11 | Բշ. բձ. բ. օր Հոգ. պահք:<br>✠ Ա. բ. օր Հոգեգալստեան: | 24 | 16 |
| 12 | Գշ. բկ. գ. օր Հոգ. պահք: | 25 | 17 |
| 13 | Դշ. գձ. դ. օր Հոգ. պահք: | 26 | 18 |
| 14 | Եշ. գկ. ե. օր Հոգ. պահք: | 27 | 19 |
| 15 | Ուր. դձ. զ. օր Հոգ. պահք: | 28 | 20 |
| 16 | Շբ. դկ. է. օր Հոգ. | 29 | 21 |
| 17 | ✠ Կիր. աձ. Ա. կիր. Յարու-թեան: Յիշատակ Եղիայի մարգարէ-ին: Նախատօնակ: | 30 | 22 |
| | ◐ Վերջ. քա. լս.<br>Փոփոխական | | |
| 18 | Բշ. ակ. ս. Կուսանացն Հռիփսիմ-եանց: Նախատօնակ: | 1 | 23 |
| | Նոր տոմար Յուլիս: | | |
| 19 | Գշ. ակ. ս. կուսանացն Գայիան-եանց: | 2 | 24 |
| 20 | Դշ. բկ պահք: Նախատօնակ: | 3 | 25 |
| 21 | Եշ. դձ. ս. Յովհաննու Կարապե-տին և Աթանագինեայ եպիսկոպո-սին: | 4 | 26 |
| 22 | Ուր. դկ. պահք: Նախատօնակ: | 5 | 27 |
| 23 | ✠ Շբ. դձ. ս. Գրիգորի Լուսա- | 6 | 28 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | ւորչին մերոյ ելն ի վիրապէն։ | | |
| 24 | ✠ Կիր. գկ. Բ. զկնի Հոգ. Տօն Կաթուղիկէ ս. Էջմիածնի։ (Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում կատարւում է հանդէս)։ | 7 | 29 |
| 25 | Բշ. աձ. ս. Մանկանցն Բեթղեհեմի, Ակակիոսի վկային, Մովկիմայ քահանային և հոտրատեսի զինուորին։ | 8 | 30 |
| | ◉ Ծն. լուսնի։ | | |
| | **Ջերմ օրեր անձրեւային** | | |
| 26 | Գշ. աէ. ս. կուսանացն Նունեայ և Մանեայ։ | 9 | 1 |
| 27 | Դշ. բձ. պահք. | 10 | 2 |
| 28 | Եշ. բէ. ս. Իշխանացն Յաճակայ և Յովսեփայ և վկայիցն Սարգսի և Բագոսի։ | 11 | 3 |
| 29 | Ուր. գձ. պահք։ ✠ Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ | 12 | 4 |
| 30 | Շբ. գէ. ս. Ներսէսի մեծի հայրապետին մերոյ և Խաղայ եպիսկոպոսին։ | 13 | 5 |
| | Յունիսի 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 0 ժ. 22 ր. | | |

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | **ՅՈՒԼԻՍ** | | |
| | **31 ՕՐ** | | |
| 1 | ✠ Կիր. դձ. Գ. զկնի Հոգ. Բարեկենդան ս. Լուսաւորչի պահոց։ | 14 | 6 |
| 2 | Բշ. դկ. պահք։ ս. Եփիփանու Կիպրացւոյն, Բաբելայ հայրապետին և երից աշակերտացն նորին։ | 15 | 7 |
| | ☽ Առ. քռ. լուս. | | |
| | Ջերմագին օրեր | | |
| 3 | Գշ. աձ. պահք. ս. Կոստանդիանոսի թագաւորին և մօրն նորա Հեղինեայ։ | 16 | 8 |
| 4 | Դշ. ակ. պահք. | 17 | 9 |
| 5 | Եշ. բձ. պահք։ ս. Թէոդիտոսի դաղատացւոյն, Թալէլեայ բժշկին և եօթն կուսանացն որք յԱնկիւրեայ կատարեցան։ | 18 | 10 |
| 6 | Ուր. բկ. պահք։ Նախատօնակ. | 19 | 11 |
| 7 | Շբ. գձ Գիւտ Նշխարաց ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ. | 20 | 12 |
| 8 | ✠ Կիր. գկ. Դ. զկնի Հոգ. | 21 | 13 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 9 | Բշ. դձ. ս. վկայիցն Անտոնիոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փաւինոսի։ | 22 | 14 |
| 10 | Գշ. դկ. ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն Սեդրաքայ, Միսաքայ, և Աբեդնագովի։ | 23 | 15 |
| | ☉ Լրումն լուսնի: **Տօթագին եղանակ** | | |
| 11 | Դշ. աձ. պահք. Նախատօնակ։ | 24 | 16 |
| 12 | Եշ. ակ. ս. Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ։ Եկեղեցական հանդէս է կատարւում Օշականում: | 25 | 17 |
| 13 | Ուր. բձ. պահք։ | 26 | 18 |
| 14 | Շբ. բկ. ս. Տրդատայ թագաւորին մերոյ, Աշխէն տիկնոջն և Խոսրովիդխտոյն։ Նախատօնակ։ | 27 | 19 |
| 15 | ✠ Կիր. գձ Ե. զկնի Հոգ. Գիւտ Տփոյ ս. Աստուածածնի։ | 28 | 20 |
| 16 | Բշ. գկ. ս. Կալիստրատոսի և 49 վկայիցն և Ղունկիանոսի քահանային։ | 29 | 21 |
| 17 | Գշ. դձ. ս. Զաքարեայ մարգարէին. | 30 | 22 |
| 18 | Դշ. դկ. պահք. | 31 | 23 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | ☽ Վերջ. քռ. լս. **Խառնակ եղանակ** | | |
| 19 | Եշ. աձ. ս. Եղիսէի մարգարէին։ | 1 | 24 |
| | Նոր ամսոյ Օգոստոս | | |
| 20 | Ուր. ակ. պահք։ | 2 | 25 |
| 21 | Շբ. բձ. ս. երկոտասանից առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի երեքտասան առաքելոյն. | 3 | 26 |
| 22 | ✠ Կիր. բկ. Զ. զկնի Հոգ. Բարեկենդան Վարդավառի պահոց։ | 4 | 27 |
| 23 | Բշ գձ ա. օր Վարդ պահ. | 5 | 28 |
| 24 | Գշ. դկ. բ. օր Վարդ. պահ. | 6 | 29 |
| | ◉ Ծնունդ լուսնի: **Ախորժելի օդ** | | |
| 25 | Դշ դձ. գ. օր Վարդ. պահ. | 7 | 1 |
| 26 | Եշ. դկ. դ օր Վարդ պահ. | 8 | 2 |
| 27 | Ուր. աձ. ե. օր Վարդ պահ. | 9 | 3 |
| 28 | Շբ. ակ. յիշատակ Հնոյ և տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ։ Նաւակատիք։ | 10 | 4 |
| 29 | ✠ Կիր. բձ ՎԱՐԴԱՎԱՌ։ (Միջոց ուտիքը մի շաբաթ է)։ Մաղթանք Հայրապետական։ Եօթնեկօրդ Տարեդարձ Ս. Օծման | 11 | 5 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | Տ. Տ. Գէորգայ Ե. Կաթողիկոսի Ամենայն Հայոց։ | | |
| 30 | ✤ Բշ. բկ. բ. օր Վարդ.։ Յիշատակ մեռելոց։ | 12 | 6 |
| 31 | Դշ. գծ. գ. օր Վարդ։ | 13 | 7 |
| | ☾ Առ. քռ. լուսնի։ **Փոփոխական եղանակ** | | |
| | Ամսի 1-ից մինչև այսօր օրը կարճացել է 1 ժ. 47 ր. | | |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ 31 ՕՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 1 | Դշ. գկ. պահք. | 14 | 8 |
| 2 | Եշ. գծ. ս. Եսայեայ մարգարէին։ | 15 | 9 |
| 3 | Ուր. դկ. պահք։ | 16 | 10 |
| 4 | Շբ. աձ. Եփեսոսի ս. ժողովոյն և 200 հայրապետացն։ | 17 | 11 |
| 5 | ✤ Կիր. ակ. Բ. զկնի Վարդ. Բարեկենդան ս. Աստուածածնի պահոց։ | 18 | 12 |
| 6 | Բշ. բծ. ա. օր Աստուած. պահ. | 19 | 13 |
| | ✤ Բ. Վարդավառ։ | | |
| 7 | Գշ. բկ բ. օր Աստուած. պահ, | 20 | 14 |
| | ◎ Լրումն լուսնի։ **Ամպամած եղանակ** | | |
| 8 | Դշ. գծ. գ. օր Աստուած. պահ. | 21 | 15 |
| 9 | Եշ. գկ. դ. օր Աստուած. պահ. | 22 | 16 |
| 10 | Ուր. դծ. ե. օր Աստուած. պահ. Նախատօնակ։ | 23 | 17 |
| 11 | Շբ. դկ. Տօն Շողակաթի ս. Էջմիածնի։ ըստ տեսլեան ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Նախատօնակ։ Նաւակատիք։ | 24 | 18 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Ն | Հ |
|---|---|---|---|
| | Ամանորայ և Տարեմուտ Հայկական մեծ թուականին 4410 և մեր տոմարի նորոգութեան 1368. Նաւասարդ: | | |
| 12 | ✠ Կիր. աձ. Վերափոխումն ս. Աստուածածնի։ (Ութ օր Նախատօնակ)։ Կատարւում է խաղողի օրհնութիւն։ Մինչդ ուտելը չորս շաբաթ է։ | 25 | 19 |
| 13 | ✠ Բշ. ակ. բ. օր Վերափոխման։ Յիշատակ մեռելոց։ | 26 | 20 |
| 14 | Գշ. բձ. գ. օր Վերափ. | 27 | 21 |
| 15 | Դշ. բկ։ դ. օր Վերափ. | 28 | 22 |
| | ✠ Ռ. Վերափոխումն ս. Աստուածածնի։ | | |
| | ◑ Վերջ. քառ. լուսնի. | | |
| | Ջերմացին օրեր | | |
| 16 | Եշ. գձ. ե. օր Վերափ. | 29 | 23 |
| 17 | Ուր. գկ. զ. օր Վերափ. | 30 | 24 |
| 18 | Շբ. դձ. է. օր Վերափ. | 31 | 25 |
| 19 | ✠ Կիր. դկ. ը օր Վերափ. | 1 | 26 |
| | Նոր տոմար Սեպտեմբեր | | |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Ն | Հ |
|---|---|---|---|
| 20 | Բշ. աձ. թ. օր Վերափ. | 2 | 27 |
| 21 | Գշ. ակ։ ս. Յովակիմայ և Աննայի ծնողացն ս. Աստուածածնի և Կանանցն իւղաբերեց։ | 3 | 28 |
| 22 | Դշ. բձ. պահք. | 4 | 29 |
| 23 | Եշ. բկ. ս. Երեմեայ մարգարէին։ | 5 | 30 |
| | ● Ծնունդ լուսնի։ | | |
| | ԱՆՁՐԵՒԱԲԵՐ ՋԵՐՄՈՒԹԻՒՆ | | |
| 24 | Ուր. գձ. պահք։ | 6 | 1 |
| 25 | Շբ. գկ. ս. Առաքելոյն Թովմայի Յակովբայ և Շմաւոնի։ Նախատօնակ։ | 7 | 2 |
| | Ռ. Նուաճումն Արևելեան Կովկասի | | |
| 26 | ✠ Կիր. դձ. Գ. կկնի Վերափ. Գիւտ Գօտւոյ ս. Աստուածածնի։ | 8 | 3 |
| 27 | Բշ. դկ. ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և ս. վկայիցն Գոհարինեայ, Թամիդէսի, Տուքիկոսի և Ռոդիկոսի։ | 9 | 4 |
| 28 | Գշ. եձ. ս. մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի. Զաքարեայ հօրն Յովհաննու Մկրտչին։ | 10 | 5 |
| 29 | Դշ. եկ. պահք։ | 11 | 6 |

| | ՕԳՈՍՏՈՍ | Ն | Հ |
|---|---|---|---|
| | ✠ Ռ. Գլխատումն Յովհաննու Կարապետին | | |
| 30 | Եշ. բծ. ս. Յովհաննու Կարապետին և Յովբայ արդարւոյն։ | 12 | 7 |
| | ✠ Ռ. Աղեքսանդր Նեվսկի։ | | |
| 31 | Ուր. բկ. պահք։ | 13 | 8 |
| | Ⓓ Առ. քռ. լուսնի։ | | |
| | Փոփոխական | | |

Ամսի 1-ից մինչև այսօր օրը կարճացել է 2 ժ. 18 ր.

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 ՕՐ | Ն | Հ |
|---|---|---|---|
| 1 | Շբ. գծ. Նիկիոյ ս. ժողովոյն և 318 հայրապետացն։ | 14 | 9 |
| 2 | ✠ Կիր. գկ. Դ. զկնի Վերափ. | 15 | 10 |
| 3 | Բշ. դծ. ս. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսի և Դոմետրեայ վկայիցն: | 16 | 11 |
| 4 | Գշ. դկ. ս. Անդրիանոսի և կնոջ նորա Անատօլայ, Թէոդորոսի և Ոսկեթիւրոսի վկայիցն։ | 17 | 12 |
| 5 | Դշ. ած. պահք։ | 18 | 13 |
| 6 | Եշ. ակ. ս. Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի և Աստուածատրոյ վկային։ | 19 | 14 |
| 7 | Ուր. բծ. պահք՝ Նախատօնակ։ | 20 | 15 |
| | Ⓔ Լր. լուսնի։ | | |
| | Ամպամած եղանակ | | |
| 8 | ✠ Շբ. բկ. Տօն Ծննդեան ս. Աստուածածնի ի յԱննայէ։ Եւս Յ.և Ռ. | 21 | 16 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 9 | ✠ Կիր. գձ. Ե. զկնի Վերափ. Բարեկենդան ս. Խաչի պահոց: | 22 | 17 |
| 10 | Բշ. գկ. ա. օր ս. Խաչի պահ. | 23 | 18 |
| 11 | Գշ. գձ. բ. օր ս. Խաչի պահ. Աշնանամուտ եւ հաւասարակած. գիշեր ցերեկ հաւասար են: Գիշերն սկսում է երկարիլ եւ ցերեկը կարճանալ: | 24 | 19 |
| 12 | Դշ. դկ. գ. օր ս. Խաչի պահ. | 25 | 20 |
| 13 | Եշ. գձ. դ. օր ս. Խաչի պահ. | 26 | 21 |
| 14 | Ուր. ակ. ե. օր ս. Խաչի պահ. ✠ Ռ Խաչվերաց: | 27 | 22 |
| | ☾ Վերջ. քռ. լս. Հողմ եւ անձրեւ | | |
| 15 | Շբ. բձ. Տօն ս. Եկեղեցւոյ ի Նաւակատիս ս. Խաչի: Նաւակատիք: | 28 | 23 |
| 16 | ✠ Կիր. բկ. ԽԱՉՎԵՐԱՑ: Երեկոյեան Թափօր: | 29 | 24 |
| 17 | ✠ Բշ. գձ. Տօն Խաչի: Յիշատակ մեռելոց: | 30 | 25 |
| 18 | Գշ. գկ. Տօն Եկեղեցւոյ. | 1 | 26 |
| | Նոր տոմար Հոկտեմբեր | | |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 19 | Դշ. դձ. պահք: Տօն Եկեղեցւոյ | 2 | 27 |
| 20 | Եշ. դկ. Տօն Եկեղեցւոյ: | 3 | 28 |
| 21 | Ուր. աձ. պահք: Տօն Խաչի: | 4 | 29 |
| | ● Ծն. լուսնի: Բարեխառն եղանակ | | |
| 22 | Շբ. ակ, Տօն Խաչի. | 5 | 1 |
| 23 | ✠ Կիր. բձ. Բ. զկնի Խաչի: Բարեկենդան Վարագայ ս. Խաչի. | 6 | 2 |
| 24 | Բշ. բկ. պահք. ս. Մամասայ Փիլիկտիմոնի և Սիմէօնի Սիւնակեցւոյն: | 7 | 3 |
| 25 | Գշ. գձ. պահք. ս. Կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստերն մեծին Վարդանայ. | 8 | 4 |
| 26 | Դշ. գկ. պահք. ✠ Ռ. Ննջումն Յովհաննու Աւետարանչին. | 9 | 5 |
| 27 | Եշ. դձ պահք. ս. Հայրապետացն Բարաղամու, Անթիմոսի և Երանոսի. | 10 | 6 |
| 28 | Ուր. դկ. պահք: Երեկոյեան Նախատօնակ. | 11 | 7 |
| | ☽ Առ. քռ. լս. Պարզ ու պայծառ | | |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 29 | ✠ Շբ. աձ. ս. Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Աղոքտոսի և Ռոմանոսի երգեցողին։ Անուանակոչութիւն Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Ե-ի Հայոց և պետական դպրոցների հայ աշակերտները ազատ են պարապմունքից։ (44-րդ Տարեդարձ Գէորգեան Հոգևոր ճեմարանի ս. էջմիածնի). | 12 | 8 |
| 30 | ✠ Կիր. ակ. Գ. զկնի ս. Խաչի. Տօն Վարագայ ս. Խաչի (Միջոց ուտիքը եօթը շաբաթ է). Ա. Կիւրակէ եօթն շաբաթուց։ | 18 | 9 |

Սեպտեմբերի 1-ից մինչև այսօր օրն կարճացել է 2 ժ. 18 ր.

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | **ՀՈԿՏԵՄԲԵՐ** 31 ՕՐ | | |
| 1 | Բշ. բձ. ս. Դաւթի դւնեցւոյն և ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամբէուհեւոյն ✠ Ռ. Պաշպանութիւն ս. Աստուածածնի։ | 14 | 10 |
| 2 | Գշ. բկ. ս. Ստատթէոսի և կնոջ նորա Թէոփիստոսի և երկուց որդւոցն և ս. կուսանացն Երմանեայ և Նեքտարինեայ։ | 15 | 1[illegible] |
| 3 | Դշ. գձ. պահք։ | 16 | 12 |
| 4 | Եշ. գկ. ս. Իշխանացն Սանձկայ և Համազասպայ. | 17 | 13 |
| 5 | Ուր. դձ. պահք. | 18 | 14 |
| 6 | Շբ. դկ. ս. Եօթանասունն և երկու աշակերտացն Քրիստոսի։ | 19 | 15 |
| | ◉ Լր. լուսնի Ախորժելի եղանակ | | |
| 7 | ✠ Կիր. աձ. Դ. զկնի ս. Խաչի. Բ. Կիւրակէ եօթն շաբաթուց | 20 | 16 |
| 8 | Բշ. ակ. ս. Փոկասու հայրապետ- | 21 | 17 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն | Հ |
|---|---|---|---|
| | տին և Երանոսի Հեռեսողին առաքելոյ։ | | |
| 9 | Գշ. բձ. ս. Կուսանացն Թեկղի, Վառվառեայ և Գեղեգեայ. | 22 | 18 |
| 10 | Դշ. բկ. պահք. | 23 | 19 |
| 11 | Եշ. գձ. ս. Պանդալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Եպրաքսեայ կուսին. | 24 | 20 |
| 12 | Ուր. գկ. պահք. | 25 | 21 |
| 13 | ✠ Շբ. դձ. ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն։ Օշականում կատարւում է եկեղեցական տօն։ Ազգային դպրոցական տօն։ | 26 | 22 |
| 14 | ✠ Կիր. դկ. Ե զկնի ս. Խաչի։ Դ. Կիւրակէ Եօթն շաբաթուց։ ☾ Վերջ. քռ. լուսնի։ Փոփոխական օդ | 27 | 23 |
| 15 | Բշ. աձ. Գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից Կաթուղիկոսի | 28 | 24 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն | Հ |
|---|---|---|---|
| | և ս. հարցն Թաթլոյ, Վարոսի, Թովմասու, Անտոնի և Կրօնիդեայ և հօթըն խոստովանողացն, որք յԻննակնեայ վանսն կատարեցան։ | | |
| 16 | Գշ. ակ. ս. Առաքելոյն Անանիայի, Մատթէի, Բառնաբայ Փիլիպպոսի, Յովհաննու, Կիղայի և Միւղիանոսի. | 29 | 25 |
| 17 | Դշ. բձ. պահք. | 30 | 26 |
| 18 | Եշ. բկ. ս. Դիոնիսիոսի Արիսպագացւոյն և առաքելոյն Տիմոթէոսի և Տիտոսի. | 31 | 27 |
| 19 | Ուր. գձ. պահք. | 1 | 28 |
| | Նոր տոմար Նոյեմբեր | | |
| 20 | Շբ. գկ. ս. Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու. | 2 | 29 |
| 21 | ✠ Կիր. դձ. Զ. զկնի ս. Խաչի։ Դ. Կիւրակէ Եօթն շաբաթուց։ ● Ծնունդ լուսնի։ Հողմ և ցուրտ | 3 | 30 |
| 22 | Բշ. դկ. ս. Ղունկիանոսի հարիւրապետին, որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի, Յովսեփայ | 4 | [illegible] |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | Աստուածածնօրն, Յովակիմայ Երեմաթացւոյն և բարեկամին Քրիստոսի Ղազարու և քերցն նորա Մարթայի և Մարիամու։ | | |
| | ✠ Ռ. Հրաշագործ պատկերին Ղազանու. | | |
| 23 | Գշ. աձ. ս. Թէոդիտոնի քահանային, Զենոնի զինուորին, Մակարայ, Եւղոքսեայ և Ռոմիլեայ։ | 5 | 2 |
| 2 | Դշ. ակ. պահք։ | 6 | 3 |
| 25 | Եշ. բձ. ս. Մարկիթեանցն և վկայիցն Երասմեայ և Քրիստափորի և երկուց կանանցն Կալինիկէայ և Ակիւլինեայ։ | 7 | 4 |
| 26 | Ուր. բկ. պահք. | 8 | 5 |
| 27 | Շբ. գձ. ս. Երկոտասան վարդապետացն Ռեթէոսի, Դիոնիսիոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի խուրին Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհան Ոսկեբերանին և Կիւրղի Աղեք դրացւոյն։ | 9 | 6 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 28 | ✠ Կիր. գկ. Է. զկնի ս. Խաչի ԳԻՒՏ ԽԱՉ։ | 10 | 7 |
| | Ն. կիւրակէ Եօթն շաբաթուց | | |
| | Ց Մո. քո. լուսնի. | | |
| | **Անձրեւաբեր եղանակ** | | |
| 29 | Բշ. դձ. ս. Անաստասայ քահանային և Վարոսի և Թէոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա կատարեցան։ | 11 | 8 |
| 30 | Գշ. դկ. ս Հիպերիքեանց, որք ի Սամոսատ կատարեցան և ս. Սեբաստիանոսի Սեբաստացւոյն, Բաբելայ ծերոյն և 84 աշակերտաց նորին։ | 12 | 9 |
| 31 | Դշ. աձ. պահք։ | 13 | 10 |

Ամսի 1-էն մինչև այսօր օրը կարճացել է 2 ժ. 12 ր.

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | **ՆՈՅԵՄԲԵՐ**<br>30 ՕՐ | | |
| 1 | Եշ. ակ. ս. Յովհաննու Ոսկեբերան հայրապետին. | 14 | 11 |
| 2 | Ուր. բձ. պահք: | 15 | 12 |
| 3 | Շբ. բկ. Տօն Ամենայն Սրբոց Հնոց և Նորոց, Յայտնից և Անյայտից | 16 | 13 |
| 4 | ✠ Կիր. գձ. Ը. զկնի ս. Խաչի:<br>Զ. կիւրակէ եօթն շաբաթուց. | 17 | 14 |
| | ☉ Լրումն լուսնի.<br>Պարզ եղանակ. | | |
| 5 | Բշ. գկ. ս. Ստեփաննոսի Հռովմայ հայրապետին և քահանայից և սարկաւագաց և ժողովրդոց: | 18 | 5 |
| 6 | Գշ. գձ. ս. Ակեպսիմեայ եպիսկոպոսին և Յովսեփայ քահանային, Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վկային: | 19 | 6 |
| 7 | Դշ. գկ. պահք. | 20 | 17 |
| 8 | Եշ. աձ. ս. Հայրապետացն Մետրոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօղոսի | 21 | 18 |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | Խոստովանողին և սրբոց նօտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի. | | |
| 9 | Ուր. ակ. պահք: Նախատօնակ. | 22 | 19 |
| 10 | Շբ. բձ. ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն: | 23 | 20 |
| 11 | ✠ Կիր. բկ. Թ. զկնի ս. Խաչի:<br>Է. կիւրակէ եօթն շաբաթուց: | 24 | 21 |
| 12 | Բշ գձ ս. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ Եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային և Տիմնու սարկաւագին: | 25 | 22 |
| 13 | Գշ. գկ. ս. Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային: | 26 | 23 |
| | ☾ Վերջ քռ. լս.<br>Հողմ և ցուրտ. | | |
| 14 | Դշ. դձ. պահք. | 27 | 24 |
| 15 | Եշ. դկ. ս. Գուրիասայ, Սամունասայ և Աբիբայ սարկաւագին, Ռոմանոսի միայնակեցին, Մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինաւորին: | 28 | 25 |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 16 | Ուր. աձ. պահք. | 29 | 26 |
| 17 | Շբ. ակ. ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի։ | 30 | 27 |
| 18 | ✠ Կիր. բձ. Ժ. զկնի ս. Խաչի· Բարեկենդան Յիսնակի պահոց | 1 | 28 |
| | Նոր տոմար Դեկտեմբեր։ | | |
| 19 | Բշ. բկ. ա. օր յիս. պահ. | 2 | 29 |
| 20 | Գշ. գձ բ. օր յիսն պահ. Նախատօնակ | 3 | 30 |
| | ◉ Ծն. լուսնի<br>Ձիւնախառն անձրև | | |
| 21 | ✠ Դշ. գկ. պահք։ գ. օր յիսն. Ընծայումն Ս. ԱՍՏՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն։ Նաւ Ե. և Ռ. | 4 | 1 |
| 22 | Եշ. դձ. դ. օր յիսն, պահ. | 5 | 2 |
| 23 | Ուր. դկ. ե. օր յիս. պահ. | 6 | 3 |
| 24 | Շբ. աձ. ս. Գրիգորի սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին։ | 7 | 4 |
| 25 | ✠ Կիր. ակ. Ա. զկնի յիս. | 8 | 5 |
| 26 | Բշ. բձ. ս. Կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ. | 9 | 6 |
| 27 | Գշ. բկ. ս. Ղունկիանոսի քահա- | 10 | 7 |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| | նային և ս. Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի և Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Պօղոսի. | | |
| 28 | Դշ. գձ. պահք։ | 11 | 8 |
| | ◑ Առ. քռ. լս.<br>Խառնակ եղանակ | | |
| 29 | Եշ. գկ ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տաւոմենոյ եպիսկոպոսին. | 12 | 9 |
| 30 | Ուր դձ. պահք։ Նախատօնակ· | 13 | 10 |

Ամսի 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 1 ժ. 24 ր.

| Օ | | Ն | Լ |
|---|---|---|---|
| | # ԴԵԿՏԵՄԲԵՐ<br>31 ՕՐ | | |
| 1 | Շբ. դկ. ս. Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի | 14 | 11 |
| 2 | ✠ Կիր. առ. Բ. կնի Յիս. | 15 | 12 |
| 3 | Բշ. ակ. ս. Գենադիոսի եպիսկոպոսին և Մերկուրիոսի զինուորին, Յակովկայ և Իրաւափառայ. | 16 | 13 |
| 4 | Գշ. բձ. ս. Աբգարու նախավկայ և անդրանիկ թագաւորին մերոյ. | 17 | 14 |
| 5 | Դշ. բկ. պահք.<br>● Լրումն լուսնի։<br>**Ցրտաշունչ եղանակ** | 18 | 15 |
| 6 | Եշ. գձ. ս. Հարցն Եգիպտացւոց Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Դրնեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց սրբոց հարցն։ | 19 | 16 |
| 7 | Ուր. գկ. պահք։ | 20 | 17 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն | Լ |
|---|---|---|---|
| 8 | Շբ. դձ. Ս. Նիկողայոսի Զմիւռնացւոյ սքանչելագործ հայրապետին Նախատօնակ. | 21 | 18 |
| 9 | ✠ Կիր. դկ. Գ. կնի Յիս. Յղութիւն ս. Աստուածածնի ի Յաննայէ։ Բարեկենդան ս. Յակոբայ պահոց։ | 22 | 19 |
| 10 | Բշ. աձ. պահք. ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրաքոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալեքսիանոսի.<br>Ձմեռնամուտ եւ աշխարհաշարժ այծեղջեր։ Ցերեկն սկսում է երկարել եւ գիշերը կարճանալ։<br>Սկիզբն քառասն. ա. մասին ձմռան | 23 | 20 |
| 11 | Գշ. ակ. պահք. ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, Պօղիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և վկայիցն, որ յարեւելս կատարեցան. | 24 | 21 |
| 12 | Դշ բձ. պահք.<br>☾ Վերջ քռ լուսն։<br>**Ձիւնաբեր եղանակ** | 25 | 22 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն | Ղ |
|---|---|---|---|
| 13 | Եշ. բկ. պահք. ս. Եստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգինէոսի, Ովրեստէսի և Մարդարիոսի. | 26 | 23 |
| 14 | Ուր. գձ. պահք: Նախատօնակ: | 27 | 24 |
| 15 | Շբ. գկ. ս. Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Միլիտոսի եպիսկոպոսին. | 28 | 25 |
| 16 | ✠ Կիր. գձ. Բ. զկնի Յիս. | 29 | 26 |
| 17 | Բշ. գկ. ս. հայրապետացն Իգնատիոսի, Ադդէի և Մարութայի եպիսկոպոսին. | 30 | 27 |
| 18 | Գշ. աձ. ս. Թէոպոմպայ եպիսկոպոսին և Թէոնասայ վկային և չորից զինւորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքէի և Բասիլեդէայ։ | 31 | 28 |
| 19 | Դշ ակ. պահք: | 1 | 29 |
| | Նոր տոմար Յունուար 1919 թ.։ | | |
| | ● Նոր. լուսնի. | | |
| | Ձիւն եւ ցուրտ | | |
| 20 | Եշ բձ. ս. Խուսանացն Ինդոսի, Դոմնայի և Գղերիկոսի քահանային և երկուց քհւրացն որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց։ | 2 | 1 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն | Ղ |
|---|---|---|---|
| 21 | Ուր. բկ. պահք. | 3 | 2 |
| 22 | Շբ. գձ. ս. Բարսղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորին Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին և Սրբոյ Եփրեմի Խուրին Ասորւոյ։ | 4 | 3 |
| 23 | ✠ Կիր. գկ. Ե. զկնի Յիսն. Նախատօնակ: | 5 | 4 |
| 24 | Բշ. գձ. ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն. | 6 | 5 |
| | Ռ. ճրագալոյց Յայտնութեան. | | |
| 25 | Գշ. դկ. ս. Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին։ | 7 | 6 |
| | ✠ Ռ. Ծնունդ Տեառն. | | |
| 26 | Դշ. աձ. պահք. Նախատօնակ. | 8 | 7 |
| | ✠ Ռ. բ. օր ծննդեան։ | | |
| | ☽ Առ. քառ. լս. | | |
| | Բքաբեր եղանակ. | | |
| 27 | Եշ. ակ. ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ | 9 | 8 |
| | ✠ Ռ. գ. օր ծննդ։ | | |
| 28 | Ուր. բձ, պահք. Նախատօնակ. | 10 | 9 |
| 29 | Շբ բկ. ս. Որդւոցն Որոտման | 11 | 10 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն | Հ |
|---|---|---|---|
| | Յակոբբայ առաքելոյն և Յովհաննու աւետարանչին: Բարեկենդան Ծննդեան պահ. | | |
| 30 | ✠ Կիր. գձ. Զ. Հ՚նի Երս. ա. օր ծննդ. պահ. | 12 | 11 |
| 31 | Բշ. գկ՝ Բ. օր ծննդ. պահ. | 13 | 12 |

Ամսիս 1-ից մինչև այսօր օրը աւելացել է 0 ժ. 28 ր.



# ՅԱՒԵԼՈՒԱԾ „ՃԻՐԱԿ" ՓՕՑԻ ՕՐԱՑՈՅՑԻ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

Արևելեան Հարցը սկիզբն է առնում ԺԴ դարից, այն է 1856 թւականից, երբ Թուրքերը մուտք գործեցին Եւրոպա և Օսմանեան տիրապետութիւնը հաստատեցին արևելեան Եւրոպայի հողամասերի վրայ:

Ահա այս պայմանական թւականից է սկսւում Արևելեան Հարցը:

Երբ օսմանցիները ասիական ընդարձակ նահանգները նւաճելուց յետոյ յաղթանակօրէն առաջ շարժւեցին դէպի եւրոպական ծովեզերքները, և առաջին անգամ մուտք գործեցին Եւրոպա, գրաւելով զանազան մեծ ու փոքր ազգութիւններ, ցրւած Բալկանեան թերակղզում, մինչև Եգէեան ու Յոնիական ծովերը, ինչպէս նաև Միջերկրականի կղզիների մէջ, Եւրոպան ցնցւեց և զարթնացաւ: Այստեղից է սկսւում Արևելեան Հարցի ծագումը, որի միակ նպատակն է Եւրոպայի ծայ-

բազոյն սահմաններից այն կողմը քշել այդ «նեղիչ» հիւրերը, մինչև իրենց նախկին սահմանները, նուաճած բոլոր ժողովուրդներին վերադարձնել իրենց նախկին ազատութիւնները և գոյութեան իրաւունքը՝ քաղաքակիրթ աշխարհում: Օսմանեան տիրապետութեան դէմ եւրոպական մտահոգութիւնը սկսում է աստիճանաբար զարգանալ մանաւանդ, երբ Մոհամմէդ Ֆաթիհ տիրում է Կ. Պոլսին և վերջնական խորտակում Բիւզանդական գահը: Բայց 1848 թուականից է, որ շեշտւում է Արևելեան Հարցի լուծման անհրաժեշտութիւնը, որովհետև Օսմանցիները Պոլսի նուաճումից քաջալերուած, արշաւում են հիւսիս արևմուտք, և հասնում են Աւստրիայի մայրաքաղաքին-Վիէննային...: Այս առաջխաղացումը չէ միայն, որ կազմում է Արևելեան Հարցի շարժառիթը. աւելի ուժեղ պատճառներ կան-ներքին և արտաքին:

Ֆաթիհ, հեռատես քաղաքագէտ էր, իր նըւաճած ժողովուրդներին աշխատում էր սիրաշահել՝ նրանց լայն իրաւունքներ տալով: Իր նոր նուաճած մայրաքաղաքում ապրող յոյն տարրերին շոյելու համար Տիեզերական Պատրիարքին իր նախկին իրաւունքները պահելուց ջոկ նորանոր արտօնութիւններ է շնոր-



հում, հիմնում է Պոլսի Հայոց Պատրիարքութիւնը և շրջապատում իրան ականաւոր հայերով: Սակայն սրան յաջորդող Սուլթանները, քիչ բացառութեամբ, մասնաւորապէս քրիստոնեայ տարրի դէմ հալածանքի քաղաքականութեան հետևելով, աստիճանաբար ճնշելով անտանելի են դարձնում իրենց լուծը և այսպէս իրենց դէմ նախ ստեղծում են դժգոհութիւններ, ապա ատելութիւններ, որոնք վերջը զինուած ապստամբութիւններով են երեւան գալիս: Իրերի և դէպքերի այս անողոք ընթացքը հարթում է ճանապարհը և Արևելեան Հարցին տալիս սուր կերպարանք:

Արևելեան Հարցի ներքին պատճառներից առաջինն ու գլխաւորը՝ յաղթուած, սակայն դեռ չընկճուած ազգերի բնազդային ձգտումն էր, եթէ ոչ դէպի ազգային ինքնավարութիւն կամ անկախութիւն, այլ գոնէ դէպի հաւասար իրաւունքների վայելում՝ տիրող տարրի հանդէպ: Մի կողմից, նրանք զուրկ էին այդ տարրական իրաւունքներից, միւս կողմից, արևմուտքի զանազան կենդրոններում, մասնաւորապէս Ֆրանսիայի մէջ, քաղաքակրթական և յեղափոխական շարժումները ու նոր յառաջադիմական ձգտումները պիտի անխուսափելի

ծրէն ներգործէին արևելքի այս հարստահար-
ւած ազգերի վրայ։

Այս բոլորի դէմ գործ է դրւում և ամենա-
խիստ միջոցներ, նոյն իսկ պարբերական կո-
տորածներ: Բնական է այս հակամարդկային
արարքները պիտի գրգռէին Եւրոպայի հան-
րային կարծիքը, և թէ ամբողջ Եւրոպան, իր
սեփական շահերի խորունկ գիտակցութիւնից
թելադրւած, պիտի ստիպւէր միջամտել Արև-
ելքի քրիստոնեաների պաշտպանութեան պա-
տրւակով. Հետևաբար նրքին պատճառներին
անմիջապէս յաջորդում են արտաքինները։
Ռուսաստանը տեսնում էր Օսմանեան Կայ-
սրութեան հետզհետէ ուժեղանալը և ընդար-
ձակւելը, նրա բացարձակ եզակի դիրքը՝ եր-
կու հին ցամաքների, Եւրոպայի և Ասիայի
մէջ, երկու գեղեցիկ, մեծ ու կարևոր ծովերի՝
Սև ու Միջերկրականի վրայ՝ նրա բացարձակ
տիրապետութիւնը։ Միջերկրական ծովը Եւ-
րոպական մեծ տէրութիւնների մրցավայրն
էր, ուր հակամարտ շահեր խրար էին հանդի-
պում և որի ճակատագիրը յանձւած էր օս-
մանեան տէրութեան։ Այսպէս ամենամեծ ա-
ռաւելութիւնը այս տեսակէտից վայելողը Թիւր-
քիան էր։ Այժմ հեշտ է արդէն թափանցել
Ռուս Թուրքական առնչութեան գաղտնիքի



մէջ։ Կ. Պոլսին տիրողը՝ տիեզերքի տէրը կը
լինի. ահա այս նշանաբանով է, որ Ռուսաս-
տանը Մեծն Պետրոսից սկսած, իր քաղաքա-
կան մտահոգութեան գլխաւոր առարկան դար-
ձրել է օսմանեան պետութիւնը։ Ահաւասիկ
համառօտ պատմութիւնը ռուս-թուրքական
պատերազմների. 1672-ից սկսած պարբերա-
բար ընդհարւելով, Ռուսաստանը կարողա-
նում է խլել Սև ծովի հիւսիսային ափերի
հողամասերը։ 1744 թւին, «Քիւչիւք Կայնար-
ճայի» դաշնադրութեան ուժով, գրաւում է
Դնեպրի և Բուգի մէջ ընկած երկիրը, Սև ծո-
վը բացւում է իր առջև։ Այս դաշնագրով Բ.
Դուռը խոստանում է պաշտպանել քրիստո-
նեաներին։ Այստեղից սկսւում է Արևելքի
քրիստոնեաների վրայ Ռուսաստանի պաշտ-
պանութիւնը, որը յետոյ պատճառ է լինում
1853-ի պատերազմին։ 1790—92 պատերազ-
մով Ղրիմը վերջնականապէս ռուսական նա-
հանգ է դառնում և Թուրքիան կորցնում է
Կովկասի կողմից մի քանի գաւառներ։ 1803
—12-ի պատերազմի հետևանքով և Բուխա-
րէստի մէջ կնքւած դաշնագրով, Ռուսաստա-
նը գրաւում է Դնեպրի ու Դանուբի մէջ
գտնւած երկրները։ Եւ այսպէս հետզհետէ ռու-
սական պետութիւնը ընդարձակւում է և մօ-

տեննում Կ. Պոլսի դռներին, որը նրա վերջնական նպատակն էր: 1829-ի պատերազմին «Էտիրնէի» դաշնագրով Ռուսիան տիրում է Դանուբի գետաբերաններին, նոր մի քայլ առաջանալով դէպի Օսմ. մայրաքաղաքը, միւս կողմից ազատ աւարկութեան իրաւունք է ձեռք բերում Սև Ծովի բոլոր եզերքները: Էտիրնէի դաշնագրով Մոլդաւիա, Վալախիա և Սերբիա հարկատու իշխանութիւններ են կազմւում Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Նոյն թւականին Ցունաստանի անկախութեան արիւնահեղ պատերազմները վերջանում են Նավարինի մէջ Օսմ. հսկայ նաւատորմիղի այրւելովը՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միացեալ ուժերի կողմից: 1833 թւին Եգիպտոսի Մուհամմէտ Ալին ապստամբում է Բ. Դրան դէմ. վերջինս՛ ստիպւած դիմում է Ռուսաստանի պաշտպանութեան և կնքւում է «Հիւնքեար Իսկէլէսիի» նշանաւոր դաշնագիրը, որով Ռուսաստանի առաջ բացւում է Վոսփորը, իսկ Եւրոպայի միւս տէրութիւնների առաջ փակւում է Դարդանելը: Այս հանգամանքը սաստիկ գայրացնում է՞ ամբողջ Եւրոպային: 1853-ին. պատերազմ է յայտարարում Թիւրքիային, յենւելով Արևելքի քրիստոնէ-



աների պաշտպանութեան վրայ: Այս պատերազմի մէջ իր դէմ է հանում Անգլիային, Ֆրանսիային և Սարտինիային: Աւստրիան էլ ոչ պակաս օգնեց արևմտեան դաշնակից պետութիւններին, չը նայելով, որ նա 1848 թւին, փրկւած էր Ռուսաստանի ձեռքով: Այս պատերազմը վերջացաւ 1856 թւին Ռուսաստանի պարտութեամբ և Փարիզի դեսպանաժողովի մէջ կնքւած դաշնագրութեամբ, որով արգելք էր դրւում Ռուսաստանի ապագայ աշխարհակալական շարժման դէմ, միևնոյն ժամանակ երաշխաւորելով Եւրոպայի պաշտպանութեան տակ—Օսմ. կայսրութեան անկախութիւնն ու ամբողջութիւնը: Թիւրքիան արտաքին միջամտութիւնից ազատ զգալով հռչակաւոր «Թանզիմաթով» խոստանում է բոլոր հպատակներին հաւասարութիւն և լայն արտօնութիւններ: Սակայն Թիւրքիայի խոստումները թղթի վերայ մնացած մեռած տառ են մնում, և հակառակ դրան ժողովուրդը դարձեալ ենթարկւում է զրկանքների, ճնշման և հալածանքի ու կոտորածի:

Փարիզի դաշնագրութեամբ Ռուսաստանը մեծ հարւած է կրում, կորցնելով Արևելքի մէջ իր գլխաւոր գերակշռութիւնը: Տեղի է ունենում Բուլղարների և Բոսնա Հերցեգովինայի քրիս-

տոնեաների ջարդը, որի արձագանքը գրգռացնում Եւրոպան։ Թիւրքիան առհասարակ այս քաղաքականութիւնից ձեռք չէր վերցնում։ Փարիզի դաշնագրից չորս տարի յետոյ Լիբանանի և Դամասկոսի քրիստոնեաների ջարդերը տեղի ունեցան։ Այս եղեռնագործութիւնները տեղի ունեցան 1860 թւին, երբ Նապոլէոն Գ. էր թագաւորում Ֆրանսիայում։ Ֆրանսիայի կողմից զինւած միջամտութիւն տեղի ունեցաւ, և ստեղծւեց Լիբանանի ինքնավարութիւնը մօտ կէս միլիոն Մարոնիների համար, որոնք կաթոլիկ էին։ Սրանից չըխրատւած, Թիւրքիան մոլեռանդ խուժանի ձեռքով արիւնով է ողողում Բալքանները։ Այդ ժամանակ է, որ Գլադստոնը բարձրացնում է իր ձայնը և սասանեցնում տիեզերական խղճմտանքը։ Ու պայթում է 1877 թ. Ռուս-Թրքական պատերազմը, որի հետևանքով կազմւում է Նոր Բուլղարիան, Բոսնիան և Հերցեգովինիան յանձնւում է ժամանակաւորապէս Աւստրո-Ունգարիայի խնամակալութեան։ Թիւրքիայի ձեռքից դուրս է գալիս նաև Կարսի, Արտահանի և ապա Բաթումի շրջանները։ Կիպրոսը յանձնւում է Անգլիային եայլն։

Սմբատ Բիւրատ



## ԻՆՉ Է ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

(Էրնեստ Ռենան)

Ազգութիւնը մի սրբազան ոգի է, հոգեկան սկզբունք։ Յատկապէս ասած՝ երկու հանգամանքներ են ծնեցնում այդ ոգին, այդ հոգեկան սկզբունքը։ Մէկն անցեալի մէջ է, իսկ միւսը՝ ներկայի։ Նրանից մէկը՝ ընդհանուր սեփականութիւն է անցեալի, հարուստ յիշատակների ժառանգութիւն, իսկ միւսը՝ իրական համաձայնութիւն, անհատական կամք, միասին ապրելու ցանկութիւն, ցանկութիւն շարունակել պահպանելու նախնիքներից ստացած թանկագին ժառանգութեան գոյութիւնը, որն ազգութիւն կազմող անհատները ստացել են ամբողջութեամբ։ Ազգութիւնը ինչպէս և անհատը, սերտ կապ ունի երկար անցեալի, շատ ջանքերի, զոհողութիւնների ու անձնազոհութիւնների հետ։

Նախնեաց պաշտամունքն ամենից շատ օրինականն է. մենք մեր ներկայով լիովին պարտական ենք մեր նախնեաց։ Ազգութեան գիտակցական անցեալը, նրա մեծ մարդիկը, ճշմարիտ ու առաջինի փառքը—ահա այն ընկերական հարստութիւնը, որի վրա բայ հիմնւում է ազգութեան սուրբ գաղափարը։ Ունենալու ընդհանուր պարծանքներ անցեալում, ընդհանուր կամք ներկայում, կատարել միասին եղբայրական ուժով մեծամեծ քաջագործութիւններ, ցանկալ էլի կատարելու միևնոյն բաները յետագայ ազատ կեանքում—ահա ազգ լինելու էական պայմանները։ Մեզանից իւրաքանչիւրը կարող է իր անձի նկատմամբ դատել, որ սովորաբար՝ մարդ սիրում է տոկալ՝ թէ՛ աշխատութեան, թէ թշւառութեան, թէ հալածանքի և թէ կոպիտ բռնութեան, միով բանիւ ամեն տեսակ նեղութիւնների միմիայն



այն ժամանակ՝ եթէ այդպիսի հալածանքի ենթարկւող անհատները իրար հետ միասին եղբայրաբար են կրում իրանց նեղութիւնները, եթէ նոքա դառնութեան բաժակը իրար մէջ են բաժանում յանուն ազատութեան,ճիշտ այնպէս ինչպէս սովորաբար սիրում են տունը, կամ այն հասարակութիւնը, որը ընկերաբար են կառուցած և որը սերունդէ սերունդ հասել է աւանդաբար։ Մի ազատական երգ ասում է. «Մենք այն ե՛նք, ինչ որ դուք էիք, մենք այն կլինենք, ինչ որ դուք էք»։ Այս է ամեն մի հայրենիքի պարզ ու համառօտ օրհներգութիւնը։

Անցեալից ժառանգութիւն ստացած փառքն ու անբաժան կերպով կրած տանջանքներն ու հալածանքները, ապագայում միևնոյն ծրագիրներն են, տանջւիլ չարչարւիլ ուրախանալ, հըրճւիլ և յուսալ միասին ազատութեան ժամին. ահա թէ ինչ բաներ աւելի

թանգ են ազգութեան համար, քան մաքսային դաշնադրութիւններն ու մի երկրի արհեստական սահմանները, որոնք հետևանք են ռազմագիտական ճարպկութեանց, ահա թէ ինչ բանն է կազմում ազգութիւն, չնայելով ցեղի և լեզւի տարբերութեանց: «Տանջուիլ միասին այո, ընդհանուր տանջանքը աւելի է կապում ցրւած ազգութեան անդամներին, քան թէ ուրախութիւնը: Ազգային յիշատակների մէջ տանջանքներն աւելի կարևոր նշանակութիւն ունին, քան նրա յաղթանակները՝ որովհետև նոքա, այսինքն տանջանքները, պարտաւորութիւններ են դնում մարդու վրայ: Դրանք ղեկավարում են բազմութեան բոլոր շարժումները:

Ուրեմն՝ ազգութիւնը մի մեծ համերաշխութիւն է (СОЛИДАРНОСТЬ), որպէս պտուղ այն սրբազան զգացմունքների, որոնց համար մարդս զոհեր է



բերել ու դեռ ապագայում նոյնպէս պիտի բերէ: Ազգութիւն ասելով՝ ենթադրում ենք մի անցեալ, իսկ ներկայում այն անցեալը կրկնւում է իբրև մի շօշափելի փաստ, որը արտայայտւում է ընդհանուր համերաշխութեան և միասին ապրելու ցանկութեան մէջ: Ազգութեան գոյութիւնը մի ամենօրեայ ռամկական վճիռ է ինչպէս՝ մի անհատ ինքը իւր գոյութիւնով հաստատում է, որ նրա մէջ կայ կեանք իբրև գրաւական բարօր վիճակի:

Դա աւելի պակաս բնազանցական է՝ քան աստուածային իրաւունքը. դա աւելի քիչ դաժան ու խիստ է. քան կեղծ պատմական իրաւունքը: Այս տեսակէտից՝ ինչպէս ազգութիւնը, այնպէս և մի թագաւոր իրաւունք չունի ասելու մի նահանգի թէ «դու ինձ ես պատկանում, ես քեզ վեր եմ առնում»: Մեզ համար նահանգը՝ նրա

բնակիչներն են։ Եթէ որևէ մէկին այս դէպքում մի բան ենք հարցնելու, այդ բնակիչներին պէտք հարցնենք. Ազգութեան ճշմարիտ շահը հէնց նրանումն է, որ չը միացնեն ու չբռնաբարեն իրանց ձեռքի տակ մի երկիր, հակառակ վերջինիս ցանկութեան։ Ազգութեան կամքն է միակ օրինաւոր ճշմարիտ նշանաբանը, որին պէտք միշտ հարցնել այսպիսի դէպքերում։

Թարգմ. Յ. Ղարագէօզեան





## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մի երես Ֆրանսիական յեղափոխութիւնից

1789 թւի Մայիսի 5-ի օրը, Վերսալի փողոցները խռնուած էին ժողովրդով, ամէնքը ցանկանում էին տեսնել այն հանդէսը, որի մասին ամեն տեղ երկար ու բարակ խօսակցութիւն էր լինում։ Դիտողները վերջապէս հասան իրանց նպատակին. խռնուած փողոցի ծայրում երևում է մի ինչ որ բան, ահա հետզհետէ մօտենում է, և շուտով հետաքրքիր ամբոխը կարող էր նկատել առանձին դէմքեր, այս ծաները առաջ գնացող թափօրի մէջ։ Սա Ֆրանսիայի կառավարիչներն էին, շրջապատուած փառահեղ շքախմբով։ Առաջից գնում էին թագաւորը և թագուհին, յետոյ մեծ իշխանները, նախարարները և բոլոր պալատական մեծամեծները, ապա ազնուականները և

հոգևորականների ներկայացուցիչները, իսկ ամենից վերջը թափորը լրացնում էր հասարակ շորերով աչքի ընկնող երրորդ դասակարգի ներկայացուցիչները։ Այս խմբերը առաջ գնացին եկեղեցի, իսկ եկեղեցուց դիմեցին թագաւորական պալատին կից մի շինութիւն։ Ի՞նչ էր սա, ո՞ւր, և ինչու համար էին գնում այդ մարդիկ։ Ինչու էին այդ բոլորը հաւաքուել այսօր այստեղ։ Այդ օրը Ֆրանսիայի Լիւդովիկոս XVI-դը դասակարգերի հրաւիրուած ներկայացուցիչների ժողովն էր բաց անում, Լուդովիկոս XVI-դ ժառանգել էր իր պապերից մի երկիր, որ քայքայուած էր երկար ու ձիգ պատերազմների և անկանոն կառավարութեան շնորհիւ։ Անբերրութեան սովորական երևոյթ էր Ֆրանսիայում։ Անօթի ժողովուրդը տանջւում էր երեք լծի տակ. Թագաւորութեանը հատուցանելի հարկերի, երկու դասա-



կարգերին ազնուականներին և հոգևորականներին հասանելի պարտականութիւնների և անզուսպ պաշտօնեաների, կաշառակերութեան։

Տէրութեան պարտքերը չափազանց շատացել էին և նա վարկաբեկ էր եղած, բանը հասել էր այնտեղ, որ ամենահարուստ երկիրը, իր ամենաանհրաժեշտ պետական ծախսերը ծածկելու փող չէր կարող ձեռք բերել։

1774 թւականին գահ բարձրանալով, Լիւդովիկոս ԺԶ-ը զգում էր որ եղած կարգերը անհրաժեշտ է փոխել, բայց ինչպէս. այդ չգիտէր թագաւորը, որը մեծ գլխի և ամուր բնաւորութեան մարդ չէր, և իր թուլամորթութեան շնորհիւ խաղալիք էր դարձել պալատականների ձեռքին։ Պալատականներից մի քանիսը հասկանում էին երկրի լուրջ դրութիւնը և հիմնական բարեփոխութեանց անհրաժեշտութիւնը, բայց սոցա ձգտումները հակառա-

կութիւն էին գտնում պալատական մեծամեծների կողմից։ Այս մեծամասնութեան մէջ երկու հոսանքներ կային, որոնցից ոչ մէկը չի կարելի հաշւել խելացի։ Մի մասը ատում էր թէ ժողովրդին և թէ ամեն նոր բան, և բոլոր բարեփոխութեանց պահանջմունքներին ունէր միայն մէկ միջոց՝ զօրքը. (այսինքն, փոխանակ բարեփոխութիւն մտցնելու պահանջում էր ջարդել բոլոր բարեփոխութիւն ցանկացողներին). միւսները կարծում էին որ անհրաժեշտ է մի բան անել, բայց որովհետև ժողովրդին համարում էին տհաս, ուստի մտածում էին խաբել նրան մի քանի ցանցառ զիջումներով։ Առաջինների կողմն էր թագուհին և բոլոր մեծ իշխանները. իսկ թագաւորը պատկանում էր առաջինների և վերջինների մէջ, և երբ խորհրդակցում էր վերջինների հետ և մշակում մի բարեփոխութեանց ծրագրներ, մի-



նոյն ժամանակ դաւադրութիւն էր կազմում ժողովրդի դէմ, երկրորդների հետ։ Իսկ ժողովրդի անբաւականութիւնը և բողոքը աւելի էր բարդւում ու գրգռւում, սպառնալով կառավարութեան համար վտանգաւոր ձև. դանձարանի դատարկութիւնը ստիպում էր վերջնական մի վճիռ կայացնելու. պալատը սովոր էր գեխ ապրելու և դիմադրում էր մի քանի նախարարների անտեսութեանը։ Փորձեցին հարկի տակ դնել հոգևորականութեանը և ազնուականութեանը, որոնք մինչև այդ ժամանակ ոչ մի հարկ չէին տալիս։ Բայց այդ փորձը անյաջող դուրս եկաւ՝ բարձր դասակարգերը եղած կարգադրութեանց չը հնազանդւեցին և նոյնպէս սկսեցին բողոքել թագաւորի իշխանութեան դէմ։ Երկրում սով էր և գիւղացիութիւնը, որ մինչև այդ համբերում էր, սկսեց ապստամբութիւններ. անկարգութիւններին վերջ

տալու համար նշանակուած զօրքերը, իրանց ազնուական սպաների լուռ համաձայնութեամբ հակառակ ում էին, իսկ սպաների լուռ համաձայնութիւնը բացատրւում է նրանով, որ նրանք մեծ մասամբ կառավարութիւնից անբաւական ազնուականներից էին: Կառավարութեանը մնում էր միայն մի ելք հրաւիրել դասակարգների ներկայացուցիչներին, այս հիմնարկութիւնը, Փրանսիական հին, միջին դարերից մնացած մի հիմնարկութիւն էր։ Թագաւորական իշխանութիւնը զօրանալուց յետոյ, դասակարգերի ներկայացուցիչները շատ ուշ ուշ էին հրաւիրւում, իսկ 1615 թուականից սկըսած ոչ մի անգամ չէին հրաւիրւած։ Հիմա վճռել էին նորից դիմել նրանց այն յոյսով, որ այդ ներկայացուցիչները կօգնեն կառավարութեան անըհրաժեշտ փող ճարելու միջոցներում և որ վերջինս չէր կարողացել ձեռք բե-



րել ոչ նոր հարկերով և ոչ փոխառութեամբ։ Կառավարութիւնը ներկայացուցիչներից էլ ուրիշ ոչինչ չէր սպասում։

Բայց վերջին դասակարգային ժողովից յետոյ Ֆրանսիայի ներքին կեանքի մէջ ահագին փոփոխութիւն էր առաջ եկել՝ ծագել և զարգացել էր քաղաքային կեանքը, ամրապնդւել և գիտակցութեան էին հասել մեծ քաղաքներում վաճառական և արդիւնաբերող դասակարգերը. ահա այս երկու դասակարգերն էին, որոնք անւանւում էին Ֆրանսիայում երրորդ դասակարգ։

Այս բանը շատ լաւ ըմբռնել էր ժամանակակից առաջաւոր ինտելլիգենցիան, որը քարոզում էր լրագրութեան մէջ, թէ երրորդ դասակարգը մինչև այժմ ոչինչ էր, հիմա դառնալու է ամեն ինչ։ Այս բանը խոստովանում էր և կառավարութիւնը, որը

վճռել էր, թէ երրորդ դասակարգը իրաւունք ունի ուղարկել իր միջից բոլոր ներկայացուցիչների կէսը. իսկ միւս կէսը պիտի լինէր հոգեւորականութիւնից և ազնուականութիւնից հաւասարաչափ։

Ամբողջ Ֆրանսիան ուղարկում էր 1214 ներկայացուցիչ, որոնցից ուրեմն 60-ից աւելը ընտրուած էր երրորդ դասակարգից՝ այսինքն վաճառական և արդիւնաբերող հարուստ դասակարգերից, որոնք դեռ ևս չէին զանազանում իրանց կարիքները ընդհանուր Ֆրանսիայի ժողովրդի կարիքներից։ Երրորդ դասակարգի բոլոր ընտրեալները կողմնակից էին հիմնական բարեփոխութեանց, սրա ստացել էին ընտրողներից այսպէս անուանուած «Gahcies» (Տետրակներ) որոնց մէջ ընտրողները թւում էին իրանց գանգատները և պահանջմունքները։ Արմատական բարեփոխութեանց բազմա-



թիւ կողմնակիցներ կային և ստորին հոգեւորականութեան մէջ, որովհետև սրա ապրում էին ժողովրդի կեանքով, մասնակից էին վերջինս թէ ուրախութիւններին և թէ ցաւերին և նոյնպէս գտնւում էին թշւառ դրութեան մէջ։ Ազնուականների և հոգեւորականների մէջ չկային բարեփոխութեանց կողմնակիցներ։

Ինչպէս վերևն ասած է.նիստը բացւեց Թագաւորի իր ճառով. որից յետոյ խօսեց առաջին նախարար Նեկկերը։ Բայց ոչ առաջինը և ոչ վերջինը գաղափար չունէին հաւաքուածների տրամադրութեան և առաջիկայ դժուարութիւնների մասին։

Հին սովորութեան համաձայն ամեն դասակարգին նշանակւած էր առանձին նիստի դահլիճ և երրորդ դասակարգին որպէս ամենաբազմամարդին, յատկացրած էր ընդհանուր ժողովի դահլիճը, որտեղ և կատարւած էր ժո-

ղովի բացման հանդեսը։ Այս բանից օգտւելով, երրորդ դասակարգի ներկայացուցիչները իրանց մոտ ընդհանուր ժողովի հրաւիրեցին միւս երկու դասակարգերի ներկայացուցիչներին որպէսզի միասին ճշտեն ընտրութիւնները, բայց հոգևորականները և ազնւականները գոռոզաբար մերժեցին այդ հրաւէրը։ Սկսւեց բանակցութիւն, որը ոչ մի հետևանք չունեցաւ, իսկ ժողովուրդը հաւաքւածներից ըսպասում էր իր արդար պահանջմունքների կատարումը։ Երրորդ դասակարգի ներկայացուցիչների մէջ գտնւեցին վճռական մարդիկ, որոնք լաւ հասկանում էին, թէ իրանց ոյժը ժողովրդի հաւատի մէջն է. և թէ ամէն մի դանդաղում կարող է երրորդ դասակարգի իղձերը ի դերև հանել։ Եւ այս, յունիսի 17-ին վճռական քայլն արին նրանք՝ հաւաքւելով ընդհանուր ժողովի դահլիճը, նրանք յայտարարեցին



իրենց Ազգային Ժողով, այսինքն յայտարարեցին իրանց ներկայացուցիչներ ոչ թէ երրորդ դասակարգի, այլ ամբողջ Ֆրանսիայի։ Եւ իսկապէս այդպէս էլ էր՝ երրորդ դասակարգն կողմնակից էր այն ժամանակ բոլոր աշխատաւոր ժողովուրդը, որը ազգութեան էական ոյժն էր, իսկ առաջին երկու դասակարգերը (Ազնւականները և հոգևորականները) խիստ փոքրամասն էին և ապրում էին աշխատաւոր մեծամասնութեան հաշւով։

Նոյն ժողովներում, յունիսի 17-ին վճռւեց, որ հարկեր կարելի է հաւաքել միայն Ազգային Ժողովի թոյլտւութեամբ և թէ թագաւորութեան բոլոր պարտքերը յանձն է առնում Ֆրանսիայի ժողովուրդը եթէ Ազգային Ժողովի մշակելիք բարեփոխութիւններին ոչ մի արգելք չի հանդիսանայ կառավարութիւնը։

Երրորդ դասակարգի ներկայացու-

ցիչների այս քաջութիւնը և անվեհե-
րութիւնը գրաւեցին ժողովրդի սէրը
և միւս դասակարգերի տատանուող ներ-
կայացուցիչներին։ Հոգեորականների
մեծամասնութիւնը միացաւ Ազգային
Ժողովի հետ։

Թագաւորական կուսակցութիւնը վը-
ճռեց խանգարել այս միութիւնը և
դադարեցրեց ժողովները այն պատըր-
ուակով, թէ ընդհանուր ժողովի դահ-
լիճը հարկաւոր էր զարդարել առաջի-
կայ ընդհանուր ժողովի համար, որին
ներկայ էր լինելու և թագաւորը։ Պա-
լատի մեծ արարողապետը (հանդէսնե-
րի վերակացուն) գրաւոր կերպով
յայտնեց այս բանը Ազգային Ժողովի
նախագահ Բայիին, իսկ Բային պա-
տասխանեց, թէ ինքը չէ ստացել հը-
րաման թագաւորից, իսկ արարողա-
պետի գրութեան վրա պարտական չէ
ուշադրութիւն դարձնելու։

Բային նշանակեց հետևեալ նիստը



յունիսի 21-ին. բայց երբ պատգամա-
ւորները հաւաքուեցան, գտան դահլիճը
փակ և բոլոր շէնքը զօրքով շրջա-
պատուած: Զօրքերին հրամայուած էր որ
ոչ ոքի ներս չթողնել։ Այս բանը պատ-
գամաւորներին չվախեցրեց, այլ ընդ-
հակառակը մի նոր ույժ ներշնչեց նը-
րանց։ Նոքա ուղևորուեցին դ․ արձու-
թեանց համար նշանակուած քաղաքա-
պատական գնդախաղի սրահը։ Այս շի-
նութեան ամենամեծ դահլիճում, որ-
տեղ գնդակախաղն էր կատարւում,
հաւաքուեցին երրորդ կարգի պատգա-
մաւորները. բոլորն էլ վրդովուած էին
կառավարութեան վարմունքից և տաք
ճառերով բողոքում էին կառավարու-
թեան վարմունքի դէմ։ Նրանցից մէկը
առաջարկեց գնալ Փարիզ և դիմել ժո-
ղովրդի պաշտպանութեանը. իսկ մի
ուրիշը — Մունէ, պահանջեց որ ոչ ոք
տեղից չշարժուի և բոլորը երդուեն որ
չեն ցրուիլ, մինչև չը իրականացնեն

Ֆրանսիայի ժողովրդի ցանկալի սահմանադրութիւնը: Ժողովը հիացմունքով և ոգևորութեամբ ընդունեց այս առաջարկը և Բայլին բարձրանալով աթոռի վրայ, կարդաց երդումի հետևեալ ձևը՝ «Դուք երդւում էք այսօրւանից չցրւել, հաւաքւել ամէն տեղ, ուր կարելի կը լինի, մինչև որ թագաւորութեան սահմանադրութիւնը կազմւի և հաստատւի ամուր հիմքերի վրայ»:

«Երդւում ենք» պատասխանեցին բոլոր պատգամաւորները միացած։ Այս երդմանը արձագանք տւեց դրսումը հաւաքւած ժողովրդի ահագին բազմութիւնը և հազարաւոր բերաններ գոռացին «Կեցցէ Ազգային Ժողովը»: Ազգային ժողովի գնդակախաղի դահլիճում տւած երդումը ոչնչացրեց ֆրանսիական ժողովրդի հաւատը դէպի միապետութիւնը և ուժեղացրեց նրա կապը Ազգային ժողովի հետ:



Միւս օրը ժողովը կայացաւ սուրբ Լիւդովիկոսի եկեղեցում և Ազգային ժողովին միացան 149 հոգի հոգևորական պատգամաւորներից: Այսպէս զարգանում էր Ազգային Ժողովի ուժը և նշանակութիւնը: Վերջապէս յունիսի 23 ին կայացաւ վաղուց խոստացւած ընդհանուր ժողովը թագաւորի ներկայութեամբ, որը դիմեց պատգամաւորներին մի ճառով: Այս ճառում նա դատապարտում էր դասակարգերի մէջ առաջ եկած թիւրիմացութիւնը և յայտարարում թէ՝ «Այսպէս անւանւած Ազգային Ժողովի» վճիռները ոչինչ են համարւում, խոստանում էր մի քանի բարեփոխութիւններ, բայց այն ձևով և այնպիսի խօսքերով, որոնք ոչ մի կասկածի տեղ չէին թողնում որ այդ բոլորից ոչինչ չէ դուրս գալու:

Թագաւորը վերջացրեց իր ճառը հետևեալ խօսքերով. «Ես հրամայում

եմ ձեզ, պարոններ, ցրուել և վաղը հաւաքուել ամէն մի դասակարգ իւր նշանակուած դահլիճում։

Ազնուականները և հոգևորականները հնազանդուեցին Թագաւորի հրամանին—ցրուեցին, իսկ Ազգային Ժողովի պատգամաւորները լուռ մնացին իրանց տեղում։ Երկար չտևեց այս գերեզմանական լռութիւնը, վեր կացաւ Ազգ. Ժողովի պատգամաւոր Կոմս Միրաբօն, որը թէև ազնուական էր, բայց երրորդ դասակարգի կողմնակից էր։ Նա խզեց լռութիւնը մի ճառով, որի մէջ յայտարարում էր «Թագաւորը իրաւունք չունի Ազգային Ժողովին հրամայելու և ոչ էլ մի որևիցէ ընթացք տալու նրան, բռնակալների ուժերը վտանգաւոր են, թող ժողովը յիշէ իւր երդումը և ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չը դարձնելով շարունակէ իւր սկսած գործը»։

Այս ճառի ժամանակ ներս մտաւ



դահլիճ մեծ արարողապետը և դիմելով նախագահին հարցրեց—լսե՞ց արդեօք նա Թագաւորի հրամանը։ Կոմս Միրաբօն կտրելով նրա խօսքը ամպրոպային ձայնով ասաց. «Գնա յայտնիր քո տիրոջը, որ մենք այստեղ հաւաքուել ենք ժողովրդի կամքով և միայն սուինների ոյժը կարող է մեզ այստեղից դուրս վռնդել»։ Ժողովականները բուռն կերպով ծափահարեցին և պալատականը ստիպուած եղաւ հեռանալ։ Երբ Կոմս Միրաբօի խօսքերը յայտնեցին Թագաւորին, նա այնպէս շփոթուեց, որ կարողացաւ արտասանել միայն հետևեալ խօսքերը. «Եթէ երրորդ դասակարգի պարոնները չեն ցանկանայ մաքրել դահլիճը, թող նոքա մնան»։

Եւ Ազգային Ժողովը մնաց։ Մնաց որպէսզի վերջացնէ իւր գործը։ Եւ երբ պալատական կուսակցութիւնը Ազգային Ժողովը Թագաւորի կամքին

հնազանդեցնելու համար դիմեց զինւորական ուժի, նոցա փորձը վերջացաւ միապետութեան պարտութեամբ՝ մինչդեռ պալատը պատրաստում էր զինւորական ուժով խեղդել ժողովրդի բողոքը, Փարիզի բնակիչները ընդհանուր ապստամբութիւն առաջ բերին, որը վերջացաւ Բաստիլեայ բերդի կործանմամբ։ Երբ Լարոշֆուկոն զեկուցեց Թագաւորին այս յեղափոխութեան մասին. Թագաւորը վախեցաւ և խոնհարւեց։ Յուլիսի 15-ին նա իր երկու եղբայրների հետ միասին գնաց Ազգային ժողով, որի նիստը շարունակւում էր ամբողջ այդ փոթորկալից գիշերը։ Երբ Ազգային ժողովին իմացրին Թագաւորի գալու մասին, մի քանի ուրախութեան աղաղակներ լսւեցին, բայց այդ աղաղակները դադարեցրեց Միրաբոն, յիշեցնելով Փարիզում թափւած արիւնը և առաջարկեց Թագաւորին ընդունել խորին լռու-



թեամբ։ «Ժողովրդի լռութիւնը դաս է Թագաւորի համար»։

Գեթսեմանային լռութիւն էր տիրում, երբ Թագաւորը ներս մտաւ. այս բանը նրա վերայ մեծ ազդեցութիւն գործեց։ Իր ճառում Թագաւորը յայտնում էր որ նա ճանաչում է Ազգային Ժողովին, թէ ինքը նոյնպէս ազգի մի անդամ է և դողդոջուն ձայնով վերջացրեց. «Այսպէս ես ինձ յանձնում եմ ձեզ, ով իմ ժողովրդի ընտրեալներ»։ Այս խօսքերը հաշտեցրին ժողովրդին Թագաւորի հետ։ Իսկոյն ընտրւեց մի պատգամաւորութիւն, որը յայտարարելու էր Փարիզին թէ զօրքերը հեռացւում են և յետադէմ նախարարները հրաժարւում։ Ժողովուրդը պատգամաւորներին ընդունեց բուռն ոգևորութեամբ, բայց երբ յայտարարւեց թէ Ֆրանսիական Ազգային պահակների գնդին (կամաւոր զինւորական մի գունդ, որը Բաստիլեայի վերայ

յարձակվելուն մասնակից էր) Թագաւորը ներում է — ժողովուրդը զայրացաւ, որովհետև նա համարում էր, որ Ազգային պահակները բերդ առնելով մեղք չէին գործել։

---

## II

### Օգոստոսի չորսի գիշերը

Յուլիսի 14-ի յաղթական ապստամբութիւնը մեծ ազդեցութիւն գործեց երկրի բոլոր դասակարգերի վրայ։

Ամենից առաջ պալատական հին ազնուականները զգացին, որ նոր կեանք է սկսւում և գերադաս համարեցին փախչել երկրից, որպէսզի ազատուին գալիք փոթորիկներից։ Հին ցեղական ազնուականները փախան Ֆրանսիայից և արտասահմանում դաւադրութիւններ էին կազմում նոր կարգերի դէմ։ Գաւառում Միացածները ապաստողական



դիրքը բռնեցին. Թագաւորը և Թագուհին վճռեցին թողնել Ազգային Ժողովին ինքնագլուխ և սպասում էին յարմար րոպէի, որպէսզի միանգամից ոչնչացնեն ժողովի գործունէութեան արդիւնքը։

Ազգային Ժողովը մշակում է Ազգային սահմանադրութիւն և նրան իբրև նախաբան հրատարակեց «մարդու և քաղաքացու իրաւունքները», մինչդեռ ժողովում վիճում էին այս իրաւունքների մասին, Փարիզ էին հասնում մէկը միւսի յետևից մռայլ տեղեկութիւններ։

Յուլիսի 14-ը առաջ բերեց ընդհանուր բռնկումն։ Բոլոր քաղաքներն էլ ցանկանում էին հետևել Փարիզի օրինակին, ունենալ նոյն ձևի քաղաքային վարչութիւն և Ազգային պահակների գունդ, ինչպէս Փարիզը ստացաւ Բաստիլեան կործանելուց յետոյ։

Բայց աւելի մեծ էր գիւղացի ժո-

ղովրդի վրդովումը։ Գիւղացիք Բաստիլիայի կործանումը համարում էին հողատիրութեան և ճորտութեան քանդելու ազդանշանը։ Ամբողջ երկրի գիւղացիութիւնը ապստամբեց հողատէրերի դէմ, թէ ազնուականների դէմ և թէ հոգևորականների։

Իրանց դարևոր գերութեան զարհուրելի վրէժը լուծեցին գիւղացիները։ Ազնուականների ամրոցները և բնակարանները բռնի կերպով տիրապետում և կործանում էին։ Նոյն բաղդին էին ենթարկւում հոգևորականների բնակարանները և վանքերը։ Երկար շաբաթներ գիշերները լուսաւորւում էին գիւղացիների ձեռքով հրդեհուած վանքերի ամրոցների բոցերով, օրինակ՝ Ֆրանշ-Կոնտէ նահանգում ամեն գիշեր մի ամրոց էր հըրդեհւում, մի ուրիշ նահանգում — Դոֆինէում 14 օրւայ ընթացքում հրդեհւեց 270 ամրոց։ Ժողովրդին առել



անձնաւորութիւնները մահւան էին դատապարտւում։

Ազգային ժողովը հասկացաւ, որ այս բռնկումներին վերջ կարելի է տալ միայն վճռական միջամտութեամբ։ Սկզբում քննում էին հողատիրութեան ոչնչացման օրէնքի առանձին յօդուածները։ Բայց ուժեղանում էր գիւղացիների շարժումը, այնքան աւելանում էր ազնուականների վախը, աւելանում էր նաև ժողովրդի էներգիան։ Եւ ահա օգոստոսի 4-ի երեկոյեան նիստի ժամանակ տիրեց բոլորին մի ընդհանուր ոգևորութիւն։ Սկսեց մի ոգևորուած ճառով մի ազնուական — Դիւկոմս-դէ-Նոյա ասելով, որ այլ ևս աւելորդ է խօսել զէնքի ուժով գիւղացիների շարժումը զսպելու մասին, այլ հարկաւոր է ոչնչացնել այն անարդարութիւնները, որոնք առիթեցին ժողովրդին ապստամբութեան դիմել։ Առաջարկում էր ոչնչացնել բո-

լոր հողատիրական իրաւունքները և այն պարտականութիւնները, որոնց լծի տակ տքնում էր գիւղացին։ Յայտարարեց, որ ինքը և իրան ընտրող ազնուականների կողմից հրաժարւում է հողատիրութեան բոլոր իրաւունքներից։

Նրանցից յետոյ վեր կացաւ մի ուրիշ ազնուական — Լէգիւէն-դէ-Կէրանգալ՝ սա իւր ճառի մէջ բացատրեց հողատիրութեան և ճորտութեան վընասակարութիւնը, և առաջարկեց ոչնչացնել այդ իրաւունքները։ Ամբողջ ժողովին տիրեց մի աննկարագրելի ոգևորութիւն. մէկը միւսի յետևից շտապում էին հրաժարւել իրանց իրաւունքներից։ Մէկը միւսից առաջ ընկնելով հրաժարւում էր իւր արտօնութիւններից։

Մինչև կէս գիշեր բոլոր գոյութիւն ունեցող արտօնութիւնները և իրաւունքները ոչնչացած էին։ Ազնուակա-



նութիւնը հրաժարւեց իւր հողատիրութեան իրաւունքներից, հոգևորականութիւնը տասանորդից և քաղաքները ասնաֆներից։

Այսպէս՝ ժողովի բուռն ծափահարութեան հետ միասին հիմք դրւեց բոլոր մարդկանց քաղաքացիական հաւասարութեանը։ Այն, ինչ որ սովորական ժամանակ մի քանի ամիսների և գուցէ տարիների գործ էր, յեղափոխութեան ժամանակ կատարւե՛ց մէկ գիշերում, որը լուսաւորւած էր գիւղացիների ձեռքով այրւած ամրոցների հրդեհի բոցերով։

Թարգմ. Զ. Ա.

## Ժողովուրդն ու կառավարութիւնը Ռուսաստանում

Ռուսաստանում, յեղաշրջումից առաջ, երկիրը կառավարւում էր անսահման իշխանութեան տէր ինքնակալ միապետի ձեռքով։ Նրա անունով էլ հրատարակւում էին երկրի բոլոր օրէնքները։ Նա չէր բաժանում իր իշխանութիւնը ժողովրդի հետ, ուստի և կոչւում էր միահեծան, ինքնակալ միապետ։

Կառավարութեան այս ձևին հիմք դրւեց Ռուսաստանում ԺԶ. դարից։ Բայց առաջ բոլորովին ուրիշ կարգեր էին տիրում։ Առաջ Ռուսաստանում էլ գոյութիւն ունէր ռամկավարութիւն և այն լիակատար ձևով։ Բարձրագոյն իշխանութիւնն ամբողջապէս պատկանում էր ժողովրդին և այդ իշխանութիւնը գործադրւում էր անմի-



ջական ձևով։ Այսպէս էր Ռուսաց պատմութեան առաջին, հնագոյն Կիեան — շրջանում։ Այն ժամանակ ռուս ժողովուրդն ինքն էր կառավարում երկիրը և ինքը հրատարակում օրէնքներ։ Բոլոր չափահաս և իրաւատէր տղամարդ ազգաբնակութիւնն հաւաքւում էր քաղաքի հրապարակի վրայ և այնտեղ վճռում բոլոր հասարակական հարցերը։ Այսպիսի ժողովրդական ժողովները կոչւում էին խորհուրդներ (вѣче) և գոյութիւն ունէին այն ժամանակւայ ռուսաց երկրի բոլոր շրջաններում խորհրդակցական կառավարութիւն։ Առանձնապէս լայն ու լիակատար զարգացում ստացաւ Նովգորոդում և Պսկովում, ուր նա շարունակւեց մինչև ԺԶ դարը։ Միւս շրջաններում այդ խորհուրդները կազմալուծւեցին աւելի վաղ (ԺԳ. ԺԴ-դ.)։

Այդ խորհուրդներում ժողովուրդը վճռում էր պատերազմի ու խաղա-

ղութեան, օրէնքների հրատարակութեան, ընթացիկ գործերը կառավարող պաշտօնեաների ընտրութեան և այլ հարցեր։ Հէնց այդտեղ էլ ընտրըւում էր իշխան պատերազմում զօրքին առաջնորդելու և ընթացիկ գործերը ղեկավարելու համար։ Իշխանը վայելում էր բարձրագոյն իրաւունքներ, բայց նա երբէք բարձրագոյն իշխանութեան միակ ներկայացուցիչը չէր, նա մինչև անգամ չէր էլ բաժանում այդ իշխանութիւնը ժողովրդի հետ, այլ միայն որոշ արտօնութիւններ, իրաւունքներ էր ստանում ժողովրդից բարձրագոյն իշխանութեան մէջ։

Գահ բարձրանալով, կամ ինչպէս այն ժամանակ էին ասում՝ թախտ նստելով. իշխանն համբուրում էր խաչը, երդւում էր ժողովրդի առաջ արդարութեամբ կառավարել երկիրը, համաձայն ընդունուած կարգերի և օ-



րէնքների։ Նովգորոդում ընտրուած իշխանի հետ մինչև անգամ գրաւոր պայման էին կապում։ Այդ պայմանագրի մէջ մէկ-մէկ թւում էին իշխանի բոլոր իրաւունքներն ու պարտաւորութիւնները և ի նշան այդ պայմանը սրբութեամբ կատարելու իշխանն ըստորագրում էր պայմանագիրը։ Պայմանը քանդելուն համար իշխանը զըրկւում էր իր իրաւունքներից և յաճախ ժողովրդի իրաւունքներին ձեռք տւողին զրկում էին գահից, կամ ինչպէս այն ժամանակ էին ասում «ճանապարհ էին ցոյց տալիս»։

Ժողովուրդն իր իրաւունքն համարելով իրեն համար իշխան ընտրելը, նա իրան իրաւունք էր համարում նաև նրան հեռացնելը և յաճախ օգտւում էր այդ իրաւունքից։ Ժողովուրդն երբէք անուշադիր չէր թողնում իր ընտրած իշխանի կառավարութիւնը, այլ աչալուրջ հետևում էր նրա գործու-

նչութեանն և կարևոր դէպքում դըրկում նրան գահից։ Եւ այդպէս Կիևեան գերիշխանութեան շրջանում բարձրագոյն իշխանութիւնն ամբողջապէս պատկանում էր ժողովրդին, որից նա օգտւում էր անմիջապէս, առանց կողմնակի միջնորդների։

Մոսկւայի գերիշխանութեան շրջանում իրերի դրութիւնը փոխւեց։ Մոսկովեան իշխաններն՝ Ռուսիայի միացնողներն, իրենց հետ բերին նոր հասկացողութիւններ, նոր խնդրունքներ, որոնց համաձայն և հիմնւեցին քաղաքական նոր կարգեր, կառավարութեան նոր ձև։ Մոսկովեան իշխաններն սկսեցին գահին տիրանալ ոչ ժողովրդի ընտրութեամբ, այլ սկզբներում՝ մինչդեռ տիրապետում էր թաթարական իշխանութիւնը—խանի ողորմածութեամբ և ապա սկսեցին գահը յանձնել ժառանգէ-ժառանգ՝ հօրից որդուն։ Ժողովրդական խորհուրդը



(вѣче) վաղուց անհետացել էր, թաթարական տիրապետութեան ժամանակ, երբ խանը ռուսական երկրի միահեծան տէրն էր, ժողովուրդը կամաց-կամաց կորցրեց իր մասնակցութեան իրաւունքը երկրի կառավարութեան գործում և ապա նոյնիսկ բոլորովին հեռացւեց գործերից, զրկւեց իր նախկին իրաւունքներից։ Իսկ երբ ընկաւ թաթարական տիրապետութիւնը, Մոսկւայի իշխանները, հպարտացած, թէ իրանք են փրկել Ռուսաստանը թաթարական լծից, չը յիշեցին անգամ ժողովրդի իրաւունքների մասին։ Ընդհակառակը նրանք ամեն կերպ աշխատեցին բնաջինջ անել իրանց համար ատելի ու զզւելի ռամկավարութեան վերջին մնացորդներն անգամ։ Նրանք բարձրագոյն իշխանութիւնն անմիջապէս, իր լիակատար կազմով ստացան թաթարական խանից և իրանք էլ խանի նման դարձան

բռնակալներ, չուզեցին նախկին իշխաններին գոնէ մասամբ նմանել կառավարութեան ջանքերը բաժանել ժողովրդի հետ։ Նրանք ուզեցին ամբողջ պետութիւնն իրենց «բռի մէջ առնել»։

Մեծ իշխան տիտղոսի փոխարէն, ինչպէս կոչւում էին նրանց իշխանները Կիեւեան ռուսիայում, Մօսկովի իշխանն սկսեց իրան անուանել Թագաւոր համայն Ռուսիայի, ինքնակալ, որ թագաւորում է «ողորմութեամբն Աստուծոյ» և ոչ ժողովրդի ընտրութեամբ և այն օրւանից սկսեցին իշխանները շքեղ հանդէսով օծւել Թագաւոր։

Նոքա այլեւս չէին երգւում ժողովրդին, ինչպէս երգւում էին հին ռուսական իշխանները, այլ ընդհակառակը ժողովուրդն սկսեց երգել նրանց ամենահպատակ, ստրկական ձեւով։

Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ, Յունաստանից եկած հոգեւորականութիւնն իր հետ Ռուսաստան բե-



րեց և յունական ուսմունքն իշխանութիւնների մասին ընդհանրապէս և արքայական իշխանութեան մասին մասնաւորապէս։ Եւ ահա այդ հոգեւորականութիւնն սկսեց քարոզել, թէ «իշխանութիւնն Աստուածային տուրք է ու չկայ մի իշխանութիւն, որ Աստծուց չը լինի», ուստի «ով որ հակառակի իշխանութեան, նա հակառակ կը լինի և Աստծու», Աստծուց վախեցէք, Թագաւորին պատւեցէք», մինչև անգամ անարժաններին, վատերին, որովհետեւ վատ Թագաւորներին Աստուած ուղարկում է մարդոց մեղքերի համար և այլն, և այլն։ Մոսկւայի իշխանների քմքին շատ դիւր եկաւ այն ուսմունքը, որը շատ լաւ իւրացրին նոքա ու վերագրեցին իրանց։ Շատ շուտով ժողովրդական ընտրեալներից նոքա «ողորմածութեամբն Աստուծոյ» դարձան ինքնակալ Թագաւորներ ու ժողովրդին սկսեցին նայել

«իբրև իրանց մշակների» սորուկների վրայ, ինչպէս ասել էր Գորկին:

Սակայն XVII դարի սկզբներում Մոսկովի Ռուրիկովիչների իշխանական տան վերջին թագաւորը մեռաւ առանց արու ժառանգի, թագաւորող տոհմն ընդհատուեց: Թագաւոր չը կար և բարձրագոյն իշխանութիւնը նորից անցաւ ժողովրդի ձեռքը: Ժողովուրդը ոտքի կանգնեց և իր բաղդի որոշողը դարձեալ ինքը դարձաւ, մեռած ռամկավարութիւնը նորից յարութիւն առաւ, սակայն երկրի բարձրագոյն կառավարութիւնն իսկոյն նա յանձնեց իր ընտրեալին: Այսպէս թագաւոր ընտրեցին Գոդունովը, Շույսկին, վերջապէս Ռոմանովները: Թագաւոր ընտրելով. հանդերձ ժողովուրդն ինքը չէր հրաժարւում պետական գործերից մի կողմ չէր քաշւում: Նա շարունակում էր օգնել իր ընտրեալներին երկիրը կառավարելու գործում: Այդ



օգնութեանն առանձնապէս կարիք էր զգում Միխայիլ Ռոմանովը, մի անփորձ մարդ, որ յանձն առաւ քայքայուած պետութեան ղեկը և նրա թագաւորութեան ժամանակ, մանաւանդ սկզբի տարիներում, ժողովուրդը մըշտական մասնակցութիւն ունէր երկրի կառավարութեան գործում: Սակայն յարութիւն առած ռամկավարութիւնն այս անգամ բոլորովին ուրիշ ձև ընդունեց: Ողջ Ռուսիան միացել էր ու լայնարձակ տարածուել ամեն կողմ: Բոլոր ժողովրդին՝ տուն գլուխ մի մարդ հաւաքել մի տեղ-անհնարին էր: Ուստի սկսեցին ամեն տեղից ներկայացուցիչներ ընտրել և նրանց ուղարկել իրանց կողմից Մոսկւայի ժողովրդական խորհրդին մասնակցելու այսինքն ռամկավարութիւնն ստացաւ միջնորդական ձև—ժողովրդական ներկայացուցչութեան-ձև: Ժողովրդական այդ նոր խորհուրդները ստացան և

նոր անուն՝ համայնական ժողովներ (земскіе сборы)։ Այսպէս համայնական ժողովներն Ռուսաստանում ժողովրդական ներկայացուցչութեան առաջին փորձն եղան։ Առաջին ժողովը գումարուեց XVI դարում, բայց չափազանց թերի, անկատար ձեւով, որն ի հարկէ շատ հեռու էր ժողովրդական ներկայացչութեան ձեւից։ Այդ ժողովների մասնակցութիւնը երկրի կառավարութեան գործում կայանում էր նրանում, որ խորհուրդներ էր տալիս թագաւորին։ Թագաւորն երբեք մասնակից չէր անում նրանց բարձրագոյն իշխանութեանն, այլ միայն ի դիմաց համայնական ժողովի անդամների լսում էր ռուս ժողովրդի ձայնն և երբեմն բարեհաճում էր ուշադրութեան արժանացնել այդ ձայնը։ Բոլոր այն փորձերը, որ Ռիւրիկովիչներիտան անկումից յետոյ գործ դրուեցին որպէսզի ընտրուած թագաւորը գրաւոր



կերպով պարտաւորուի բարձրագոյն իշխանութիւնը բաժանել ժողովրդի հետ, այսինքն երկիրը կառավարէ ժողովրդական ներկայացուցիչների հետ միասին, անյաջող անցան։ Համայնական ժողովները խորհուրդներ տալուց այն կողմը չանցան։ Իսկ, երբ թագաւորների իշխանութիւնը մի փոքր ուժեղացաւ ամրացաւ ու պետութիւնը կազդուրուեց խռովութիւններից, ժողովուրդն այդ խորհուրդներ տալու իրաւունքից էլ զրկուեց։ Դադարեցին այլեւս համայնական ժողովներ հրաւիրելուց, դադարեցին ժողովրդին լսելուց, նոյն իսկ բոլորովին մոռացան նրան։ Եւ այն ժողովուրդը, որ մի ժամանակ օգտուում էր ինքն իր բախտը որոշելու, ինքն իրեն կառավարելու իրաւունքով, ահա այդ ժողովուրդը խառնակ ժամանակների ընթացքում շատ շուտով ԺԷ. դարի կէսին դարձաւ բարձրագոյն իշխանութեան խոնարհ, հլու-հնազանդ ծառան։

Կառավարութեան այդ ձեռը Ռուսաստանում շարունակեց մինչև 1905 թուականը. մինչ այդ կատարուած զանազան ազատագրական փորձերը ճընշւում էին ամենախիստ միջոցներով։ Վրայ հասաւ Ռուս-Ճապոնական պատերազմը և Ռուսաստանի խայտառակ պարտութիւնը սովորեցրեց, թէ անկարելի է այլևս այդ դրութեամբ երկիրը կառավարել և Նիկոլայ II-ը ստիպուեց ականջ դնել ժողովրդի արդար պահանջներին։ Հրատարակեց 1905 թ. Հոկտ. 17-ի հրովարտակը, խոստանալով սահմանադրական ազատութիւններ։ Սակայն այդ խոստումները չիրագործուեցին։ Ժողովրդական յոյսերի արտայայտիչ Առաջին դուման արձակուեց։ Երկրորդ դուման միևնոյն վիճակին ենթարկուեց և ժողովրդական ոյժը յաղթելու անզօր կառավարութիւնը 1907 թուի յունիսի 3-ի ակտով խլեց ազգաբնակութեան



տրուած իրաւունքների մի մասը՝ օրէնսդրական գործունէութեան վերաբերեալ։ Տասն տարուայ ընթացքում կամաց կամաց ժողովրդից խլեց նրա ձեռք բերած իրաւունքները։ Երկիրը դարձեալ մատնուեց կամայականութեան յորձանքին։ Իշխանութիւնը զգաստացնելու բոլոր փորձերը ապարդիւն անցան և համաշխարհային մեծ պատերազմի ժամին, այդ իշխանութիւնը նեւաց[illegible]արոյակէս ընկած, ժողովրդից բաժանուած։ 1917 թուի փետրուարի վերջերին տեղի ունեցաւ ռուսական մեծ յեղափոխութիւնը և ժողովուրդը վերստին ձեռք ձգեց իր իրաւունքները և երկրի կառավարութեան ղեկն իր ձեռքն առաւ։

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐՋԱԿԱՆ ՁԵՒԵՐԸ

Կար ժամանակ, երբ թագաւորի իւրաքանչիւր հրամանը անդառնալի պատգամ էր, հարկադրուած՝ գործադրելու որեւէ գնով, սակայն ժամանակի ընթացքում թագաւորը իր անպատասխանատու հեղինակութիւնը կամաց կամաց կորցրեց և ժողովուրդը հետզհետէ տիրացաւ իր խլուած իրաւունքներին։

Ֆրանսիայի ժողովուրդն էր, որ առաջին անգամ քաջութիւն ունեցաւ բռնապետութեան դէմ դուրս գալ իր ձայնը լսելի անելու և պահանջելու այն առանձնաշնորհումները, որոնք իր արդար իրաւունքներն էին, իբր անհատ և այն դերը՝ կառավարութեան մէջ, որ իրան, ժողովրդին պէտք է լինէր։ Ֆրանսիան թէև արիւնով ո-



ղողեց, Նապոլէոնները բարձրացան և ընկան անխնայ, թէ կառափնարանները սարսափի մէջ ձգեցին ամբողջ երկիրը, սակայն վերջը ժողովուրդը յաղթական հանդիսացաւ և տէր եղաւ իր արդար իրաւունքներին։ Ֆրանսիային հետևեցին ուրիշները և ԺԹ. դարի մէջ թագաւորների ազդեցութիւնը համեմատաբար շատ թուլացաւ կառավարութեան մէջ։

Թէև ամէն տեղ գրեթէ ընդունուած սկզբունք է, որ ժողովուրդը պէտք կառավարէ ինքն իրան, բայց տակաւին այս խնդիրը վերջնական լուծում չէ ստացել։ Եւ այժմս ժողովուրդները մի միջոց միայն ունեն կառավարութիւնը իրենց ազդեցութեան տակ պահելու, այդ քուէն է։

Տարբեր երկրներ տարբեր քուէի իրաւունքներ են տուել իրենց ժողովրդին։

Իտալիայում քուէ տալու իրաւունք

ունի ամեն չափահաս բնականոն (նորմալ) տղամարդ, որ գրել կարդալ գիտէ:

Գերմանիայում քվէի իրաւունքը մեծ մասամբ հարուստներին էր տրւած մինչև վերջին տարին: Գերմանիայում ժողովուրդը երեք մասի է բաժանւում. առաջինը հարուստ հողատէրերը և ազնուականները, երկրորդը վաճառականները և գործատէրերը և երրորդը՝ աղքատ ու աշխատաւոր ժողովուրդը: Առաջին երկու դասակարգային շահերը մէկ լինելով, ձայները միացնում և խեղդում են երրորդ դասակարգի ձայնը:

Աւստրիայում մինչև 1906 թւականը պարլամենտ ընտրելու իրաւունքը հարուստներին էր տրւած. բայց աշխատաւոր դասի արդար կռւով ահեղ բողոքը ստիպեց կառավարութեանը, վերջապէս որ թոյլատրէ, ժողովրդի մեծամասնութիւնը կազմող դասակարգի մասնակցութիւնը ընտրութեան մէջ,



և 1907 թւին իրաւունք տւեց բոլոր չափահաս բնականոն մարդկանց մասնակցելու ընտրութիւններին:

Ֆրանսիայում քվէի իրաւունքը բոլոր չափահաս մարդկանց տալուց ջոկ, Հանրապետութեան նախագահի իրաւունքները ևս շատ սեղմւած են:

Անգլիայում ևս ժողովրդի կամքը գերիշխան է, բացի քվէի իրաւունքից, որ բոլոր չափահաս և բնականոն տղամարդիկ են վայելում, ժողովրդին իրաւունք է տրւած ճշտելու այն բոլոր խնդիրները, որոնց վրայ Լօրդերի և Ներկայացուցիչների ժողովները չեն համաձայնւում: Երբ մի խնդիր քւէարկւում է Ներկայացուցիչների ժողովում, ուղարկւում է Լօրդերի Պալատը հաստատելու, որը իրաւունք ունի հաստատելու կամ մերժելու: Չհաստատելու դէպքում խնդիրը նորից յետ է գալիս Ներկայացուցիչների ժողովին: Եթէ այստեղ նորից վը-

ճուլ այդ խնդիրը, այս անգամ թագաւորը արձակում է Ներկայացուցիչների Ժողովը և ընտրել է տալիս նորը։ Ժողովուրդն այս անգամ իր կարծիքն յայտնում է ընտրելով այն մարդկանց, որ ժողովրդի մեծամասնութեան կողմն են ներկայացնում։ Եթէ նոր ժողովը ևս համակարծիք գտնուի նախկին ժողովին, այն ժամանակ Լորդերի Պալատը պարտաւոր է հաստատել վճռուած խնդիրը։

Ռուսաստանը ամենից ուշ մտաւ քաղաքակիրթ ազգերի շարքը։ 1905 թուականից ունեցաւ Պետական Դումա, որը զբաղւում էր զանազան օրէնքների մշակութեամբ և քննութեամբ։ Այդ մշակւած օրէնքները յետոյ մըտցւում էին Պետական Խորհուրդ և որի հաստատութիւնից յետոյ միայն ներկայացնում էին կայսեր հաստատութեան։ Իսկ առանց այս վերջինների հաստատութեան ոչ մի օրէնք ոյժ չէր



ստանում, թէպէտ և նրանք հաստատութիւն գտած լինէին Պետական Դումայում։ 1917 թւի յեղափոխութիւնից յետոյ, կառավարութեան ղեկն անցաւ ժողովրդի ձեռքը և ժողովուրդն ստացաւ քւէի ազատ իրաւունք։ Ռուսաստանում այժմ քւէի իրաւունք ունին բոլոր բնականոն երկսեռ անձինք անխտիր։ Քւէարկութիւնը կատարւում քառանդամ ֆօրմուլայով՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քւէարկութեամբ։

Բելգիայում ևս քւէի իրաւունքը բարձր դասակարգի ժողովրդին աւելի է տրւած. հարուստները և համալսարանական մի կարգ մարդիկ մի-մի քւէ աւելի ունին, քան հասարակ մահկանացուները։ Բելգիան ինչպէս և Աւստրիան տուգանքի են ենթարկում այն մարդկանց, որոնք իրաւունք ունին և զլանում են քւէարկութեան մասնակցել։

Զւիցերեան ամենից ազատական երկիրը լինելու պատիւն ունի։ Զւիցերեան է, որ ամենից խաղաղ ժողովըրդական կառավարութիւն ունի։ Ժողովուրդը ոչ միայն ուղղակի է ընտրում Պարլամէնտի երկու ճիւղերն էլ, այլ իր քւէով իշխում է նրանց գործերի վըրայ։ Երբ յիսուն հազար բնակիչ միաձայն պահանջեն, որ մի նոր օրէնք գրւի կամ մի հին օրէնք վերացւի, ըստ Սահմանադրութեան Պարլամէնտը ժողովրդի պահանջին տեղի տալու ըստիպւած է. եթէ նոյն իսկ անդամները բոլորն էլ հակառակ լինեն շարժման։

Ռեֆերէնդումը (ժողովրդական ուղղակի օրէնսդրական ձևը), որ տեղի ունի Զւիցերիայում և Միացեալ Նահանգների մի քանի նահանգներում ժողովրդին աւելի իրաւունք է տալիս։ Այս օրէնքի համաձայն եթէ 30,000 քւէներ պահանջեն, որ այս ինչ օրէնքը, որ ընդունւած է Պարլամէնտի կողմից, ժողովրդի քւէին ենթարկւի, պահանջը գործադրւում է ժողովուրդը կամ ընդունում է և կամ մերժում։



Ամերիկայում Միացեալ Նահանգների օրէնսդիր մարմինն է Վեհաժողովը, որ բաղկանում է երկու մասերից, Ծերակոյտ (Սենատ) և Երեսփոխանական Ժողով։

Երեսփոխանական ժողովը ընտրւում է ամեն երկու տարին մի անգամ. անդամներն ընտրւում են այլևայլ Նահանգների ժողովրդի կողմից։ Քւէ տալիս են նրանք, որոնք իրաւունք ունեն իրենց գտնւած Նահանգի Վեհաժողովի բազմանդամ մասին անդամներ ընտրելու։

Որ և է մէկը, որ 25 տարեկան չէ, եօթը տարի Միացեալ Նահանգների քաղաքացի չէ եղել, և ընտրած ժամանակ ինքը ընտրող Նահանգի բնակիչը չէ, չի կարող երեսփոխանական ժողովի ընտրելի լինել։

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յեղափոխութիւնը իր լուսեղէն ժամերով փառքի պսակ է հիւսում տանջւող ժողովուրդների ճակատին։— Այդ ազատութիւնն է։

—

Յեղափոխութիւնը պետութիւնների վարչական եղանակների մէջ գոյացած փտախտի ջնջելու է համար սահմանած անհրաժեշտ վիրահատութիւնն է։

—

Յեղափոխութիւնը խաչւած Ազատութեան խորանի առաջին մատուցւած փառաբանութեան աղօթքն է։

—

Յեղափոխութիւնը մի անհուելի հսկայ հեղեղ է, որ իր հոսանքի մէջ է առնում և տանում բռնակալ երկրի բոլոր աղտեղութիւնները։

—

Յեղափոխութիւնը խիստ պայքար է բռնակալութեան դէմ. ոչ յուսահատւել



գիտէ և ոչ յետ դառնալ. և երբ Նրան յաղթում է, ինքն էլ դադարում է գոյութիւն ունենալուց։

—

Յեղափոխութիւնը արև է, երկնքից արիւնի անձրև տեղացած պահուն ծագած։ Նրա ճառագայթները բեկբեկւում են առա կայլակների միջից և ձևացնում են գիւթանրաշ մի գունզգոյն ծիածան—Ազատութիւնը։

—

Յեղափոխութեան գրիչը՝ կրակն արծարծող փքոցն է։ Զոհեմութեամբ պէտք է շարժել նրան, ոչ կրակն անցնելու, ոչ էլ մոխիրով ծածկելու համար ամեն կողմ։ Ս. Ս.

—

Յեղափոխութեան մէջ պատասխանատւութիւն չկայ. ոչ ոք անմեղ կամ յանցաւոր չէ։ Գլադստոն

# ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Պատերազմը արիւնի գետակ է, որի վրայ դիակի և զէնքի հիմքերով ազգերի փառասիրութիւնը կամուրջ է ձգում վրայից անցկացնելու Յաղթութիւնը: Շուտ անցիր, ով Յաղթութիւն, այդ կամուրջը մայրերի արցունքով է յատակուած:

—

Պատերազմը միակ պտուղն է քաղաքականութեան դժոխային ծառի, որը ազգերը շարունակ արիւնով են ոռոգում:

—

Զինուորների դիակները գերագոյն պատուանդաններ են, որ մայրերը, քոյրերը, այրիները և որբերը արտասուքով կախում են իրենց Հայրենիքի կրծքին, նրա մշտնջենաւոր փառքի համար:



Բնութիւնը կարծես դիտմամբ ճերմակ է արել մայրերի կաթը՝ որպէսզի տղաները «արիւն»-ի չվարժւին: Քաղաքակրթութիւնը սակայն դեռ յամառում է յանձնարարել խեղճ մարդկութեան կարմիր կաթը ծովերի և ցամաքների մի քիչ աւելի տիրանալու—իր ծարաւին լոկ յագուրդ տալու համար:

—

Պատերազմի արւեստը բժշկութեան է նմանում. մահացու և կենդակարծ է միանգամայն:

—

Պատերազմներն սկսւում են իշխանների փառասիրութեամբ, վերջանալու համար... ժողովուրդների թշւառութեամբ:

—

Աշխարհակալների ոտքի տակ՝ մեռնողն Ազատութիւնն է մանաւանդ:

## ՀՈՂԸ

Ռուսաստանի 49 նահանգներում հաշւում են 391 միլիօն դեսիատին հող, որից պետութեանը պատկանում է 150 միլ. դես., Ուդելի վարչութեանը 8½ միլ. դես., եկեղեցիներին և վանքերին 9 միլ. գիւղական հասարակութիւններին 131 մ. և մասնաւոր մարդկանց 93 միլ. դես. հող. բացի այդ մասնաւոր ընկերութիւնները ունէին Եւրոպական Ռուսաստանում մօտ 2 միլ. դես. կալւածներ։

Մասնաւոր սեփականատէրերի թիւը հասնում է 481,358 հոգու, որոնք ունէին 91 միլ. 605 դես հող։

Մանր հողատէրերը, որոնք իրենց աշխատանքով են հողը մշակում, (մինչև 10 դես.) 266 անգամ շատ են, քան խոշոր հողատէրերը, որոնք ունեն 10000 դես. հող և մանր հողատէրերի հողերի քանակը 28 անգամ քիչ է քան



թէ խոշոր հողատէրերինը։

Խոշոր կալւածատէրերից ամեն մէկին միջին հաշւով ընկնում է 26, 470 դես. իսկ մանր հողատէրերից ամեն մէկին միայն 3 դես։

### ԻՆՉ Է ՀՈՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ
(օբշչինա)

Երբ մի որևէ հողային տարածութիւնից դրանց բազմաթիւ տէրեր օգտւում են միասին, այդ խմբակցութիւնը կոչւում է հողային համայնք կամ օբշչինա։ Հողային օբշչինան երեք տեսակ է լինում. 1) պարզ, երբ հողը պատկանում է մի գիւղի գիւղացիներին, 2) բարդ, երբ որևէ մի հող պատկանում է մի քանի գիւղերին և 3) բաժանեալ, երբ մի որևէ հողից օգտւում է գիւղի միայն մի մասը։ Համայնքը իրաւունք ունի իրեն պատկանող հողը կարգադրել ըստ իր հայեցողութեան, այսինքն նա կամ հողը

բաժանում է այս կամ այն տան վրայ կամ տալիս է ընդհանուրի տիրապետութեանը կամ այգ հողը տալիս է կապալով կողմնակի անձանց։ Համայնքը իր հողերը կարող է ծախել միմիայն կառավարութեան թոյլտւութեամբ։ Հողերից օգտւելու եղանակը որոշւում է համայնքի անդամների 3/4 ձայների մեծամասնութեամբ։

## ԻՆՉ Է ՆԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ

Հողերի նացիոնալիզացիայ կամ ազգայնացում նշանակում է բոլոր մասնաւոր հողերի խլումը և դրանց պետական սեփականութիւն դարձնելը, որով հողերը դառնում են ողջ ժողովրդի և ազգի հարստութիւն։ Սակայն հողերը պետական դառնալով, ժողովուրդը իրաւունք չունի բաժանել նրան իր մէջ ըստ իր պահանջի կամ հողային կարիքի, ոչ. հողերի



ազգայնացման ժամանակ ողջ հողերի կառավարութիւնը անցնում է պետութեան ձեռքը. Նա իրաւունք չունենալով դրանց վաճառել, կարող է կապալով տալ, որով ամենալաւ հողերը կընկնեն կապիտալիստների ձեռքը, իսկ վատ հողերը աղքատ փողագուրկ դասակարգի։

Այսպիսով հողերի ազգայնացումը կամ հողերի նացիոնալիզացիան ոչ այլ ինչ է, եթէ ոչ հողերի կենդրոնացում մի կենտրոնական իշխանութեան իրաւունքի տակ։

## ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼԻԶԱՑԻԱՆ

Հողերի սօցիալիզացիա նշանակում է բոլոր հողերի համայնական շինելը, երբ ողջ հողերը անցնում են ժողովրդական սկզբունքներով կազմակերպուած ողջ ժողովրդի ձեռքը և այդ հողերից նա օգտւում է որպէս համաժողովրդական պահեստից՝ երկրագործա-

կան նպատակների համար։ Սօցիալիզացիայի ենթարկուած հողերը չեն գըտնւում կենտրոնական իշխանութեան իրաւասութեան տակ, այլ պետութեան մէջ եղած այս կամ այն երկրի համայնքի ինքնավար մարմինների՝ բոլորովին անկախ կենդրոնական իշխանութեան կարգադրութիւնից։ Ուրիշ խօսքով հողերի սօցիալիզացիան հողերի բաշխման ապակենտրոնացումն է, իսկ նացիոնալիզացիան—հողերի կառավարութեան կենտրոնացումը։



## ՀԱՅՆ

## ՈՒ ԻՐ ԴԵՐԸ

Արեւմտեան Ասիան իր աշխարհագըրական դիրքով աշխարհակալների անցուդարձի ճանապարհ է եղել եւ իր երկրի բերրիութեան պատճառով՝ նախանձի պատճառ դըրացի հզօր տէրութիւնների... որով եւ այստեղ աճող բազմաթիւ ու բազմազան մանր ազգութիւններն եւ իշխանութիւնները այս շարունակական ռանակռուութիւնների եւ հարւածների հետեւանքով՝ ժամանակաւոր գոյութիւն եւ փայլ են միայն կարողացել ունենալ։ Այդպէս, ուր են Մարերը, Ասորաբաբելացիք, Փիւնիկեցիք, Խետացիք, Փոքր Ասիայի եւ ու դեռ փոքր ազգերը՝ Փռիւգեցիք, Լիդացիք, Բիւթինացիք, Գոնգացիք, Ալանները, Ագւանները եւ այլն. այդ բոլոր ազգութիւնները ցրւած եւ

ուրիշ ազգութիւնների հետ խառնուած են և իբրև ազգ անհետացած։ Դրանցից միայն հայն է, որ կայ ու կմնայ, մեծ մասամբ կպած իր մայր հայրենիքին, խօսելով իր նախահայրերի բարբառը, պահելով իր ազգային պատմութիւնը ու աւանդութիւնները և սրտով կպած իր ազգային նախնական եկեղեցուն, և այս ամենը շնորհիւ իր բարոյական յատկութիւնների, այսինքն հայրենասիրութեան, ազգասիրութեան, քաջութեան, աշխատասիրութեան, չարքաշութեան խնայողութեան, որով և ճկուն ազգ է կոչուել պատմագրների կողմից։

Հայը, որ երբեմն Աթէնքին Պրոյերեսիոս է տուել, որ Հռովմի մէջ ճարտասանութեան աստուած կոչեց և Հռովմի Ներսէսի նման հիւպատոսներ և յառաջապահ քաջամարտիկ գնդեր և տալս Բիւզանդիոնի 14-ի չափ հզօր ու մեծանուն կայսրներ պարգեւել, առանց հաշուի առնելու մօտ 20-ի չափ ականաւոր զօրավարներ, իր առանձին իշխանութիւնը կորցնելուց յետոյ՝ երբ զաւակների մի մասը հարկադրըւում է հեռանալ իր հայրենի երկրից, ներկայանում է իբրև նշանաւոր պատերազմիկ, դիւանագէտ, և վաճառական ոչ միայն դրացի Պարսից, Հագարացւոց Եգիպտացոց աշխարհներում, այլև Հնդկաստանում, Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում, Լեհաստանում, Տրանսիլվանիայում, այլև իր բնագաւառի տիրող կառավարութիւնների մէջ - Թիւրքիայում և Ռուսաստանում. ուստի և իրաւամբ այս ազգը Արևելքի քաղաքակրթիչ տարրն է անուանել։



Այս հինաւուրց ազգը, որ այսօր մօտ 40 դարերի պատմութիւն ունի, և ճկուն նահատակ և քաղաքակրթիչ տիտղոսներով է յիշատակւում, արժանի է արդարև, որ իր զաւակների գրական արտադրութիւններով ներկայանայ ի շարս քսաներորդ լուսաւոր դարու զարգացած ազգերի։

Դոկտ. Ն. Տաղաւարեան

## ՕՏԱՐՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ
## ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Օր. Ֆլօրէնս Է. Ֆէնշէմ Կ. Պոլսի Ամերիկեան օրիորդաց վարժարանի աւագ ուսուցչուհին, որ տարիներով հայ աշակերտուհիներ է դաստիարակել, գտնում է, որ հայերը ոչ միայն քաջ ուսանողուհիներ են, այլ և խիստ վստահելի աղջիկներ։

Լօրդ Բայրըն հայերի մասին գրել է. «Դժւար պիտի լինէր թերևս ուրիշ որևէ ազգի տարեգրութեան մէջ գտնել աւելի նւազ ոճիրներ, քան այս ազգի տարեգրութեան մէջ, որի առաքինութիւնները խաղաղութեան պտուղներ են և պակասութիւնները իրենց կրած հարստահարութեան հետևանքը»։

Պատ. Էտուին Մ. Պլիս.—Կ. Պոլսի հայերի մէջ երկար ապրելուց և փորձառութիւն ունենալուց յետոյ ասել է.



«Այս ազգին աւելի շատ և աւելի մօտ ճանաչողները՝ նրան աւելի բարձր կերպով կյարգեն»։

Լամարթին հայերին համարում է «Արևելքի Զւիցերացիներ»։

Դիւլորիէ համեմատում է Հոլանդացիների հետ, իսկ Ամերիկայի միսիօներները նրանց նկարագրում են իբրև «Արևելեան Թիւրքիայի Անգլօ-Սաքսոններ»։

Տր. Գրէյս Ն. Կիմպօլ Հայաստանի կենդրոնում տարիներ ապրելուց յետոյ՝ հայերին նկարագրում է իբրև «ձեռներէց և յառաջադիմութեան ոգով լի ցեղ և ամէն տեսակ հնարաւորութիւններով հարուստ»։

Տր. Սայրըս Համլին, որ 35 տարի Թիւրքիայում ապրել է և Ամերիկեան կոլէճի հիմնադիրն է, գրել է. «Հայերը ազնւական մի ցեղ են»։

Տր. Ճէյմս Լ. Պարթըն, «Եփրատ» կոլէճի նախկին նախագահը գրում է.

«Այսպէս գիտեմ, որ հայերը ժառանգապէս կրօնասէր, աշխատասէր, հաւատարիմ ազգ են, մտաւոր կարողութեան կողմից ոչ մի ազգից ստոր չեն։ Այս խօսքերն ասում եմ ութը տարի շարունակ հայերի հետ շփուելուց յետոյ»։

«Եթէ միայն մարդ կոչուած կենդանին փոքր ինչ նուազ կեղծով այլանդակուած լինէր, Հայաստանը կդառնար մի համարեա իդէալական շահմարան իր ժողովրդի համար։ Ամբողջ լեռնային օդը, խստաշունչ, բայց առողջ ձմեռը և միշտ զով ամառնային գիշերները, հարաւային արևը, մեծ գետերը, հացաբեր հողի անսպքին առարծութիւնները, հանքերի առատութիւնը ու երկրի այսպէս բարեբար արժանաւորութիւնները պէտք է որ պարգևէին ոյժը մարդու մէջ, նիւթական բարեկեցութեամբ սնուցանէին նրա թևաւորուած ոգու աճումը և հար-



կապրէին նրան բացուել առատ լոյսի մէջ, ինչպէս ծաղիկ»։ Լինչ

—

«Արևելքի ժողովուրդների մէջ Հայ ազգը բացառիկ պարգևացում ունի և օժտուած է իր դրացի ազգերին անհամար եղող յատկութիւններով։ Իրաւամբ ինքնատիպ է իր կրօնքով. ոչ բողոքական է և ոչ Հռովմէական. խղճի աւելի ընդարձակ սահմանի մէջ՝ իր խառնուածքի համաձայն գործնելուած է իր կրօնքը, միշտ անայլայլ և անյողդողդ մնացած»։ Ռընան

—

Հայերը օտարների կարծիքով էլ, ընդունակ, աշխատասէր և խաղաղասէր ժողովուրդ են։ Չնայած այն դաժան պայմաններին, որոնց ենթակայ են եղել դարերի ընթացքում իրենց հայրենի երկրում, հայերը սերտ կապուած են նրա հետ, նաև հեռաւոր գաղութներում ապրող հայերը բոլո-

ըովին չեն կտրել մայր հայրենիքից։ Իրենց շրջապատող՝ գլխաւորապէս մահմեդական ժողովուրդների մէջ հայերն աչքի են ընկնում յառաջդիմութեամբ և լուսաւորութեամբ։ Օտարներն էլ հայերի պատմական կոչումն են համարում քաղաքակրթութիւն տարածել ասիական հարևան ժողովուրդների մէջ, միջնորդ հանդիսանալ Եւրոպայի և Ասիայի միջև։

---

Հայերը հասել են վարչական ամենաբարձր դասին, և եղել են ժամանակներ, որ Եգիպտոսի հասարակական գործերում ամենավճռական ազդեցութիւնն են ունեցել։

Լորդ-Բրոմէր



## ՀԱՅԻ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Մի քանի մարդիկ սովոր են պարծենալ իրանց ընդհանուր մարդասիրութիւնով և այդպէս փոքրկացնել հայրենիքի սէրը, ոքա ասում են մեր հայրենիքը աշխարհն է, այն անկիւնը ուր ծնած էինք մենք, չունէր իրաւունք պահանջել մեր նախապատիւսէրը... Արդարև կարող ենք ասել թէ բոլոր աշխարհը մեր հայրենիքն է, բայց այս ճշմարտութիւնը, որ դրած էր ամենայն մարդկեղէն ընկերութեան վերայ որպէս հարկ և կանոն, չէ վերացնում միւս աւելի նեղ ընկերական յարակցութիւնքը, և ոչ իսկ կրօնը կամք ունի արմատախիլ անել աշխարհից ոչ հայրենիքի սէրը, ոչ ծնողների զաւակների մէջ եղած սէրը և ոչ բարեկամների և ազգականների

մէջ միաւորող կապը: Հայրենասիրու-
թիւնն է միշտ մի ազնիւ զգացողու-
թիւն թէև վերաբերուէր նա դէպի մեծ
կամ փոքր աշխարհ: Չկայ մի ազգ, որ
չունենար իւր սեփական փառքի և
պարծանքի յիշատակները: Ս. Նազարեան

———

Անցել է 1400 տարի և այդ երկար
շրջանում հայերի քաղաքական մտքի մէջ
միշտ կենդանի է մնացել ազգային
գոյութեան գաղափարը, լեզուի ու գը-
րականութեան ուսումնասիրութիւնը:
Այս գեղեցիկ յատկութիւնների շնոր-
հիւ վերակենդանել են Բագրատուն-
եանց և Ռուբինեանց իշխանութիւն-
ները, ապա առաջ են եկել այլևայլ
Մելիքութիւններ ու Զէյթունի արիւ-
նահեղ խլրտումները նոյն ազգային
բարօրութեան նպատակով, բայց չը-
կարողանալով դիմանալ մահմետական-
ների բուռն արշաւանքներին, վերջ ի
վերջոյ պիտի տեղի տային նրանց



առջև և հրաժարուէին իրանց անկա-
խութիւնից: Եթէ մի թեթև հայեացք
ձգենք մեր այս երկու թագաւորական
հարստութիւնների վերայ, կտեսնենք,
որ դրանց մէջ թոյլ է եղել ազգային
միութեան գաղափարը:

Ս. Շահազիզ

———

Սիրելի կարդացող՝ բաս ինչպէս չի
սիրտդ վառուիլ, որ դուն էն ազգի
որդին ես, որ էսքան տանջանք քեզ
համար քաշեց, ինքը նահատակուեց, քո
կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ
չը խառնեց:

Ինչպէս կարծում ես քիչ բան ա, հա-
զար տարով էս օրը քաշել, ազգ պա-
հել, որդի մեծացնել, անուն, լեզու,
հաւատ ունենալ: Ա՛խ չէս միտք անողը՝
էլ ինչ սիրտ պէտք է ունենայ, որ
իւր լեզուն իր ազգը չսիրէ: Ասենք
բլբուլի լեզուն քաղցր ա, սիրամար-
գին Աստուած գեղեցիկ գոյն, սիրուն

ըմբռնել ա տալ: Ասենք վարդը շատ գովելի ա, բայց ինչի չի՝ մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս: Միթէ վարդին տեսնողը մանիշակին չի տեսնիլ: Ուրի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը իրան փառքը վարդի հետ չի փոխի: Ամեն բան իր գինն ունի, շաքարեղէնը քաղցր ա, ամմա հացի տեղ երբ կերանի:

Խ. Աբովեան

---

## ՀՌՈՎՄԷԱՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հռովմայեցիների համար Աստուածներից յետոյ ամենասիրելին հայրենիքն էր: Բնական է, մարդու ծնած տեղը սիրելը, բայց հռովմայեցիների համար այս սիրոյ զգացումը բնականից աւելի էր: Միշտ պատրաստ էին հայրենիքի ազատութեան, փրկութեան և երջանկութեան համար ամեն բանի



ձեռնարկել, ամեն տեսակ նեղութիւն կրել և ամեն բան նուիրել, ուստի և հայրենիքի սիրոյ համար հարստութիւն, հանգիստ կեանք, փառք, բարեկամներ, ազգականներ, որդիք, և որ ևէ զոհ աչքերին ծանր չէր երևում: Որևիցէ վիշտ կամ հարստահարութիւն չէր կարող հռոմայեցիների սրտից հանել այն սէրը, որը բնութիւնը տեղաւորել էր դեռ ծնած ժամանակից և այդ սէրը դաստիարակութեամբ աւելի աճեցնում էր, որովհետև դեռ փոքրիկ հասակից մայրերն ու դաստիարակներն յորդորում էին, որ քաղաքացիք պարտական են բարիք անել հայրենիքին:

---

Պոմպոնիոս անունով հռոմայեցի զօրավարը պատերազմում վիրաւորուելով պատերազմելուց յետոյ գերի է ընկնում և տարւում է Միհրդատի մօտ: Թագաւորը նրան շատ քաղցրութեամբ

ընդունում է և մեծ խնամքով նրա վէրքերը բժշկել է տալիս և երբ նա բոլորովին առողջանում է, Թագաւորը հարցնում է թէ կարող է արդեօք նրա բարեկամութեան վերայ վստահանալ։ «Քո բարեկամն եմ, պատասխանում է Փոնպոնիոս, եթէ դու ես Հռոմայեցիների բարեկամը կամենում ես լինել. բայց եթէ իմ հայրենեաց դէմ քո ունեցած ատելութիւնը շարունակես, գիտցիր, որ քո անհաշտ թշնամին պիտի լինիմ»։

---

## ՖԻՆԼԱՆԴԱՑԻ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայրենիքի մատաղ զաւակներ, իմ քաջ մարտիկներ՝ գովեցէք իմաստուններին, ուժեղներին երեւելիներին ի փառս սիրելի հայրենիքի. կեցցէ Ֆինլանդիայի յաւերժ երջանկութիւնը.



թող երջանիկ խինդը տարածէ նրա լճերին և ափերին։ Թող ծաղկի շքեղ ամբարը նրա կանաչ հովիտները և թող նրա արմատները զարգացնեն ուկեզօրն հասկերով և թող միշտ գիւղացին գնահատէ իր հայրենիքի բարիքները... Բայց եթէ այդ խաղաղ դաշտերի վրայ չար թշնամին յարձակուի,—այն ժամանակ մեր ազնիւ ժողովուրդը թող թշնամու արիւնը թափէ և եթէ հարկ լինի մեռնելու, թող պատւով մեռնի... Վէյնէ-Մէյնէն

---

Այո, մենք սիրում ենք մեր երկիրը ամեն բանից աւելի, որովհետև նրա համար մենք կարող ենք ամեն բանից հրաժարուել։ Մենք սիրում ենք նրան, որովհետև նա մեր արմատն է. մեր գոյութեան հողը և մենք այնպէս ենք, ինչպէս մեզ ստեղծել է մեր երկիրը՝ խոժոռ, սառն, մարտնչող արեգակի

ծարաւ և Նոր արշալոյսի գիրկը ձըգ-տող ժողովուրդ։

Զ. Թոփէլիուս

— —

Մի ուրիշ Ֆինլանդացի գրող ասում է. «Ֆիննի սէրը դէպի հայրենիքը՝ ճիշտ որ խորն է։ Այդ սէրը նրա մէջ երեւան է գալիս երեխայական հասա-կից և ամրապնդւում է նրա մէջ դըպ-րոցում, դաստիարակի անմիջական հսկողութեան ներքոյ։ Նրա սէրը խե-լացի և գիտակցական է և այդ իսկ պատճառով հաստատուն է, որպէս մայր երկրի գրանիտը։ Նա կապուած է հայրենիքի հետ անքակտելի կապերով և նրա կենդանի մարմնացումն է։ Սուր և շղթայ մահ և բանտ չեն կարող ըս-տիպել նրան հրաժարել հայրենիքից»։

---

## ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՒԽՏԸ

Ամերիկայի Ա. Լինկըն կարմիր և սև տառերով տպագրուած մի կարտ է



պատրաստել «Նոր քաղաքացու ուխ-տը» վերնագրով, Ամերիկա եկող օ-տար քաղաքացիների համար։

1. Իմ հայրենիքիս պատուի համար, Նոր հայրենիքիս—Ամերիկայիս, հաւա-տարիմ պիտի լինիմ։

2. Ամերիկա պետութիւն է—Ա-զատութեան երկիրը և քաջերի հայ-րենիքը։

3. Ազատութիւն չի նշանակում իմ անձնական շահը։ Ազատութիւն նշա-նակում է հաւասար պատեհութիւն, ամենքին անկողմնակալութիւն։

4. Քաջութիւն չէ յաջողութեան հա-մար ընկեր քաղաքացիներիս վնասել։ Ճշմարիտ քաջութիւնը միշտ անկող-մնակալ է։ Մասնաւոր անձնաշնորհու-մը անարդար է, ոչ—Ամերիկան։

5. Օրէնքին պիտի հնազանդւիմ. Ա-մերիկան հանրապետութիւն է, ուր օրէնքը թագաւոր է, ժողովրդական կառավարութիւն, օրէնքի տակ, ընդ-

հանուրի բարեկեցութեան համար։

6. Ընտանիքս պիտի պահպանեմ։ Հաւատարիմ ամերիկացին ամենօրեայ կեանքով իր ընտանիքին լաւ խնամք կտանի, իր օջախը մաքուր և առողջ կպահէ, իր օրուայ աշխատութեան հաւատարիմ է, իր միջոցների սահմանից դուրս չի գայ, պատրաստակամ կվճարէ իր պարտքերը, ինքը իրեն կյարգէ և մի լաւ բարեկամ է։

7. Իբրև քաղաքացի ընդհանուրի բարիքը պէտք է մտածեմ նախ։ Համեստ և պատշաճ կերպով պիտի վարւիմ ընկեր—քաղաքացիներիս հետ և գիտութեամբ մէկին վնասելու համար ոչինչ չպիտի անեմ։ Քւէարկելու իրաւունքս նուիրական կը համարեմ և իւրաքանչիւր ընտրութեան քւէ պիտի տամ այն մարդկանց և օրինագծերի համար, որ քաղաքի, նահանգի և ազգի համար լաւագոյն եմ համարում։

---



## ԲԱՐԻ ՄՕՐ

## ԽՐԱՏՆԵՐԸ

Որդի ջան, եթէ մարդա մէջ ինես, ուրիշի ցաւից, ուրախութիւնից խօսի, քո խօսքը մէջ մի գցի, լսողների զահլան կգնայ։ Դարդոտի ցաւին լաւ ականջ դիր, ղարիբի ախը լաւ հասկացիր։ Սիրտ ունեցողին սիրտդ բաց, ցաւ հասկացողին ցաւդ ասա։

Ազնւութեան առաջին նշանը ուրիշին ցաւն հասկանալն է և նրա դարդին դարման անելը։ Կեղծաւորութիւն մի անիր, զզւելի կլինես, կուլիս մի վարւիր, ատելի կը դառնաս։ Անօգնականը, եթէ թշնամիդ էլ լինի, ձեռքիդ եկած օգնութիւնը մի խնայիր։ Ոչ ովի հացին մի դիպչիր, մի օր ինքդ հացի կարօտ կմնաս։ Սովածի ոչ հաւատը հարցրու, ոչ ազգութիւնը, ողորմութիւն տուր։

Ողորմութիւն տալիս, կողէկները հեռաք մի՛ տնիլ։

Սովածի գլխին քարոզ մի՛ խօսիլ, օգնութիւն արա։

Որդի՛ ջան. չարութիւնը աշխարհումըս շատ աւելի է քանց բարութիւնը, բայց մարդ եթէ մաքուր մի բարի նպատակ ունի և ուղիղ էդ նպատակին ճշմարտութիւնով և արդարութիւնով հասնել կամենայ, բարութիւնը միշտ յաղթող կլինի չարութեան վրայ։ Էդպէս մարդը օձերի, գազաններէ միջից անցկենալով, փշերին և աւազակներին հանդիպելով, ոլոր մոլոր և անյայտ ճանապարհների մէջ շուարելով մութ անտառների և վարար գետերի պատահելով չի կորչիլ այլ ամեն փորձանքներից և պատահարներից սաղսալամաթ կը պրծնի և իրան ուխտին կհասնի։ Աստուած միշտ օգնող է ճըշմարիտ խօսողին, արդարութիւնով վարւողին, ուրիշի ցաւը քաշողին,



խիղճ ու գութ ունեցողին, բարիք անողին և երախտիք ճանաչողին։

Թունդ քացախը ամանին կը վնասի, թունդ մարդը՝ իրան ջանին, ճըշմարիտ խօսողի ձին միշտ պատրաստ պիտի լինի։ Որչափ աւելի չկամներ ունենաս, Աստուած գործդ աւելի կը յաջողի։ Չկամութիւնը տկարութեան նշան է, նախանձը — չարութեան։ Նախանձոտի աչքը չղջիկի եւ բայղուշի (բու.) աչքերին կնմանի. ինչպէս որ սրանց աչքերը լոյսը կծակի, էնպէս էլ նախանձոտի աչքն ուրիշի յաջողութիւնը, բարի անունը և լաւ գործերը։

Գ. Նիկողոսեան

## ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԻՐՔ

Երբ քեզ համար գործ ես ընտրում և կամ որևէ ասպարէզ, քո ընթացքի մէջ հանդարտ եղիր։ Զգացումները լինին ուրախութեան կամ տրտմու-

թեան, յոյսի թէ յուսահատութեան անպատճառ գործի են վերածւում կեանքի մէջ. դրէթէ անգիտակցաբար։ Գործի մարդկանց համար տնտեսա-պէս և քաղաքապէս վնասակար է իր եռանդը վատնել յուզումներով։ «Կըր-քերը» վերնագրով գրքի հեղինակը գրում է. «Կարողի առաջին պայմանը տիրապետութիւնը լինելով, պէտք է որ մարդիկ իշխեն իրենց կրքերին, և որովհետև բոլոր կրքերի հասարակաց նկարագիրը յուզմունքն է, ամէն բա-նից առաջ այդ յուզումը զսպել պէտք է գիտենալ»։ Իսկ իր կողմից Միլլէն Թուտ աւելացնում է։ «Զայրացկոտ, բուռն, յորդ մարդը մի տկար է, են-թակայ իրեն շրջապատող բոլոր գը-րգռութիւններին։ Նրա մէջ ջղերն են իշխում, կամ նոյն իսկ եղծանում են բանականութիւնը»։

---



## ԶԻԱՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

Ամէն դժւար պարագաների մէջ անգամ զւարթ եղիր. յաջողութեան ոգին զւարթութիւնով միայն կարող է պաշտպանւել։ Յաղթութեան գործը դժւար է և ամէն յաղթանակ զո-հողութիւնների է կարօտում։ Հէքան մինչև իր որոշած յաջողութեան բաղ-ձանքը չհասնի, դրկւած կեանքով է ապրում. մի տեսակ անձնուրացութիւն կայ նրա մէջ, ի նպաստ իր սերնդի։ Որքան ժամանակ դեռ վերելք ունի, նա հաճոյքների վրայ նայում է ան-տարբերի նման։ Բայց երբ իր մեծու-թեան ոսկի հիմքերը դրաւ, և զգաց, որ կատարեց մրցման մէջ իրենը ուժ է, մի խօսքով երբ ջուրն առաւ պղեց, հրաժեշտ է տալիս այն խոնարհ տա-նը, ուր իր մոռացւած, անյայտ կեանքով ապրեց, և մեծ քաղաքների կենտրոններում է տեղաւորւում իր աշխատած բարիքը վայելելու։

## ԳՈՐԾԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

1. Նպաստաւոր վայրկեանի մի ըսպասիր, այն դու ստեղծիր։

2. Ձեր ժամանակից մի վայրկեան անգամ մի կորցնէք. Եթէ Գլադստոնի նման հանճարեղ մէկը իր գրպանի մէջ միշտ մի գիրք էր կրում վախենալով որ իր կեանքի վայրկեաններից մէկը չփախչի, ապա հասարակ մարդը ինչպէս պիտի վարուի ժամանակի կորուստից խուսափելու համար։

3. Ձեր ամբողջ ոյժը կենդրոնացըրէք միակ և անշարժ նպատակի վրայ։ Ունայն վարանումների մէջ մի քաշքշուէք. շատ բաների վրայ մի մտածէք, այլ մէկի վրայ, և յամառօրէն։

4. Ժամանակ մի վատնէք անցեալի կամ ապագայի վրայ երազելով. ուշադիր եղէք ներկայ վայրկեանը բռնել։

5. Գեղեցիկ վարմունք ունեցէք, մի



մարդ որ գեղեցիկ վարմունք ունի, կարող է հարստութիւնից անցնել նըրա առջև ամէն դուռ բաց է, և կարող է առանց վճարումի մտնել։

6. Քաղաքավարի և քաղցրաբարոյ եղիր բոլոր մարդկանց և մանաւանդ քո յաճախորդների հետ։ Քաղաքավարութիւնն ու քաղցրաբարոյութիւնը լաւագոյն վկայականներն են գործի մարդկանց համար։

7. Լաւ խօսել և համոզել սովորիր։ Խօսքը շատ անգամ մարդու բնաւորութեան արտայայտութիւնն է։ «Խօսիր, որ քեզ ճանաչեմ» ասում էր Սոկրատ։

8. Խոստմնապահ եղիր։ Թոյլ և անազնիւ բնաւորութեան ապացոյց է խոստանալ և խոստումը դրժել։

9. Ճշտապահ և արագ եղիր, և մի սպասել տար յաճախորդներիդ, եթէ ուզում ես որ նրանք նորից գան քո խանութը։

10. Մարդախուսութիւնից հեռացիր ու

մի ստէր։ Եթէ մի՛անգամ ստութեան մէջ բռնուիս յաճախորդներիդ կողմից, կկորցնես արժանապատուութիւնդ և յաճախորդներդ պիտի կասկածով նայեն քեզ։

## ՄԵՐԻԿԱՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

## ԽՐԱՏՆԵՐԸ ԻՐ ՈՐԴԻՈՆ

Դաստիարակութեան մարդուն ամ-էնէն առաջին բանը՝ ինքնուրոյնութիւնն է։ Ես՝ փափագում եմ որ աշխատասէր աշակերտ լինիս, բայց ամենից աւելի ցանկանում եմ, որ պատուական և՛ մաքուր մարդ լինիս։

Խնդիրը շատ՛ բան գիտենալու մէջ չէ, այլ մի՛ բան հիմնովին սովորել՛ և գիտենալ ու այն գործածել։

Վարուեցողութիւն՛ ունեցող մարդը կարող է պիծակի խայթոցը տոկել, առանց իրեն խայթել տալու։

Իմ փորձառութիւնս է, թէ հպար-



տութիւնը խթան է ուժեղի համար, և անկման պատճառ թոյլի համար։

Եթէ կամենում ես որ երեկոները քեզանից գոհ պառկես, պէտք է որ ամեն առաւօտ արթնացած ժամանակդ գիտենաս՛ թէ ինչ ես որոշել անելու։

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՐԱՏՆԵՐ

1. Բնութեան նշանաբանն է. «Աշխատութիւն կամ մահ»։ Եթէ աշխատելուց դադարիք, իմացնականապէս, և ֆիզիքապէս մեռած էք։

2. Բնաւորութիւնք ունեցէք, յաջողութիւնը բնաւորութիւնից է կախուած։

3, Զափազանց սիրող եղէք ճշտութեան. քան գործ կէս կատարուած, մէկ հատ՛ լաւ կատարուած գործ չարժէ։

4. Ձեր կեանքը պիտի լինի այն,

ինչ որ դուք պիտի չինէք։ Աշխարհը մեզ տալիս է այն, ինչ որ մենք աշխարհին ենք տուել։

5. Աշխատենք մենք պատահած հաջողութիւնից օգտուել։

6. Դուք ձեզ համար լաւ առողջութիւն և երկար կեանք ապահովեցէք։ Առողջ հոգին առողջ մարմնի մէջ է։

7. Հակիրճ եղէք (երկարող մի լինիք). ամբողջ գործը ձեռքի մի հարուածով կատարեցէք։

---

## ԳՈՐԾԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Գործի մէջ յաջողութիւնը բարեբախտաբար կախում ունի ուղիղ դատողութիւնից, ջանասիրութիւնից և կանոնաւորութիւնից, քան թէ հանճարից։

«Դուք ձեր խանութը պահեցէք, որպէսզի ձեր խանութն էլ ձեզ պահէ»։



Քսենոփոն պատմում է, թէ պարսից թագաւորներից մէկը ուզեցել է իր գեղեցիկ ձին որքան կարելի է շուտ գիրացնել, և այդ գործերի մէջ հմուտ ճանաչուած մէկի հարցնում է։

—Ի՞նչ է հարկաւոր այդ բանը յաջողցնելու համար։

—Իր տիրոջ աչքը—պատասխանում է յիշեալ մարդը։

Իզուր տեղը չէ, որ անգլիացիք ասում են թէ «գործի տիրոջ երկու աչքը յիսուն գործաւոր արժէ»։

---

## ԹՈՔԱԽՏԱՒՈՐ ՀՕՐ ԿՏԱԿԸ

Ծնել տկար որդիներ, նշանակում է գործել մեծ չարիք, աններելի, որպիսին միայն կարող է գոյութիւն ունենալ և նմանապէս այդ չարիքը պատճառել այն էակներին, որոնց մենք ա-

մեզնից շատ ենք սիրում «որոնք մարմինք ի մարմնոյ մերմէ, ոսկերք յոսկերաց մերմէ են»։

Ծնել հիւանդոտ որդիներ իր անձնական մեղքի պատճառով աւելի վատ է, քան թէ սպանել մարդուն սաստիկ բարկութեան ժամանակ, այդ նշանակում է ննջութեամբ թունաւորել մեզ համար ամենաթանկագին ստեղծուածների կեանքը։

Հիւանդոտ լինել և արտադրել որդիներ, սա ապացոյց է բուռն եսականութեան, դա նշանակում է ինքն իրան ենթարկել խղճի խայթին կեանքի ընթացքում։

—

Չի կարելի մի որևէ փաստ առաջ բերել, որի հիման վրայ կարելի լինի թոյլատրել լուսնոտներին, գժերին և թոքախտներին ամուսնութեան միջոցով ընկնաւորութիւնը, թոքախտը



և գժութիւնը փոխադրել յետագայ սերունդներին։

Եթէ երկնային կեանքն ամենասուրբ ուրախութիւնն է... արդեօք կարելի՞ է թոյլ տալ նրանից պատրաստել բաժակ, որի մէջ խառնուում է թոյն։

Եթէ մարդու ամենալաւ օրհնութիւնն է, բայց արդեօք ցանկանում էք դուք դաշտալի մօտ վառող սպոյ լապտեր գործածեն նրան։

Ի՞նչ է սովորում ձեզ, կենդանի նեխուածներ և թոյնով ծնուածներ, ծնել որդիներ որպէս զի տեսնէք նոցա գերեզմանում անմեղ մանկական շրթունքների վրայ ժպիտ փայլելիս։ Չե՞ք կարդում արդեօք ձեր որդիների ծերացած և կնճռոտ դէմքերի վրայ անէծք այն ծնողներին, որոնք կեանք տուին նորան:

—

Էմմա, իմ անգին Էմմա, դու ինձ

միշտ սիրում էիր, դու միշտ յարգում էիր քո հօրը։ Լսիր ինձ։ Այնքան որդիներս կորցնելով և շատ անգամ ընդ գերեզմանի դուռը տեսնելով, ես սըկսում էի նզովել ինքս ինձ, իմ մեղքերը և ագահութիւնը, ես սկսեցի նըզովել բժիշկների ագիտութիւնը, որոնք չէին կարող փչացնել այն թոյնը, որից ես պէտք է մեռնէի, չը տարծւելու իմ անբախտ ընտանիքի մէջ։

Եթէ ես ծնւեցի հիւանդ, ապա պարտաւոր էի միայնակ կրել այդ հիւանդութիւնը և այն մի քանի տարիները, որոնք բաշխել էր ինձ բնութիւնը նըւիրւել իմ բարեկամների և հայրենիքի համար։

Բայց ես այնտեղ հասայ, որ սկսեցի նզովել ծնածս վայրկեանը. իմ վիշտը հարիւր անգամ մեծանում էր զաւակներիս տանջանքներից իսկ տունս դառնում էր գերեզմանատուն։

—



Արդէն վերջացաւ ամենազարհուրելի պատիժը մեղքերիս համար։ Նրանցից յետոյ, երբ թաղեցի իմ բոլոր որդիներին ես պարտաւոր էի և վերջինին, որը կենդանի էր մնացել, ասել համբերել, կրել քո հօր յանցանքը։

Մի նզովիր հօրդ։ Երբ նա երիտասարդ էր իւր ձեռքը առաջարկեց մօրըդ, այն ժամանակ բժիշկները հասարակ արհեստաւորներ էին և միմիայն նշատար ու թունաւոր դեղեր էին ճանաչում։ Նոքա չգիտէին, որ իրանց վրայ պարտականութիւն կայ հիւանդին, թոքախտին և ընկնաւորին ասել. «Մի համարձակւիր սերունդ թողնել քեզանից յետոյ. աւելի լաւ է խլիր սուրը քո ամենամտերիմ բարեկամի սիրտը»։

Հայրդ իբրև ժառանգութիւն է թողնում քեզ, մի սոսկալի պարտք, որը դու պէտք է կատարես, ապրիր, բայց

երբէք մի սիրիր, եղիր կին, բայց ոչ մայր։ Ես մեռնում եմ խաղաղ, որովհետև հաւատացած եմ, որ դուստրս չի դրժիլ իւր երդումը և կկատարէ այն բարի գործը, որ հայրը չկարողացաւ կատարել։

«Հիւանդ Սէր»

---

## Մ Տ Ք Ե Ր

—Ազգութիւնը եթէ մի մարմին ընդունենք, միաբանութիւնը նրա հոգին է։ Ել. Կեսարեան

—Լաւ մտածելուց յետոյ մի ասիր «պիտի անեմ». այլ անմիջապէս ասա. «կանեմ»։ Այսպէս է, որ կամքդ պիտի զօրանայ։

—Միշտ այնպէս վարուեցէք, իբրև թէ տասը աչքեր ձեզ են դիտում, և տասը ձեռքեր ձեզ են մատնանշում։

---



## ԵՐԱԶԱՀԱՆ*)

### Ա.

Աստուած երազում տեսնելը՝ լաւ է, ամեն չարից կազատուի, թէ աղքատ է կը հարստանայ. թէ հիւանդ է կառողջանայ։ Աստուած տան մէջ տեսնելը՝ տան նորոգութիւն է.

Աստղ տեսնելը լաւ է, եթէ տան մէջ տեսնես՝ բարեկդ կուել[illegible]այ. օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վ[illegible]դառնաս։ Շատ աստղեր տեսնելը՝ ճանապարհ գալ է և շահ։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Արեգայ տեսնելը՝ փառք, պատիւ կամ կռիւ է։

Աքաղաղը մորթած՝ կուի նշան է.

Ագռաւներ, թշնամիներդ կյարձակւին քեզ վերայ.

Աթոռ տեսնելը՝ մեծութիւն է.

Աթոռ նստելը՝ բարձրութիւն է.

Ալեւր իրան տեսնելը՝ հարստութիւն է։

Ալիւրը շահ է և ոյժ. ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

---

*) Տպագրում ենք Դանիէլ մարգարէին վերագրուած երազների բացատրութիւնը իբրև ուսումնասիրութեան նիւթ հետաքրքրողների համար։

Ականջը, աղջիկ է, կամ աչքալոյս։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կյաղթես. Աղուէսը թէ մարդուց փախչի իր պարտականը կը փախչի։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կանի։

Փոքր աղջիկ տեսնելը՝ շատ օգուտ է։

Աղբիւր տեսնելը՝ շատ բաներից օգտուելու նշան է, աղբիւրից լուացուելն՝ օգուտ է, աղբիւրից ջուր վերցնելը՝ վատ է, աղբիւրից ջուր խմելը, շնորհք է և բարի։

Աղ ու անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է, միմիայն աղ տեսնելը կսկիծ է. սպիտակ աղը՝ փող և օգուտ է, սև աղը վատ խօսք և տրտմութիւն է։

Աղի ձուկը կսկիծ է և հոգս։

Աղեղ տեսնելը՝ մեծ վրայց է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ.

Իրեն աղեղնաւոր տեսնելը՝ թշնամանող լեզու է։

Աղիւս հանելը տան շինութիւն է և լաւ։

Ագգատին բան բաշխելը բարի և օգուտ է.

Ամանաթ առնելը և պահելը՝ շահ է.

Այծ տեսնելը՝ ճանապարհ է.



Այրուած հանդերձը՝ (շորը) մահուան վնաս և երկիւղ է. Այրուած և աւերուած տեսնել իր տունը՝ վնաս է.

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է.

Անդաստան տեսնելն աշխատանք է,

Անապատում նստելը, նեղութիւն է։

Աչքեր տեսնելը, շատ հարստութիւն է.

Մեծ աչք ունենալ, երկարակեցութիւն է. աչք հանել, կնոջ կամ որդու մահ է։

Ապարանջանը, նեղութիւն և հոգս է։

Առիւծ տեսնելը, թագաւոր իշխան և կամ մեծ մարդ է.

Եթէ երկու առիւծ իրար հետ կռուին երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին.

Եթէ դու առիւծի վրա նստած լինիս պարոնութիւն (աղայութիւն) կանես. Եթէ առիւծը դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ.

Առու տեսնելը, գանձ և օգուտ է.

Ատամ.— Եթէ բոլոր ատամներդ թափուին, շատ գանձ կգտնես. Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ագի կը հանդիպես և ճանապարհ կը գընաս. Առաջին ատամներ հանելը որդոց մահ է գուշակում. Ներքին ատամներ հանելը՝ տրտմութիւն է, իսկ վերինը հանես, ազգական-

ներից մէկը կը մեռնի։ Սևացած ատամները, հիւանդութիւն է։

Արեգակ տեսնելը, թագաւոր է. Արեգակը իւր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար. Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնողի համար չար է. Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է. Արեգակ տեսնելը նեղութիւն է, արեւն ամպի տակ տեսնելը, նեղութիւն կամ պայծառութիւն է ․

Արծաթը նեղութիւն է. Արմաւը շատ բարի և՝անոյշ խօսք է. Արմաւենին գաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է.

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է.

Արծիւ տեսնելը, աւանդութիւն է. Արծուի վրայ նստելը՝ պարոնութիւն է. Արծուի հետ կռուելը կամ խփելը՝ մեծ մարդկանց հետ կռուելու նշանէ։ Եթէ արծիւը քեզ խփի մի պարոնից զէնք կստանաս։

Արջ տեսնելը ագէտ մարդու խօսք է. արջից հալածուելը կռից կազատուես կամ մեծից զրոյց կայ։

Ամեն գայլ գազան թշնամի է,

Աւետարանը հալալ մալուղ է.

Աւազը որ ձեռքդ առնես, մեծ մարդու բան կստանաս։



Աւազակ որ տեսնես զգուշացիր կռւից.

Բ.

Բարձրանալ երազում և վայր ընկնելը մէկի ձեռքով մահուան վնաս է.

Բարձր տեղերի վրայ քայլելը մեծութեան հասնել է.

Բարձր տեղից ընկնելը վնաս է.

Բարե տալը՝ կռիւ է. Բաղնիքը՝ հոգս է. Բաղանիք եթէ գնաս խաբէութեան մէջ կընկնիս. Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսից կազատուիս. Բաղանիքում լուացուելը առողջ և մեծ նեղութիւն է.

Բաղ տեսնելը, մեծ մարդ է.

Բաց շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է.

Բանը լեզու է.

Բամբակը արդարութիւն է.

Բանջարը շահ է:

Բերդ որ տեսնես թշնամիներից մօտ ճամալիտ դուրս կգաս. Բերդ մտնելը պարծանք և ամրութիւն է. Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է.

Բերան լուանալը, ուժի պակասել է.

Բիր տեսնես կամ առնես, եղբայր կամ որդի է. Բիր կտրելը, եղբօր կամ ազգականի մահ է.

Բլուր տեսնելը երկրի խաղաղութիւն է,

Բու տեսնելը նեղութիւն է.

Բուրվառ տեսնելը կամ առնելը լաւ չէ կռիւ է։

Բուրդ.—սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը, առողջութիւն և օգուտ է. Սև բուրդը սուգ ու լաց է։

Բոբիկ իրեն տեսնելը, զէնք կգայ իր վրայ.

Բորոտ իրեն տեսնելը գանձի շատանալ, մեծութիւն և շահ է.

Բողք ուտելը, առողջութիւն և օգուտ է.

Գ.

Գառներ տեսնելը մեծ շահ է. Գառները մորթելը լաւ չէ. գառներ լւանալը զէնք և տրտմութիւն է.

Գազան տեսնելը տանից վնաս կռիւ և երկիւղ է. Գազանի խաղալը թշնամու հաշտութիւն, իսկ փախչելը խաղաղութիւն։

Գանձ տեսնելը կամ առնելը շահ է.

Գարին բախտ կամ բաժին է.

Գայլ սպանելը թշնամու յաղթել է, գայլի վրայ նստելը նեղութիւն է.

Գաւազան տեսնելը թշնամու դէմ պաշտ-



պանել է. Գաւազանը ձեռքից լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը, զաւակի (ունենալու) ուրախութիւն է։

Գետ անցնելը ձի հեծնել է, Յստակ ու պարզ գետին մտիկ տալը, ազատութիւն է, պղտորը լիութիւն է. գետում լուացւելը նեղութիւն է. Գետի միջից ներքև գնալը պարտութիւն է։

Գերի տեսնելը նեղութիւն է, իրեն գերի տեսնելը, մեծութիւն և օգուտ է

Գերի ճանապարհ գնալ, նեղութիւն է.

Գերանը որ կտրւի, տանտէրը կմեռնի.

Գերեզման բանալը վնաս է, իրան գերեզմանում տեսնելը պատասխանի ենթարկւել կամ բանտ ընկնել է.

Գէշ հոտը վատ խօսք է.

Գինի խմել կամ գնել, ույժ և շահ է.

Գիսաւոր աստղը մեծութիւն և պատիւ է.

Գիրք կարդալը ժողով է և նեղութիւն.

Գիր գրելը բարի և մուրազ է։

Գլուխը կտրած ձեռին առնելը մեծ գանձ, գտնել է. գլուխը դեղ քսելը անուշ խօսք է. գլուխ ածիլել տալը, նեղութիւնից ազատւել է. ուրիշների գլուխն ածիլելը ցաւից ազատ-

ւել է. գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնե-լը գէշ է. Ճաղատակ գլուխը յանկարծակի մահ է.

Գլխատած իրեն տեսնելը, մեծ վնաս է.

Գիտար տեսնելը ցոյց է տալիս ցնծու-թիւն և աղքատութիւն.

Գնդակ խաղալը, մեծի համար լաւ է իսկ, փոքր մարդուն վատ

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է.

Գոյնզգոյն հօլաւը, ուրախութիւն է.

Գորտի ձայն լսելը, ուրախութեան լուր է.

Գորտ եթէ սպանես, հաւատացեալ մար-դու հետ հաշտութիւն կանես:

Գլխարկ ծածկելը հարկիք է:

Գրաւական հանելը իր տանից մահու վը-նաս է.

Գրող տեսնելը մահուան մօտենալ է.

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանա-պարհ է. Գրչամանը կին է:

## Դ.

Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ կամ վատ լեզուն խափանում է.

Դաշտից որ դուրս գաս, ազատութիւն է.



Դատաւորն Աստուած է՝ և դրութիւնդ կը-լաւանայ.

Դատաստանը, մեղաց քննութիւն է.

Դարպաս շինելը կամ տեսնելը, հարուստ կնիկ է. Դարպաս լայնացնելը պարոնութիւն է. Դարպաս փակելը մեծ մարդուց վնասել է:

Դարբինը մեծ մարդ է. Դարբնութիւն թէ ինքդ անես, լաւ անոտէր կլինես.

Դարբնի հարուածը, ամէնը բարի է.

Դևը, նեղութիւն և մեղքի նշան է.

Դդում ցանելը, ջերմ, իսկ ուտելը հիւան-դութիւն:

Դուռը պատիւ է և մեծ մարդու հետ ծա-նօթանալ. Դուռ բանալը, իր բախտի բացւե-լը և իր կամքի կատարել է. Դուռ ծեծելը կործանումն է. Դուռ կոտրելը մահու նշան է,

Դուռը դուրս գալը լաւ չէ:

Դրամ տեսնելը կամ ժողովելը ապահու-թիւն է:

## Ե.

Եղը հատած տեսնել, մեծ աւետիս կ'լսեմ դուգանից սիրելին կը գայ. Եղան մէջ տանելը լաւ է բայց ոմանք ասում են թէ նեղութիւն

Եզների կռուելը թշնամի է. Եզ մորթելը մահու վնաս է.

Եղնիկը տանը տեսնելը սիրելին կգայ։

Եղունգ ունենալը աղքատութիւն է.

Եկեղեցի տեսնելը կամ շինելը փառք է.

Եկեղեցի գնալը ազատութիւն է.

Երկինք բարձրանալը մեծ պատիւ է։

Երկիրը խնդութիւն է.

Երկանք տեսնելը կամ աղալը անհանգստութիւն է.

Երկաթ տեսնելը կամ գնելը, տրտմութիւն և շատ վատ է.

Երակ կտրելը, մահու վնաս է. Երակից արիւն առնելը սրբութիւն է.

Երես լուանալը, գէշ է. Դեղին երեսը մեղք է, կարմիր երեսը գործը լաւ կերթայ. Դեղեցիկ երեսը, մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է.

Երէցը յարութիւն առնելիս, հին զրոյց է։ Մեռած աւագ երէցին կենդանացած տեսնելը մեծ զրոյցի նորոգել է. Երէցին մեռած տեսնել, մեծ զրոյցի խափանումն է։

Զ.

Զանգակի ձայն լսելը, ուրախութիւն է.

Զաֆրանը հիւանդութիւն է. Զաֆրանով կերակուրը, լաւ է.

Զենելը—մորթելը, մեծ նեղութիւն է։



Զէնուորը, տրտմութիւն է.

Զմրութը լաւ է.

Զնդանը մեծ հոգս է և սուգ.

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը, նեղութիւն է.

Զրահը. սպանութիւն է. Զրահ հագնելը, զէն է։

Է.

Էշը շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բռնած, բարի է և պատիւ։

Ը.

Ընկոյզ ժողովելը լաւ չէ։

Թ.

Թագաւորին ողջունելը փառք է.

Թամբ շինելը, խրատարար է.

Թանաք եփելը լաւ է։ Թանաք վերևից թափելը վատ խօսք է.

Թարախով խրան տեսնելը շահ է և հարստութիւն։

Թագնուած իրեն տեսնելը, բարի է.

Թևաւոր իրան տեսնելը հոգիների հանդիպել է։

Թղի ծառը, լիքը մարդ է.—Թուզը (կա-

նաւ) տեսնել կամ ուտելը վնաս է. Թութը (չոր) ուտելը, շահ է.

Թուխ լեռան տեսնելը, մեծութիւն է։

Թռչելը ուրիշ տեղ գնալ է. Թռչել կտուրից, այլ կին առնել է.

Թռչել բարձրանալու համար, լաւութեան հասնել է. Թռչելիս ուրիշ երկրում մեծութիւն կստանայ:

Թռչունի քեզ մերձենալը, մի անձ երանի տալիս քեզ. Թռչուն արձակելը, բարութիւն է. Թռչունի փախչելը վնաս է.

Թռչուններին կուելը, վնաս է. Թռչունի հետ խաղալը, թշնամուց սիրուելու նշան է.

Ժ.

Ժամատունը զարդարուած տեսնելը, արքայութեան արժանանալ է։

Ժամ գնալը, կեանքի բարի լինել է.

Ժամատանը աղօթելը լաւ բան անել է։

Ժամհարը վատ դրութեան հասնել է։

Ժամացոյցը օգուտ է.

Լ.

Լոյսը խաղաղութիւն է, լոյսը հանգած տրտմութիւն է.

Լուսին և արեգակ առաւօտեան տեսնելը աղջկին վնաս է.



Լուսնի աստղը, խիստ շահ է.—կարմիր լուսինը, վնաս է.

Խաւար լուսինը թագաւորի մահ է. երկու լուսին՝ տեսնելը թագաւորներ իրար դէմ կը վերկենան.

Լուն առնիկ է,

Լուծը (եզների) բարի է։

Լեառն (բարձր) որ տեսնես, ազատութիւն է.

Խ.

Խան կամ սուլթան տեսնելը անչափ լաւ է։

Խաչակնքելը երազում մեծ օգուտ է.

Խաչը չարչարանք է.

Խաւարը, հիւանդութիւն է։

Խաղողը, անձրև և ցնորք է.—սպիտակ խաղողը, խնդալ է, սեւ լաւ, ժողոված խաղողը, գանձ է։

Խեցեղէն աման՝ բռնելը, ուրախութիւն է.

Խմոր ուտելը, շահ է.

Խնդալը լաւ չէ.

Խնձորը տղայ է բայց ուտելը շահ։

Խնձոր առնելը բարի համբաւ է. Խնձորի ծառը մեծ մարդ է.

Խուլ և համրը օգուտ է:

Խունկ ծխելը, աղօթք և անոյշ խօսք է.

Խորոված միս ուտելը, օգուտ է.

Խոզը մահ է կամ այլազգի. խոզի միս ուտելը ազգականների մահ է.

Խոտը լաւ մարդ է և ժողովելը պատիւ է և փառք.

## Ծ.

Ծաղկեայ անդաստան, շահ և ուրախութիւն է, ծաղկերն անհանգստութիւն է. ծաղիկ քաղելը, կին առնել է. ծաղկելը՝ բարի է.

Ծաղկած ծառը, պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը վնաս է. ծառը եթէ ծխի, լաւ չէ. ծառի տերև թափելը, արիւնահեղութիւն է, ծառ վայր ձգելը մարդու մահ է. մեծ ծառ կտրելը, մեծ մարդու մեռնել է, ծառի վրայ նստելը և ման գալը, փառք է. կանաչ ծառը, գանձ է, չոր ծառը տրտմութիւն է. ծառ տնկելը կին է.

Ծամ (հիւս) կտրելը բաժանումն է.

Ծառան աւետիք է և ուրախութիւն.

Ծարաւելը լաւ չէ.

Ծանր բան շալակելը մեծ մեղք է.

Ծիծաղելը տրտմութիւն է.

Ծնանելը (կնոջ) մեծ շահի գալ է.



Ծանր գտնելը, առ Աստուած յոյս է.

Ծովը պղտոր, նեղութիւն է, ցամաք ծովը աշխարհի լռութիւն է, ծովում լողալը օգուտ է. ծով մտնելը, նեղութիւններից ազատուել է. ծովը որ մարդուն ներս քաշի գողի ձեռքով սպանուել է նշանակում. Ծովափի վրայ նստելը զուարթութիւն է. ծովից դուրս գալը պատիւ է և ազատութիւն, դուրս չգալը մեծ վնաս է։

Ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը, կեանքի աւելանալն է, իրան ծեր տեսնելը մանկութեան ժամանակ, նոյնպէս կեանքի աւելանալն է։

## Կ.

Կամուրջ շինելը շատ լաւ է։

Կառք նստելը, մեծ պատիւ է.

Կայծակը, խռովութիւն է.

Կարկուտը երկրի նեղութիւն է։

Կարասը, նեղութիւն է

Կաղամբի տակ նստելը, վնաս է.

Կենդանի իրեն գերեզմանի մէջ տեսնելը մեծ վրէժ է,

Կին առնելը, մահուան վնաս է. կնոջ հետ խօսելը, տրտմութիւն է, մազերն արձակած կինը, մահու վնաս է, գեղեցիկ զարդարուած [illegible], երկիր է կամ քաղաք, կնոջ մազ կտրելը

շատ վնաս է, կնոջ նայելը բարի և լաւ է։

Կիտրոնը, անոյշ խօսք է.

Կոյս երան տեսնելը, խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը լաւ է.

Կուժը, որդի է. ջրով կուժը, բոլորովին բարի է։

Կորեկ տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է։

Կրակ ձգելը, մահ է և սով։

Կտաւ հանելը, լաւ չէ,

Կօշիկ տանը տեսնելը կամ հագնելը ճանապարհ է։

Հ.

Հաց տեսնելը բարի է և լաւ։

Հաւը ձեւի վրայ՝ անապասելի շնորհք է, հաւ սիրամարգ մեծ իշխան է, հաւի խօսելը մարդու կեանքից զրկուելու նշան է։

Հաղորդ առնելը մարդու ծեծ է։

Հասկ քաղելը ուրախութիւն է.

Հարսանիքը, տրտմութիւն է.

Հայրապետը, մեծ զրոյց է.

Հայր – մեռած հօրը կենդանացած տեսնելը, մեծ շահ է.

Հալաւ այրած տեսնելը կնոջից շահուել է։



Հանդերձ կորցնելը, վնաս է.

Հեռաւոր տեղ երան տեսնել կամ ուրիշ մէկին, շահ է և բարի է:

Հիմք ձգելը, հարստութիւն է.

Հիւանդը, նեղութիւն է·

Հող վեր առնելը նեղութիւն է.

Հում միս ուտելը, մեծ զրոյց է.

Հոր փորելը, շատ նեղութիւն է։

Ձ.

Ձի —Սպիտակ կամ սև ձի նստելը, բարի և մուրազ է, վազօղ ձի նստելը խիստ լաւ է, ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ստանալ է։ Ձին սարում տեսնելը մեծութեան հասնելու նշան է.

Ձեռ լւանալ, բարի է, ձեռքից ճրագ բռնած որդի կլինի քեզ։

Ձէթ եփել մուրազ և լաւ է:

Ձու տեսնելը կամ ժողովելը, կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը նեղութիւնից կազատուես·

Ձուկը չար լեզու է.—Ջրից հանես. ամպ ձիւն կամ ջերմ կլինի։

Ղ.

Ղամպար վառելը, բարի է։

Ճ.

Ճանապարհ գնալն ու գալը բարի է։
Ճուտն՝ երկար ճանապարհ է.
Ճառ գրած տեսնել կամ լսել, հոգս է։
Ճնճղուկ տեսնել կամ բռնելը, բարի է։
Ճրագ վառած, ծածուկ գործ կ'յայտնուի։
Անցած ճրագը տան կործանումն է։

Մ.

Մատանին. իշխանութիւն է, մատանին կորած, վնաս է. մատանին կորցնես կինդ կամ սիրելիդ կ'մեռնի, երկու մատանի ունենալը, երկու կին կառնես։

Մարգարիտը, մեծութեան նշան է.

Մարդու ոսկոր ուտելը, բանտ մտնել է.

Մեխեր ժողովելը լեզուներ են.

Մեծահասակ իրան տեսնելը վատ է։

Մեռել—Իրան մեռած տեսնելը շատ ապրել է, մեռելն թէ խօսի զգոյշ կաց, մի հաւատայ մեռել թաղելը շփոթել է, մեռելը գերեզմանում տեսնելը, չարը կխափանի, շատ մեռելներ տեսնելը, թշնամիներդ կործանւեն։

Մեղր ուտելը մեղք է և սրտնեղութիւն։

Մետաքս տեսնելը օգուտ է։



Միս տեսնելը կամ ուտելը հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը շահ։

Միրգ ուտելը հիւանդութիւն է.

Մոմը վառած ուրախութիւն և որդի է։

Մորեխը հոգս է և աշխարհին վնաս.

Մութը, վնաս է և չար.

Մուկը, վնաս է և չար։

Մորուքով իրան տեսնելը, շնորհք է։

Ն.

Նախիրը որ գեղը գնայ, աւաղ է.

Նապաստակը, իրան աղայ կլինի։

Նաւ.—Նաւարդ լինել, գլուխդ դարդ կգայ. ոսկու կամ արծաթի նաւը, բարի է. նաւը նստես, շատ կապրես. նաւերի խումբ տեսնես շահ կգայ քեզ. նաւը գանձով նեղութիւն է. նաւ այրելը, երկրի վնաս է. կոտրած նաւը մահ է.

Նաւը, օտարներից շահել է.

Նստել և ուտելը, շատ նեղութիւն է։

Շ.

Շալիկ սպիտակ տեսնել կամ կարել, արդարութիւն է, սեւ արտմութիւն է. ալատը մեղք է։

Շինութիւն կառուցանելը բարութիւն է. քանդելը վնաս։

Շիշ խըղձել, առճիկ և շահ է։

Շորեր (Նոր) ուրախութիւն և շնորհք է. Շորեր գոյնզգոյն վնաս է. սև շորերը, սուգ մարդ կմեռնի։ Շորեր կորցնելը վնաս է։

Շների բըթար հետ կռուելը, վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինել։

Ո.

Ոսկին կամ արծաթը շահ է, ոսկի խնձորը, պատիւ է։

Ոչխարը, ձմեռ է և ցուրտ, սև ոչխարը սուգ և տրտմութիւն է, ոչխարը ճանապարհին հարստութիւն է։

Ուղտը, պարտն է, երկու ուղտի կռուելը իշխաններ կ՛կռուին, էգ ուղտ նստելը հիւանդութիւն է.

Որսի գնալը, բարի է։

Չ.

Չամիչը, շատ՝ վնաս է.

Չամանը, կռիւ և աղաղակ է։

Չանկը, տրտմութիւն է.

Չիրը ուտէլ շահ է։



Չուխայ—կանաչ չուխան հարստութիւն է սևը, տրտմութիւն։

Պ.

Պատարագը կռիւ է.

Պարտէզ տնկելը, լաւ է.

Պղպեղը, կսկիծ է, պղպեղ ուտելը թշնամիներից պատճառ կայ։

Պսակ արծաթէ, հիւանդութիւն է, փշից պսակ շինելը, մեծ շահ է, քարից շինած պըսակը, մեծութիւն է.

Պսակուիլը լաւ է յաճախ կռիւ է

Ջ

Ջաղաց շինելը, մեծութիւն է, քանդելը, շինութիւն է. Ջաղացի աղօնը հիւանդութիւն է։

Ջայլամը, նեղութիւնից կազատուես։

Ջուր մաքուր խմելը, լաւ է, պղտոր ջուր տեսնելը կամ խմելը, տրտմութիւն է.

Տանը մէջ ջուր տեսնելը, լաւ չէ. գնացող ջուրը բարի է, գետից ջուր վեր առնելը, վընաս է. աղբիւրքը, բարի է։

Ռ.

Ռեհան ծաղիկը, բարի է.

Ռումբը կանգնած մեծութիւն և պատիւ է

ձեռքին ռումբ բռնելը ճանապարհ է և երկիր։
Ռուս տեսնելը մեծ հակառակութիւն է։

## Ս.

Սազը մեծ մարդ է.
Սագ ուտելը, հիւանդութիւն է։
Սալորը, առողջութիւն է.
Սանդուխ (կանգնած) մեծութիւն է
Սանր բռնելը զէնք է.
Սենեակ քանդելը, կնոջից բաժանուել է։
Սեխը լաւ է, ուտելը հիւանդութիւն.
Սիսեռը, բարի է։
Սիւնը, նեղութիւն և կռիւ է։
Սխտորը կսկիծ է։
Սոխը, կսկիծ է, ուտելը հիւանդութիւն.
Սուգ անելը, ուրախութիւն է.
Սուլթան տեսնելը, անչափ ցաւ է։

## Վ.

Վախեցած իրան տեսնելը, օգուտ է.
Վանք և աբեղայ նեղութիւն է.
Վառած մէկին տեսնել վնաս է, իրան վառած տեսնելը հարստութիւն է,
Վարդը, կին կառնես, վարդ քաղելը բարի է։



Վերմակը, հարուստ կին է.
Վիշապը մեծութիւն կամ վնաս է։

## Տ.

Տաճար զարդարած բարի է. տաճար այրելը թշնամիքդ կը կորչին։
Տաճիկը, թշնամիների յարձակումն է։
Տախտը մեծութիւն է, տախտը գլխակով բարի է. տախտը կանաչ ցաւ է։
Տանձ ուտելը, հիւանդութիւն է։
Տառեխ ձուկը, տրտմութիւն է.
Տիկը, տրտմութիւն է.
Տղայի գիրկն առնելը, լաւ է։
Տուն շինելը բարի է. քանդելը վնաս։

## Ց.

Ցեցը լեզու է, ցեց հանելը նեղութիւն կամ լաւ է.
Ցեխը, վնաս և տրտմութիւն է, Ցորենը ցնորք է։

## Փ.

Փայտը շատ բարի է։
Փող ածելը մեծութիւն է.
Փուշ քաղելը, թշնամու կորուստ է.
Փոխինձ ուտելը զէնք է։

Ք.

Քաղաք մտնելը, բարի է.

Քար ձգելը վնաս է. ժողովելը լաւ է։

Քահանայից խաչ առնելը վիշտ է։

Օ.

Օձի հետ խօսելը այնպիսի բան անել է, որ ամբողջ աշխարհը կզարմանայ. անկողնի վերայ օձ տեսնելը կին առնել է։

Օձին անկողնում տեսնելը կնոջ մահ է օձը տանը տեսնելը կնոջ թշնամանալն է։

Օղի խմելը ուրախութիւն է։

---

## ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶԱՑՈՅՑ

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն երազն ի բարին կատարի։

» 2, 10, 12, 16, 28 երազն օրն կատ.

» 8 երազն ութ օրն կատարի.

» 23, երազն երեսուն օր կատարի.

» 14, երազն քառասուն օրն կատարի։

» 11, 15, 17, երազն օրն կատարի,

» 6 երազն ի չարին կատարի.

» 29, երազն լաւ է,

» 4, 7, 20, 21, 24, 25, 27, երազն սուտ է։

---



## ՁԻԱՐԺԱՆԻ ՎԻՃԱԿԱԽԱՂ

| | | |
|---|---|---|
| 5 | 7 | 1 |
| 3 | 9 | 6 |
| 8 | 4 | 2 |

ՀԱՐՑԵՐ

Ա. Ինչ է լինելու իմ ապագան.

Բ. Ո՞վ է լինելու իմ ամուսինը.

Գ. Սիրում է նա ինձ

Դ. Վստահ լինեմ նրա վրա։

Ե. Կստանամ ցանկացածս.

Զ. Կկատարէ՞ իր խոստումը.

Է. Ե՞րբ յաջողութիւն կգտնեմ.

Ը. Կբժկւեմ իմ ցաւերից.

Թ. Հաւատամ նրա սիրուն.

## ԲԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերից որը կամենաք և մտքերդ պահեցէք նրա ձախ կողմում գտնըւած տառը։ Պատասխանների մէջ մատով նըշանակեցէք որևէ թւանշան (աւելի լաւ է աչքերդ խփած), ապա պատասխանների մէջ գըտէք ձեր մտքում պահած տառի համապատասխան սիւնակը և այնտեղ կարդացէք ձեր նըշանակած թւանշանի դէմ դրւած պատասխանը։

---

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

### Ա.

1. Խարդախութեան վերջ տուր, լաւ կլինի.
2. Շատ կհարստանաս.
3. Ներկայ կորցրել ես, ապագայից ինչ յոյս կարող ես ունենալ.
4. Ապագայի մասին մտածելը ներկան պիտի կանոնաւորէ.
5. Սէր բարեգործի անուն կվաստակես.
6. Եթէ այդպէս շարունակես, մխիթարական ոչինչ.
7. Մաքուր սիրտ և բարի խիղճ ունեցիր, ապագադ լաւ կլինի։



8. Շատ բախտաւոր կլինես։
9. Ուրիշի ողորմութեամբ պիտի ապրես, լաւ իմացիր.

### Բ.

1. Սովորական մահկանացուներից մէկը.
2. Թեթևսոլիկի մէկը, որի խելքը աչքումն է։
3. Ոչ հարուստ, բայց պատւելի մի երիտասարդ։
4. Հարուստ, կրթւած մի երիտասարդ։
5. Հարուստ տան անընդունակ մէկը.
6. Համոզմունքներիդ համաձայն մէկը.
7. Այն, որին դու փափագում ես.
8. Աշխատասէր, ընդունակ և առողջ մի երիտասարդ.
9. Կամակոր մէկը, որի քթից բռնած պար պիտի ածես.

### Գ.

1. Ոչ, սակայն ժամանակաւորապէս.
2. Ճշմարիտ և անկեղծ սիրով.
3. Սէրը խափուսիկ է և անհաստատ.
4. Քեզ պէս այլանդակին միթէ սիրել կարելի է.
5. Սառում է և կեղծում.

6. Անդաւաճան սիրով սիրում է։
7. Այո.
8. Մի հաւատա. մեղք ես.
9. 99 տոկոսը սուտ է, մի տոկոս էլ կասկածելի.

Դ.

1. Այո, մի կասկածիր.
2. Քո բնաւորութիւնը միշտ խաբել է քեզ։
3. Ոչ երբեք։
4. Անպայման, նա քեզանից վստահելի է։
5. Ինչ վստահութիւն ես պահանջում, տեղովը անվստահութիւն է.
6. Խաբուած կլինես, եթէ վստահես:
7. Ազնիւ մարդուն միշտ էլ կարելի է վստահել.
8. Ոչ.
9. Քո կասկածոտութիւնը քեզ միշտ վնասել է։ Այո։

Ե.

1. Կստանաս բայց արդէն ուշ.
2. Անպատճառ կստանաս. Զգոյշ։
3. Երգիր «Կամենում էի, կամենում էի այնքան, որ հզօր դարձայ» խօսքերը։



4. Դժուար է. մի յուսա.
5. Յոյսը թշուառի երկրորդ հոգին է։ Յուսա.
6. Ոչ, ոչ. զուր ես անհանգստանում.
7. Նպատակի հասնելու համար չափազանց եռանդ է հարկաւոր, այդ դու չունես.
8. Կստանաս, բայց կկորցնես։
9. Կստանաս և քոնն է ապագան.

Զ.

1. Խոստում կատարել նրանից մի յուսա.
2. Որ բոլոր խոստումները կատարուէին, հիմա ոսկուց սարեր կունենայինք.
3. Ոչ, մի յուսա.
4. Զարթնիր, ինքնախաբէութեան մէջ ես.
5. Հաւատա՛, ազնիւ մարդու հետ գործ ունես
6. Կկատարէ, միայն ուշ.
7. Միամիտ մի լինի, խոստումներից շատերը սառոյցի վրայ գրուածների են նմանում.
8. Ձեռքդ ծալած սպասում ես, վա՜յ քո օրին.
9. Անպայման, և դու՞ կբախտաւորուես

Է.

1. Երբ գործիդ եղանակը փոխես.
2. Երբ արաղի թասին մնաս բարև տաս.
3. Ագահութիւնը կործանարար է. գոհ եղիր.
4. Աջողութիւնը դուռդ է, մի վանիր։

5. Երբ քար սիրտդ խկական սիրտ դարձնես

6. Մի ամիս էլ համբերիր։

7. Շատ շուտով։

8, Զուր ես սպասում.

9. Մինչև չոր առուն ջուր գայ, գորտի աչքերն էլ դուրս կգայ։

Ը.

1. Անպատճառ։

2. Այո, հետևիր բժշկի խրատներին։

3. Երբ պատուական միջոցներից խուսափես.

4. Բժշկողը դեղը չէ, այլ պահեցողութիւնը։

5. Գիտութիւնը հրաշքներ է գործում, հաւատա և փրկուած ես.

6. Նախապաշարմունքդ թող, բժշկի դիմիր։

7. Կասկածամտութիւնը վնասում է քեզ։

8. Քրիստոս հաւատով էր բժշկում, հաւատով վերաբերուիր տուած դեղերին։

9. Հաւատա, և դու առողջ ես։

Թ.

1. Դու ոչ առաջինն ես ոչ վերջինը։

2. Մի հաւատա մեզը, ես։

3. Հաւատա, անկեղծ է սէրը

4. Քեզ պէս քանիսն է ճանապարհ դրել։

5. Կղզիաս և այն սարսափելի.

6. Իրար գտել էք, դժուար թէ բաժանուէք։



7. Հաւատա.

8. Նա քեզ է խաբում, դու նրան. վայ վերջը խաբուողին։

9. Մի կասկածի, անկեղծ սէր է

---

## ԶՒԱՐՃԱԼԻ ԽՆԴԻՐՆԵՐ

### 1.

Եթէ միայն 5 վեդրօի, 3 վեդրօի և 8 վեդրօի չափեր ունինք և վերջինը գինով լցուած է. ինչպէս կարող ենք նրանցով 4 վեդրօ գինի չափել։

### 2.

Մի մարդ մեռնելիս 17 ձի կտակեց իր 3 որդիներին։ Ամենից մեծին կտակեց բոլոր ձիերի կէսը, երկրորդին $^1/_3$-ը, իսկ ամենից փոքրին՝ $^1/_9$-ը։ Ուստի մի մեծ վէճ բացւեց, թէ ինչպէս պէտք է գործադրել կտակը առանց ձիերի մէկը զոհելու. ուստի վէճը ներկայացրնում են դերվիշին, որը և կատարում է բաժանումը։

Ի՞նչպէս է բաժանում, որ բոլոր եղբայրները գոհ են մնում։

3.

Պէտք է 15 ոչխարը 4 ախոռի մէջ տեղաւորել, այնպէս որ իւրաքանչիւր ախոռի մէջ հաւասար թիւ լինի։

4.

10 ճանապարհորդ իջնում են մի հիւրանոց. Նրանցից ամէն մէկը պահանջում են մի մի սենեակ, Հիւրանոցի տէրը պատասխանում է, որ ինքը միայն 8 սենեակ ունի, որ միևնոյն ժամանակ խնդրում է ճանապարհորդներից մէկին, որ սպասէ մինչև 9 ընկերներին սենեակ տայ, յետոյ իրեն էլ մի ուրիշ սենեակ կտայ։

Հիւրանոցի տէրը 2-րդ ճամբորդին Ա. սենեակը տւեց. 3-ին Բ. սենեակը. 4-ին Գ. սենեակը. 5-ին Դ. սենեակը. 6-ին Ե. սենեակը. 7-ին Զ. սենեակը. 8-ին Է. սենեակը. 9-ին Ը. սենեակը և յետոյ դառնալով վերջին մարդուն՝ տւեց 9-րդ սենեակը.

ՍՄ Հայագիտական գրադարան
MAL042061

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ


# „ՇԻՐԱԿ"

## ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ մէջ տպագրուած են բազմաթիւ նոր առակներ, առածներ, ժողովրդական և ազգային երգեր, բժշկական և առողջապահական գիտելիքներ, գիտական նորութիւններ, մտքեր, աֆորիզմներ, պատմական դէպքեր, հետաքրքրական թւեր ու տեղեկութիւններ և այլն։

ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ

Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ

Գումարով գնողներին լինում է զեղչ